ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՏԵՐՄԻՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Երևան 2014

MINISTERY OF DIASPORA OF RA

**INSTITUTE OF LINGUISTICS OF NAS OF RA**

# CONTRASTIVE RESEARCH OF TERM SYSTEMS OF THE WESTERN ARMENIAN AND EASTERN ARMENIAN LANGUAGES

**МИНИСТЕРСТВО ДИАСПОРЫ РА**

**ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Р. АЧАРЯНА НАН РА**

# СОПОСТАВИТЕЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ ТЕРМИНОВ ЗАПАДНОАРМЯНСКОГО И ВОСТОЧНОАРМЯНСКОГО ЯЗЫКОВ

Yerevan 2014

Ереван 2014

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2Հ
Ա 863

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտու-
տի գիտական խորհրդի որոշմամբ

ԳԻՐՔԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ Է
ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՈՎ

Գիրքը կազմել են Ն.Գ.Հովհաննիսյանը («Արևմտահայերենի և արևելահայերենի բժշկական և քաղաքական տերմինների զուգադրական քննություն» բաժինը և հավելվածները), Ս.Կ.Տիոյանը («Արևմտահայերենի և արևելահայերենի համակարգչային տերմինների զուգադրական քննություն» բաժինը), Ա.Ս.Գալստյանը («Արևմտահայերենի և արևելահայերենի լեզվաբանական տերմինների զուգադրական քննություն» բաժինը):

«Նախաբան»-ը գրել է Վ.Լ.Կատվալյանը:

Ա 863 Արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն/ Կազմ.՝ Ն. Գ. Հովհաննիսյան, Ս. Կ. Տիոյան, Ա.Ս.Գալստյան.- Եր.: Ասողիկ, 2014.- 230 էջ:

ՀՏԴ 809.198.1
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-9939-50-272-4
© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2014

Գրքում զուգադրական քննության են ենթարկվում արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային մի շարք ենթահամակարգեր, մատնանշվում են երկու ճյուղերի տերմինահամակարգերի փոխհարստացման, մերձեցման և միասնական զարգացման հնարավորություններն ու ուղիները: Հավելվածներում բերված ցանկերի տերմիններն ու տերմինային բառերը քաղվել են արևմտահայերենի երկու բառարաններից, որոնք հրատարակվել են 20-րդ դարում (մոտ հիսուն տարվա տարբերությամբ):

Գիրքը կարող է օգտակար լինել հայագետներին, արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման խնդիրներով հետաքրքրվողներին:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան……………………………………………………………6
Արևմտահայերենի և արևելահայերենի բժշկական և
քաղաքական տերմինների զուգադրական քննություն………..20
Արևմտահայերենի և արևելահայերենի համակարգչային
տերմինների զուգադրական քննություն……………..………… 54
Արևմտահայերենի և արևելահայերենի լեզվաբանական
տերմինների զուգադրական քննություն……………………...83
Հավելված I ……………………………………………..…...107
Հավելված II………………………………………………….....191
Օգտագործված գրականություն ……..……………………….226

## ՆԱԽԱԲԱՆ

Պատմական ճակատագրի բերումով երկփեղկված մեր լեզվի երկու ճյուղերը այսօր էլ շարունակում են գործառել տարբեր իրավիճակներում՝ ունենալով նաև գոյատևման ու զարգացման տարբեր հեռանկարներ: Ի տարբերություն արևելահայերենի (որի առջև ևս ծառացել են կանոնարկման, գործառական ոլորտների ճշգրտման տարաբնույթ խնդիրներ)՝ արևմտահայերենի վիճակը մնում է տագնապահարույց: Ճիշտ է՝ սփյուռքի տարբեր համայնքներում լույս են տեսնում հայալեզու պարբերականներ, ստեղծվում է գեղարվեստական գրականություն, գործում են մշակութային միություններ և կենտրոններ, հասարակական ու կրոնական կազմակերպություններ, կրթարաններ ու վարժարաններ, կայքէջեր, հեռարձակվում են հեռուստատեսային և ռադիոհաղորդումներ, աշխարհասփյուռ հայությանը իր ինքնությունը պահպանելու գործում աջակցում են ՀՀ Սփյուռքի նախարարությունը և հայ եկեղեցին, բայց, միևնույն է, արևմտահայերենը զրկված է միասնական ու բնականոն զարգացման հնարավորությունից:

Ծվեն-ծվեն եղած արևմտահայերենը հանդես է բերում բազմաձևություններ լեզվի բոլոր մակարդակներում. պետական, գիտամշակութային, ուսումնական, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում համընդգրկուն և միասնական գործառույթներից  զուրկ լինելու հանգամանքը էականորեն բացասական ազդեցություն է ունենում լեզվական համակարգի հետագա զարգացման վրա[1]: Իրավիճակը շտկելու նպատակով

[1] Ինչպես նշում է  Ա.Սարգսյանը, «նոր բառերի և իմաստների այն ուղղակի հեղեղը, որ առկա է գրական արևելահայերենում, անհամեմատ

սփյուռքահայ մտավորականները ջանքեր են գործադրում՝ ըստ հնարավորին լրացնելու առկա բացը: Այդ առումով գնահատելի է Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի գործունեությունը Ֆրանսիայում: Խորհուրդը հրապարակել է չորս «Ուղեցույց»-ներ, որոնցում ներկայացվում են մասնագիտական տարբեր ոլորտների՝ ֆրանսերեն և անգլերեն տերմինային արժեք ունեցող բառեր և դրանց դիմաց հանձնարարվող հայերեն համարժեքներ[2]: Բացի այդ, սփյուռքում ստեղծվում են արևմտահայերենի դասագրքեր, բառարաններ, հայապահպան ու հայերենապահպան նպատակներ ունեցող միություններ ու կենտրոններ: Վերջին շրջանում զգալի աշխատանքներ են կատարվել նաև Հայաստանում. արևմտահայերենը դարձել է գիտական համակարգված ուսումնասիրության առարկա, ստեղծվել են արևմտահայ գրական լեզվի հետազոտությամբ զբաղվող ակադեմիական և բուհական կենտրոններ, բուհական ու դպրոցական կրթական ծրագրերում ավելի լուրջ ուշադրություն է դարձվում արևմտահայերենի

---

թույլ կերպով է տեղ գտնում արևմտահայերենում» (Ա.Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Ե., 1985, էջ 129):

[2] «Ուղեցույցի» Գ պրակի մասին, որում ընդգրկված են արևմտահայերենում վերջին տարիներին ի հայտ եկած նորաբանությունները, Ռ. Սաքապետոյանը գրում է. «Ուղեցույցում ընդգրկված բառացանկը պարունակում է տարբեր իմաստային դաշտերի վերաբերող եզրեր, որոնք բառային նորակազմություններ են կամ իմաստային նորաբանություններ: Արժեքավոր հանգամանք է նաև այն, որ բերված օրինակները ոչ թե օտար բառերի ինքնահնար թարգմանություններ են, այլ քաղված են սփյուռքահայ մամուլից, մասամբ նաև արևմտահայ գրավոր ու բանավոր խոսքում հանդիպող եզրեր են» (Ռ.Սաքապետոյան, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Ե., 2004, էջ 140):

ուսուցման խնդիրներին: Բնական է՝ հայերենի առջև ծառացած արտալեզվական մարտահրավերները, որոնք խնդրահարույց են նաև ընդհանուր հայապահպանական առումով, ենթադրում են ողջ հայության, Հայաստանի պետական և աշխարհասփյուռ հասարակական կառույցների ու կազմակերպությունների ջանքերի համատեղում, ազգային շահին անձնային ու խմբային շահերի անվերապահ ստորադասում: Ինչ վերաբերում է զուտ լեզվական խնդիրներին, ապա ակնհայտ է, որ այստեղ առաջնահերթ են լեզվի գործառության, ուսումնասիրության ու կանոնարկման հարցերը: Գործառական առումով կարևոր է լեզվի գրական, խոսակցական ու բարբառային դրսևորումների ներդաշնակ և ըստ հարկի գործածումը: Ցավոք, հատկապես խոցելի է գրական լեզուն, որի ոլորտ խոսակցական, բարբառային ու ժարգոնային տարրերի (հաճախ նույնիսկ ամբողջական) անհարկի ներթափանցումները ընդհանրապես աղավաղում են լեզվական համակարգը: Մյուս կողմից՝ համաշխարհայնացման և ուծացման վտանգի ահագնացման պայմաններում խիստ կարևոր է դառնում մայրենիի գերակայության գիտակցումը յուրաքանչյուր հայ ընտանիքի և մարդու կողմից: Վերը նշված իրողությունների առումով՝ լեզվի ուսումնասիրության և կանոնարկման հարցերի մեջ մեծ կարևորություն ունեն արևմտահայերենի գիտական ամբողջական հետազոտումն ու նկարագրությունը, ըստ հնարավորին սփյուռքահայ համայնքների լեզվական միասնականության հասնելու նպատակով ընդունելի և ընդհանուր ձևերի որոշումն ու առաջադրումը՝ գիտական հիմնավորումներով, արևելահայերենի և արևմտահայերենի՝ իբրև մեկ ամբողջական լեզվի միասնական հետազոտման, կանոնարկման, նաև՝ տերմինային

համակարգի մշակման ուղղությամբ աշխատանքների ծավալումը:

Իր պատմական զարգացմամբ հայերենը ներկայում հասել է մի հանգրվանի, երբ դրսևորվում է գրական երկու, խոսակցական և մի քանի տասնյակ բարբառային տարբերակներով: Տարբերակային այդ բազմազանությունը լեզվական հարստության վկայություն է, ուստի լեզվական միասնականությունը ենթադրում է ոչ թե ընդհանրապես տարբերությունների վերացում (որը նաև անհնար է), այլ տարբերակների համընթաց և միասնական զարգացում՝ ներառյալ նաև փոխադարձ ներթափանցումներն ու հարստացումը: Մասնավորաբար՝ խոսքը վերաբերում է գրական արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման խնդրին, որը վաղուց օրախնդիր է հայագետների համար[3]: Բնականաբար, նպատակը մեկ միասնական գրական լեզու ունենալը չէ[4], այլ զարգացման միասնական հեռանկարի և փոխհամաձայնեցված կանոնարկման ու փոխհարստացման ուղիների մշակումը և դրանց գործադրումը այն գիտակցումով, որ իր տարբերակային բոլոր դրսևորումներով հանդերձ հայերենը մեկ միասնական լեզու է,

[3] Այս մասին տե՛ս նաև Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 175-183. Յու.Ավետիսյան, Արևելահայերենի և արևմտահայերենի զուգադրական քերականություն, Ե., 2007, էջ 14-15:

[4] Յու.Ավետիսյանը նշում է, որ «մերձեցման իրական հնարավորությունները ստեղծվում են տնտեսական ու հոգևոր-մշակութային շրփումների արդյունքում: Իսկ երկու գրականների միացման համար հիմքեր կարող են ստեղծվել միայն բուն քաղաքական-պատմական խնդիրների լուծման դեպքում, ընդհանուր պետականության և միասնական լեզվական միջավայրի ձևավորման պայմաններում» (Յու. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 15):

որի բոլոր իրողություններն ու միավորները շաղկապված են իրար՝ անկախ տարբերակային վերաբերությունից:

Այս առումով նախ և առաջ հնարավոր է և անհրաժեշտ երկու գրական լեզուների բառապաշարների ըստ հնարավորին մերձեցումն ու միասնականացումը[5]: Իհարկե, երկու ճյուղերի բառապաշարները իրենց հիմքում ընդհանուրհայերենյան են, սակայն ժամանակի ընթացքում ստեղծվել և ստեղծվում են տարբերակվող բառաշերտեր՝ պայմանավորված արտալեզվական և լեզվական մի շարք հանգամանքներով: Ժամանակին երկու գրական լեզուների տարբերություններին անդրադառնալով՝ Հ.Աճառյանը մատնանշել է նաև բառապաշարային տարբերությունները և դրանց որոշ պատճառներ: Հնչյունական և իմաստային տարբերություններից բացի՝ լեզվաբանը նկատում է, որ «Կան բառեր, որոնք գործածական են միայն արևմտահայ գրականում (անցնելով ժողովրդական լեզվից) և անսովոր են արևելահայ գրականի համար»[6], ինչպես՝ աղէկ, ատեն, արտորալ, կաղանդ, մուխ, պաղ, պլլուիլ և այլն[7]: Միևնույն ժամանակ, «Բառեր էլ կան, որ հատուկ են միայն արևելահայոց (նույնպես բարբառներից անցնելով) և չկան արևմտահայոց

---

[5] Ռ.Սաքապետոյանը նշում է, որ արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցումը և փոխհարստացումը արդյունավետ կարող է լինել նախ և առաջ բառապաշարի և իմաստաբանության ոլորտներում: Հետևաբար, եզրակացնում է լեզվաբանը, «անհրաժեշտություն կա ճշգրտելու հայերենի երկու տարբերակների բառապաշարների բնութագրական առանձնահատկությունները, դիտարկելու դրանց փոխլրացման հնարավորությունները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հայերենի ապագա միասնական բառապաշարի ստեղծման համար» (Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 178-179):

[6] Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Ե., 1951, էջ 564:

[7] Տե՛ս նշվ. աշխ., էջ 564-565:

մեջ»[8], ինչպես՝ գազազած, գլուխ տալ, լուսամուտ, սարքել, հերթ, շոգ, շուռ տալ, պոկել, տկլոր և այլն[9]: Այսպիսով, ըստ Հ.Աճառյանի՝ բառապաշարային տարբերությունները նախ և առաջ գալիս են բարբառային հիմքերի տարբերություններից: Լեզվաբանը նկատում է նաև, որ արևմտահայերենը կյանքի է կոչել գրաբարի անգործածական դարձած շատ բառեր (ինչպես՝ ազազուն, ակաղձուն, թիրախ, թոհուբոհ, խաթարել, խոկալ, խորհիլ, ուծանալ, նոպայ, սմբուկ, լոլիկ և այլն), որոնց մի մասը սկսել է գործածվել նաև արևելյան գրականում[10]: Նշվում է նաև, որ «Արևմտահայերը հնարեցին բազմաթիվ նոր բառեր, որոնց դեմ արևելահայերը կա՛մ ուրիշ բառ են հնարել և կամ ավելի հաճախ օտար եվրոպական բառ են գործածում»[11], ինչպես՝ կառախումբ (գնացք), վայրաշարժ (շոգեքարշ, լոկոմոտիվ), ինքնաշարժ (ավտո), լուսածին (ֆոսֆոր), փապուղի (թունել), կնաբան (գինեկոլոգ), կարծրերակութիւն (սկլեռոզ), կաճառ (ակադեմիա) և այլն[12]: Նոր ժամանակներում արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային տարբերությունները հանգամանորեն հետազոտել է Ռ.Սաքապետոյանը[13]: Ընդարձակ անդրադարձ կատարելով միայն արևմտահայերենին բնորոշ կամ զուտ արևմտահայերեն բառերին՝ լեզվաբանը նշում է, որ «Բառապաշարի այս շերտը արևելահայերեն -

---

[8] Նշվ. աշխ., էջ 565:
[9] Տե՛ս նույն տեղում:
[10] Տե՛ս նշվ. աշխ., էջ 567:
[11] Տե՛ս նույն տեղում:
[12] Նույն տեղում:
[13] Տե՛ս Ռ.Սաքապետոյան, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Ե., 2004, 232 էջ:

արևմտահայերեն համադրության մեջ ամենաստվարն է»[14]: Ռ.Սաքապետոյանը իրավացիորեն գրում է, որ «միայն արևմտահայերենին բնորոշ բառերի տարածական տարբերակվածության պատճառները հիմնականում արտալեզվական են: Բովանդակային առումով դրանք խիստ բազմազան են և ընդգրկում են ամենատարբեր ոլորտներ՝ կապված արևմտահայ կյանքի, կենցաղի ու սովորույթների, ինչպես նաև պատմաաշխարհագրական միջավայրի, բուսանունների ու կենդանական աշխարհի հետ»[15]: Նշվում է նաև, որ բազմաթիվ բառային տարբերություններ էլ առաջ են եկել՝ կապված եկեղեցականկրոնական ծեսերի, արարողությունների ու սովորույթների հետ[16]: Բառապաշարային տարբերություններ առաջանում են նաև արևելահայերենում և արևմտահայերենում միևնույն բառաձևերի՝ տարբեր իմաստներ արտահայտելու[17] (օրինակ, վարիչ՝ արևլ. *բաժնի ղեկավար* – արևմտ. *վարորդ.* փոխան՝ արևլ. *վարտիք* – արևմտ. *փոխարեն* և այլն), բառակազմական տարբեր եղանակներ ու միջոցներ գործածելու պատճառով[18] (օրինակ, արևլ. կանխավճար – արևմտ. նախավճար, արևլ. եսամոլ – արևմտ. անձնամոլ, արևլ. բացատ – արևմտ. բացատան, արևլ. կենդանիներ վարժեցնող – արևմտ. գազանազուսպ և այլն):

Բառապաշարային տարբերությունների նշված տեսակները և դրանց առաջացման պատճառները վերաբերում են նաև երկու ճյուղերի տերմինային համակարգերին, որոնց հարկ ենք

---

[14] Նշվ. աշխ., էջ 38:
[15] Նշվ. աշխ., էջ 38-39:
[16] Նույն տեղում:
[17] Տե՛ս նշվ. աշխ., էջ 76-94:
[18] Տե՛ս նշվ. աշխ., էջ 95-122:

համարում անդրադառնալ՝ նկատի ունենալով և՛ դրանց էական դերը լեզվագործածության մեջ, և՛ գիտատեխնիկական մշտական առաջընթացով պայմանավորված՝ դրանց քանակի ու կշռի ավելացումը, և՛ երկու գրականներում դրանց գործառական և այլ կարգի տարբերությունների առկայությունը[19]:

Հայտնի է, որ գրական արևելահայերենը, տասնամյակների ընթացքում չունենալով գործառական սահմանափակումներ, ստեղծել է տերմինային հարուստ և ճկուն համակարգ, մինչդեռ գրական արևմտահայերենը, չունենալով պետական լեզվի գործառույթներ, գիտական, մասնագիտական, հասարակական, կրթական, տնտեսության տարբեր ոլորտներում գործառելու հնարավորություններ, անշուշտ չի բնութագրվում տերմինային համակարգի նույն հարստությամբ: Եվ բնական է, որ, օրինակ, «բնական գիտությունների մի շարք ճյուղերի համար արևելահայերենում ստեղծված բազմահազար տերմինների դիմաց արևմտահայերենը ունի հազիվ մի քանի հազար ձևեր»[20]: Մյուս կողմից, ինչպես նշում է Ա.Սարգսյանը, «արևմտահայերենի անգամ բառարաններում առկա բազ-

---

[19] Ըստ Ա.Սարգսյանի՝ լեզվի զարգացման արդի փուլում արևելահայերենը հարաճուն կարիք է զգում նորանոր տերմինների՝ գիտության, տեխնիկայի բուռն զարգացմամբ պայմանավորված, մինչդեռ գրական արևմտահայերենը նման սուր կարիք, անհրաժեշտություն չի զգում՝ ունենալով գործառական սահմանափակումներ (տե՛ս Ա. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 126):

[20] Ա.Սարգսյան, նշվ. աշխ., 116: Ինչպես նկատում է Ռ.Սաքապետոյանը, «սփյուռքահայ դպրոցներում բնական գիտությունները չեն դասավանդվում հայերենով, առավել ևս՝ Սփյուռքում չկա որևէ բարձրագույն ուսումնական կամ ակադեմիական հաստատություն, ուր հիշյալ գիտությունները դասավանդվեն կամ ուսումնասիրվեն հայերենով» (տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 135):

մաթիվ տերմինները մնում են անգործածելի՝ նաև համապատասխան միջավայրի բացակայության պատճառով»[21]: Լեզվաբանը կարևոր է համարում երկու գրականների տերմինային արժեք ունեցող բառաշերտերի զուգադրությամբ պարզել, թե «ինչպիսի՞ հարաբերությամբ են հանդես գալիս սեփական բառամթերքը և օտարաբանությունները, պատճենման ի՞նչ տեխնիկա է կիրառվում յուրաքանչյուրում, բառակազմական ինչպիսի՞ միջոցներով են ստեղծվում նորաբանությունները և այլն»[22]: Քննության առնելով մի շարք ոլորտների տերմիններ՝ լեզվաբանը վեր է հանում երկու գրական լեզուների տերմինաշինության հետևյալ առանձնահատկությունները. ա) գրական արևելահայերենի բաղդատությամբ՝ արևմտահայերենը հանդես է բերում գրեթե բոլոր օտար տերմինների հայացման, պատճենման ձգտում (օրինակ՝ սյուիտ – շարանվագ, կոնցերտ – նվագահանդես, կանտատա – տաղհիմն, սոպրանո – բարձրազիլ, ռապսոդիա – հագներգություն, ռիթմ – կշռույթ, սիմֆոնիա – համանվագ, պլատին – լուսնոսկի, յոդ – մանիշ, ալյումին – պաղլեղածին, ազոտ - բորակածին և այլն), բ) որոշ դեպքերում արևելահայերենում զուգահեռաբար գործածվում են օտար տերմինը և դրա պատճենված հայերեն տարբերակը (օրինակ՝ հարմոնիա - ներդաշնակարան), մինչդեռ արևմտահայերենում հաճախ զուգահեռաբար կիրարկվում են նույն օտար տերմինին համարժեք հայերեն մեկից ավելի բառ-տերմիններ (օրինակ՝ նոտա – ձայնանիշ, երգանիշ, խազ)[23],

[21] Նշվ. աշխ., էջ 117:

[22] Նույն տեղում:

[23] Ա.Սարգսյանը արևմտահայերենում առկա նման իրավիճակը իրավացիորեն պայմանավորում է տերմինաբանական համապատաս-

գ) երկու գրականներում դրսևորվում են տերմինների բառակազմական տարբերություններ (օրինակ՝ մեներգիչ – մեներգու, ածխածին – բնածուխ, գերմանիում – գերմանիոն և այլն), դ) պետությունների անունների ոլորտում երկու գրականները հետևում են փոխատու լեզվի (արևելահայերենը՝ գերազանցապես ռուսերենի, արևմտահայերենը՝ գերազանցապես ֆրանսերենի) մեջ տվյալ բառի հնչմանը (օրինակ՝ Պարագվայ – Բարակուէյ, Ճապոնիա – Ճաբոն, Պորտուգալիա – Բորթուկալ, Ֆրանսիա – Ֆրանսա, Բելգիա – Պելճիքա, Արգենտինա – Արժանթին, Վենեսուելա – Վենեցուելա, Սիրիա – Սուրիա, Ռումինիա – Ռումանիա, Իսպանիա – Սպանիա, Դանիա – Տանեմարքա և այլն)[24]:

Ընդհանուր առմամբ, երկու գրական լեզուների համար նախ և առաջ տարբերակիչ են տերմինային համակարգի ձևավորման հարցում օտար ազդեցությունների, օտար և հայերեն տերմինների առաջնայնության նկատմամբ մոտեցումները: Եթե գրական արևմտահայերենը, ինչպես նշում է Ա.Սարգսյանը[25], փոխառությունների հարցում ունի անզիջում պահպանողական դիրք, ապա գրական արևելահայերենի տերմինային համակարգում զգալի քանակություն են կազմում փոխառյալ բառերը: Միևնույն ժամանակ, նույն լեզվի շրջանակներում խրախուսելի չէ տերմինային բազմաձևությունը, հոմանիշ տերմինների գործառությունը՝ անկախ այն բանից, թե նույնիմաստ զուգահեռ ձևերը բնիկ են, թե՝ բնիկ և փոխառյալ:

---

խան համակարգող մարմնի բացակայությամբ (տե՛ս նշվ. աշխ., էջ 118):

24 Տե՛ս նշվ. աշխ., 117-122:

25 Տե՛ս նշվ. աշխ., էջ 130:

Նկատի ունենալով հայերեն երկու գրական լեզուների բառապաշարների մերձեցման կարևորությունը և հեռանկարները՝ հայերենի երկու ճյուղերի համար ըստ հնարավորին միասնական տերմինային համակարգի մշակման և զարգացման նպատակով, կարծում ենք, հնարավոր է.

1. Աստիճանաբար խուսափել տերմինային բազմաձևություններից՝ արևելահայերենում և արևմտահայերենում զուգահեռ գործածվող երկու կամ ավելի ձևերից ընտրություն կատարելով և առավել ընդունելին հանձնարարելի համարելով գրական լեզվի երկու տարբերակների համար.

2. Դուրս մղել օտար տերմինները, եթե կան հայերեն բարեհունչ և համարժեք հոմանիշներ և կամ՝ կա այդպիսիք ստեղծելու հնարավորություն[26].

3. Կիրարկել միջազգայնորեն ընդունված, հայերենի հնչյունական կազմությանն ու օրինաչափություններին չհակասող, բարեհունչ փոխառյալ տերմիններ, եթե դրանց իմաստները ճիշտ և հարազատորեն արտահայտող հայերեն բարեհունչ համարժեքներ չկան.

4. Նոր տերմիններ կերտելիս օգտագործել հայերենի տարաժամանակյա (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար) և համաժամանակյա (գրական երկու լեզուներ,

---

[26] Այս առումով՝ Ռ.Սաքապետոյանը կարևորում է հետևյալ հանգամանքները. օտար տերմինի հայերեն համարժեքը պետք է հստակորեն արտահայտի տվյալ հասկացության բովանդակությունը, համապատասխանի հայերենի բառակազմական կանոններին և լինի բարեհունչ: Միևնույն ժամանակ՝ հասարակությունը պետք է հոգեբանորեն պատրաստ լինի՝ հրաժարվելու օտար բառից, իսկ հայերեն համարժեքը պետք է ունենա գործածության որոշակի հաճախականություն (տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 141-142):

բարբառներ) բոլոր տարբերակների, այլ կերպ ասած՝ ողջ հայերենի բառագանձը:

Կարծում ենք՝ արևելահայերենի և արևմտահայերենի տերմինային համակարգերի մերձեցման, միասնական զարգացման հնարավորությունների ստեղծման համար անհրաժեշտ է, բերված դիտողություններն ու արված եզրակացությունները նկատի ունենալով, կատարել այդ համակարգերի զուգադիր քննություն[27] ըստ ոլորտների՝ նպատակ ունենալով՝ ա) ստեղծել արևմտահայերեն-արևելահայերեն տերմինաբանական ամբողջական բառարան, բ) առանձնացնել ընդհանուր և տարբերակվող շերտերը, գ) որոշել ընդհանրությունների և տարբերությունների հիմքերն ու պատճառները, դ) դիտարկել տարբերությունները ըստ բնույթի՝ ծագումնաբանական, բառակազմական, իմաստաբանական, գործառական և այլն, ե) տերմինաստեղծման ընդունված սկզբունքներից ելնելով՝ որոշել զուգահեռ տերմիններից առավել հաջողվածը և հանձնարարելի համարել երկու տարբերակների համար էլ, զ) նոր տերմիններ ստեղծելիս նկատի ունենալ ոչ թե միայն արևելահայերենը կամ միայն արևմտահայերենը, այլ միասնական հայերենը և այլն:

Այսպիսով, երկու գրական լեզուների բառապաշարների (նաև՝ տերմինային համակարգերի) մերձեցում ասելով՝ ընդհա-

---

[27] Ռ.Սաքապետոյանը կարևոր է համարում ախտաբանական և բժշկագիտական արևմտահայերենյան տերմինների առանձնակի քննությունը, քանի որ կուտակված նյութը, առկա լեզվական օրինաչափությունները, հաջողված նմուշները մեծապես կարող են նպաստել արևելահայ մասնագիտական բառապաշարի հարստացմանն ու մի շարք օտար ձևերից հրաժարվելուն (տե՛ս նշվ. աշխ., էջ 138):

նուր առմամբ պետք է հասկանալ՝ ա) մեկի պակասի լրացում մյուսի հաջողված ձևերով, բ) զուգահեռ ձևերից առավել հաջողվածի ընտրություն, գ) միասնական նոր տերմինների ստեղծում:

Նկատենք, որ բառապաշարների մերձեցման ուղղությամբ տեսական և գործնական բնույթի որոշակի աշխատանքներ կատարվել են: Այսպես, Ռ.Սաքապետոյանը առանձնացրել է բառապաշարի շերտեր, որոնցում կարող է տեղի ունենալ երկու գրականների փոխհարստացում[28]: Նրա գնահատմամբ՝ «արևմտահայերենը կյանքի թելադրանքով արդեն իսկ կողմնորոշվել է, թե արևելահայերենի բառապաշարի որ շերտերից պետք է օգտվի: Դա գիտատեխնիկական եզրաբանությունն է, ինչպես նաև պետականության կարգուսարքին առնչվող բառերը, որոնք արևմտահայերենում բացակայում են արտալեզվական գործոնների պատճառով»[29]: Երկու գրական լեզուների բառապաշարների փոխներթափանցման իրողությունը արձանագրել է նաև Ռ.Տեր-Մերկերյանը՝ գրելով, որ լեզվական փոխազդեցությունների «հետեւանքները այսօր շօշափելի են առանձնապէս բառապաշարի մարզին մէջ: Արեւելահայ ճիւղին մէջ նկատելի է արեւմտահայերէնի մէջ արդէն կայունացած բառերու գործածութիւնը: Նոյնը նկատելի է նաեւ արեւմտահայերէնի մէջ: Երկու տարբերակներուն զարգացման ներկայ փուլը կը յատկանշուի բառապաշարներու ակնյայտ փոխներթափանցմամբ ու մերձեցմամբ»[30]:

---

[28] Տե՛ս Ռ.Սաքապետոյան, նշվ. աշխ., էջ 182:

[29] Նույն տեղում:

[30] Արեւմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Ուղեցոյց, պրակ Գ, Մարսել, 1998, էջ 10:

Հավելենք, որ արևելահայերենի և արևմտահայերենի մերձեցման գործընթացը ավելի արդյունավետ կլինի, եթե ավելացող շփումների հետևանքով տեղի ունեցող բնական փոխներթափանցումները, առանձին գիտնականների կամ գիտնականների խմբի աշխատանքները, իրականացվող ծրագրերը համակարգելու և ուղղորդելու, միասնական որոշումներ ընդունելու համար ձևավորվի համահայկական մի կառույց՝ հայերենի բարձրագույն խորհուրդ կամ տերմինաբանական խորհուրդ:

# ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի լեզվի բառապաշարում յուրօրինակ տեղ են գրավում տերմինային արժեք ունեցող բառերը, որոնց զուգադրական քննությունը կարող է երևան հանել բազում հետաքրքրական երևույթներ: Անվերապահորեն սա վերաբերում է նաև գրական արևմտահայերենի և արևելահայերենի տերմինային համակարգերին:

Տերմինաբանության հարցերը գրական արևելահայերենում պետական հոգածության առարկա են եղել, մինչ գրական արևմտահայերենը, ինչպես նշվում է լեզվաբանական գրականության մեջ, «....չունենալով պետական լեզու լինելու հարուստ գործառույթները, զուրկ լինելով տնտեսական, հասարակական կյանքի այլազան բնագավառների պաշտոնական գրագրային լեզու լինելու յուրահատուկ կողմերից», «որոշապես անհավասար պայմաններում է գտնվում»[31]: Արևմտահայերենի տերմինային համակարգը համալրելիս, ինչպես նշվում է, առավելապես գործել է պատճենման սկզբունքը: Ստեղծված տերմինների զգալի մասը ակնհայտորեն լայն կիրառություն չի գտել՝ մնալով անգործածելի:

Բայցև հարկ է արձանագրել, որ անցյալ դարի 90-ականների սկզբին Ֆրանսիայում ստեղծված Արևմտահայ աշխարհաբարի լեզվաբանական խորհրդի «....ամենահիմնական նպատակը եւ բու՛ն ծրագիրը» է «միասնականացնել, համա-

---

[31] Ա.Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ (զուգադրական-տիպաբանական քննություն), Ե., 1985, էջ 116:

կարգել, ինչպես նաեւ կերտել եւ առաջարկել նո՛ր եզրեր՝ անհրաժեշտ նոր գաղափարներ արտայայտելու համար»[32]: Խորիրդի հրատարակած «Ուղեցոյց»-ների առաջարկած նոր եզրերը, ինչպես հավաստվում է, ստեղծվել են հայերենի բառակազմական կաղապարներով և սկզբունքներով՝ «ջանալով, որ անոնք ըլլան կարճ, ներդաշնակ եւ բարեհնչիւն»[33]: Ցավոք, կրկին հարկ է արձանագրել, որ դրանց մի մասը, թերևս, ոչ այնքան հաջողված կառույցներ են (օրինակ՝ *առնամարդ* (macho), *գլխալուր* (headline), *կպչարուեստ* (collage), *ճաշագիր* (recipe), *յառաջագեղձ* (արևելահայերենում՝ *շագանակագեղձ*), *վաճառան* (bestseller), ջերմոց (radiator)[34] և այլն: Բացի այդ արձանագրած մի շարք տերմիններ առկա են արևելահայերենում (ինչպես, օրինակ, *համացանցային, սահուղի, վերնազգեստ, անվասահնակ, նույնաբանություն* (tautology), *հարակարծություն*[35] *և այլն*). այլ խնդիր է, որ հասարակությունը դրանք լայնորեն չի կիրառում:

Դեռևս անցյալ դարի 80-ականներին Ա.Սարգսյանը, զուգադրության համար ընտրելով արևելահայերենի և արևմտահայերենի՝ «աշխարհագրական տերմիններից…. պետությունների անունների ոլորտը», արձանագրում է միայն երկու

---

[32] Ուղեցոյց, պրակ Ա, Մարսել, 1993, էջ 5:

[33] Ուղեցոյց, պրակ Ա, էջ 7:

[34] Արևելահայերենում *ջերմոց*-ը «ապակեպատ տեղ» է, «որի մեջ համապատասխան ջերմություն ստեղծելով և պահպանելով՝ աճեցնում են ջերմասեր բույսեր ու ծաղիկներ կամ ժամանակից շուտ հասցնում զանազան մրգեր ու բանջարեղեն», իսկ *radiator*-ը *ջերմամարտկոց*-ն է. տե՛ս Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 1241:

[35] Արևմտահայերենում առաջարկվում է *հարակարծիք* (paradox) տերմինը:

գրականների միջև առկա տարբերությունները՝ անվանումների հնչում (Ճապոնիա – Ճաբոն, Արգենտինա - Արժանթին), կազմություն (ձնային՝ բառավերջում և բառամիջում. Ռումինիա-Ռումանիա, Սիրիա-Սուրիա), առանձին դեպքերում՝ տերմինային տարաձնություն (բառասկզբում հնչյունի սղումով, այլև հնչյունափոխությամբ պայմանավորված. Իսպանիա- Սպանիա, Կուբա-Քուպա), եզակի դեպքում՝ ձնային էական տարբերություն (Դանիա-Տանեմարքա)[36]:

Անդրադառնալով նաև արևելահայերենի և արևմտահայերենի գունանուններին՝ Ա.Սարգսյանը զուգադրում է գունանվանումները ըստ հաճախականության՝ արձանագրելով արևմտահայերենում *ճերմակ*-ի բացարձակ առավելությունը, այլև երկու գրականներում էլ գունային նրբերանգները հաճախ բույսերի համապատասխան գույներով, գունային ուժգնությունը *ձեփ-, կաս-, սեփ-* և այլ նախամասնիկներով, բազմագունությունը նաև կրկնությամբ արտահայտելը, գունանվանումների ցանկերը *–ագույն, -ավուն, -աթույր* ածանցներով ընդարձակելը, և հանգում այն եզրակացության, որ երկու գրականներում գունային նրբերանգները տարբերակվում են հաճախ ոչ թե առանձին բառերով, այլ համապատասխան գունային անվանման և բառաքերականական համապատասխան փոփոխակներով (-գույն, -երանգ, -է, -կեկ), ինչպես նաև գունաճշգրտող բառերով (մուգ, բաց, գոց, վառ)[37]: Նկատելի է, որ գունանվանումների դեպքում առավելապես արձանագրվում են նմանությունները:

[36] Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 121:
[37] Ա.Սարգսյան, նշվ. աշխ., էջ 134-135:

Թեև գունանվանումների ցանկերը զուգադրելիս, մեր կարծիքով, ի հայտ են գալիս նաև որոշ հետաքրքիր փաստեր: Բառարանային տվյալների համեմատություն-զուգադրությամբ, օրինակ, պարզվում է, որ արևմտահայերենում գործածվող գունանուններից *սամագունը* («երկնագոյն, կապուտակ, լուրթ, պայծառ կապոյտ»), *բիլը* («լուրթ, բաց կապոյտ, երկնագոյն»), *բոսորը* («կարմիր, վարդակարմիր, արիւնագոյն, ծիրանեգոյն»), *դեղձանը* («խարտեաշ, պայծառ դեղին, դեղնորակ»), *լազուարթը* («երկնագոյն, լուրթ») արևելահայերենում դրսևորում են տարբերություններ. *լուրթը* («ծովագոյն, բաց կապոյտ, երկնագոյն») և *ծաւին* («կապոյտ, ծովագոյն»)[38] նույն նշանակությունն ունեն, մինչ *սամագունը, բոսորը, դեղձանը*, պահպանելով արևմտահայերենյան նշանակությունները, արևելահայերենում ձեռք են բերել նաև նրբերանգային իմաստներ. *սամագունը* առաջնային իմաստով «երկնագույն շուշանածաղիկ» է (նորագույն տվյալներով արևմտահայերենում այն երկրորդական իմաստ ունի)[39], *բոսորը*՝ «դեղնին տվող կարմիր», *դեղձանը*՝ «բաց դեղնագույն», իսկ *լազուարթը, ատրորակը, արենագոյնը* արևելահայերենում գործառում են հնչյունական տարբերակներով. *լազուարթը*՝ *լաջվարթ* իբրև «ընտիր կապույտ ներկ, որ ստացվում է գոձազմից», *ատրորակը*՝ *ատրագույն* «հրագույն, շիկակարմիր», *արենագոյնը*՝ *արյունագույն*[40]:

---

[38] *Աչքը ծաւի՝ կապուտաչուի, խաժակ.* տե՛ս Յ.Գայաեան, Բառարան-գանձարան հայերէն լեզուի, Գահիրէ, 1938, էջ 208:
[39] Հմմտ.՝ Յ.Գայաեան, նշվ. բառ., էջ 43: Ա. Սարգսյան, Արևմտահայերենի բառարան, Ե., «Արևիկ» հրատ., 1991, էջ 38:
[40] Հմմտ.՝ ԱՀԲԲ:

Սույն աշխատանքում զուգադրական քննության են ենթարկվում բժշկական և քաղաքական տերմինները, մասնավորապես պարզաբանվում է, թե դրանք կիրառելու ինչպիսի հարաբերություն է առկա երկու գրական լեզուներում:

Բառարանների և հրատարակված նյութերի տվյալներով[41], արևմտահայերենի և արևելահայերենի բժշկական տերմինների համադրական և զուգադրական քննությամբ ի հայտ են գալիս հետևյալ իրողությունները:

ա) Արևմտահայերենում և արևելահայերենում գործառում է միևնույն նշանակությամբ տերմինների[42] բավական ստվար խումբ. ինչպես, օրինակ, երկու գրականներում էլ առկա են *ախտ, ախտաբանություն* (pathology), *ախտանշանաբանություն* (semiology), *ախորժակի կորուստ* (anorexia), *ախտանիշ* (syndrom), *ախտանշան* (symptom), *ախտաճանաչում* (diagnosis), *ախտափոխանցում, ախտատարածում* (metastasis), *ակնաբան, ակնաքող* (cataract), *աղետապ* (enterits), *անարիւնութիւն* (anaemia), *անգար* (migren), *անգունատեսութիւն* (daltonism), *անդամազննութիւն* (գիտություն կենդանական մարմնի ձևի և կազ-

---

[41] Համեմատվել-զուգադրվել են Հարություն Գայայանի, Արտեմ Սարգսյանի և Անդրանիկ Կռանյանի (Ա.Կռանեան, Բառգիրք գործնական հայերէնի, Պէյրութ, «Շիրակ» հրատարակչատուն, 1998) կազմած բառարանները, ինչպես նաև՝ Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի հրատարակած ուղեցույցները՝ Ուղեցոյց, պրակ Ա, Մարսել, 1993: Ուղեցոյց, պրակ Գ, Մարսել, 1998: Ուղեցոյց, պրակ Դ, Մարսել, 2002:

[42] Կրկին հարկ է արձանագրել՝ ըստ բառարանների և հրատարակված նյութերի: Աշխատանքում պահպանված է դրանց ուղղագրությունը: Համեմատվել են նշված բառարանները, հրատարակված նյութերը և ԱՀԲԲ-ն:

մության մասին)[43], *անդամալոյծ, անդրաձայնային նկար* (echograph), *անկանոն տրոփում* (arhythmia), *անհամակեդրոնութիւն* (astigmatism), *անմարսութիւն, անօթաշողանկար* (angiogram), *անօթատապ* (angiopathy), *առողջապահութիւն ապահովագրական, ատամնաբոյժ, արգանդատապ, արգանդահերձում, արնաբան* (h(a)ematologist), *արնագնդակիտ* (h(a)emoglobin), *արնահեղուկ* (plasma), *արնամածում* (h(a)ematoma), *արնաւշաբանութիւն* (serology), *արտեւանատապ* (blepharitis), *բալասան, բակեղ, բացիլ* (bacillus), *բարակցաւ* (թոքախտ, ծիւրախտ), *բարորակ հիւսկէնուռ* (fibroma), *բերանատապ* (stomatitis), *բժիշկ* (ախտաբոյժ, առողջութեան մասնագետ)*, բեկաբոյժ* (կոտրվածքներ բուժող բժիշկ), *բնաբոյժ* (բնական միջոցներով բուժող բժիշկ), *բնաբուժութիւն* (բնական միջոցներով բժշկութիւն), *բշտիկ* (փոքր ուռեցք, ջրալից պալար), *բորոտութիւն* (մորթային ծանր հիւանդութիւն մը), *բջջաւիշ* (lymph), *բջջաւշային ուռ* (lymphangioma), *բուժագիտութիւն* (therapy)[44], *բուժակ* (երկրորդական կարգի բժիշկ), *բուժանիւթ* (բուժիչ նիւթ)[45], *բուժարան* (յատուկ հիւանդութիւն բուժող հիմնարկ), *գլխացաւ, գանկոսկրի բորբոքում* (sinusitis), *գեղձատապ, գործարանի պատվաստում, գործողութիւն, վիրահատութիւն, դալկախտ* (հիւանդութիւն՝ առաջ եկած կարմիր

---

[43] Ա.Կռանյանի կազմած բառարանում (ասել է՝ նոր տվյալներով) *անդամազննութիւն*-ը մարմնի կազմութեան բժշկական հետազօտութիւն»-ն է. տե՛ս Ա.Կռանեան, նշվ. բառ., էջ 21:
[44] Արևմտահայերենում առկա է նաև *դարմանում* տարբերակը.տե՛ս Ուղեցոյց, պրակ Դ, էջ 116:
[45] Արևմտահայերենում ունի նաև «դեղորայք» նշանակությունը. տե՛ս Ա.Կռանեան, նշվ. բառ., էջ 69:

զնդիկներու նուազումէն), *դաշտանադադար, դարման* (դեղ)[46], *դեղ, դեղագործ, դեղթափ* (հակադեղ), *դեղնախտ* (հիւանդութիւն մը, որ դեղնութիւն կը պատճառէ), *դժուարամարսութիւն* (dyspepsia), *դժուարաշնչութիւն, դիմաբորբոքում, դիմադրողականութեան անկման փարակ*՝ ԴԱՎ (Aids), *դիմադրատկարութիւն* (immunedeficiency), *դիմափիրաքուժութիւն, ելունդ* (ուռուցք, այտուցք), *երակահատ* (նշտրակ, երակից արյուն հանող գործիք), *եղջերենատապ* (keratitis), *երակատապ* (phlebitis), *երիկամաբան, միզաբան* (urologist), *երիկամաբանութիւն, միզաբանութիւն* (urology), *զբաղաճնշում* (stress), *զգայախաբութիւն* (hallucinations), *զստացաւ, ըմբանատապ* (pharyngitis), *թոքախտ, թոքատապ* (1. թոքաբորբ. 2. թոքախտ), *թուլամտութիւն* (oligophrenia), *թունաբանութիւն* (toxicology), *ժահր, մանրէ* (virus), *ժանտախտ, ժանտատենդ, լայներակ* (varicose), *լեարդատապ* (hepatitis), *լուծողական* (մաքրադեղ), *լուսն* (աչքի հիւանդութիւն*), լուսնոտութիւն, խաժախտ* (glaucoma), *խայթուածք, խեղ, խեղանդամ, խեղութիւն, խիթ* (ցաւ, փորացավ), *խոլխեցգետի* (այտուցաւոր ախտ), *խոլութիւն* (հիվանդություն, տկարություն), *խոց* (վէրք), *խոցտուկ* (ցաւ, խայթ, խիթ), *խռչափողատապ* (laringitis), *ծյուրախտ* (հյուծախտ), *ծովախտ* (ծովազնացութեան պատճառած սիրտխառնուք), *կաթուած* (յանկարծահաս անդամալուծութիւն, իջուածք), *կանխարգելիչ բժշկութիւն*[47], *կարմրախտ* (տարափոխիկ հիւանդութիւն, որ փոքրերուն մորթին վրայ կարմիր բիծեր կը յառաջացնէ), *կարմրուկ*, *կեղանկ* (խողովակաձեւ խոր վէրք), *կեղծամաշկ* (տարափոխիկ

[46] Արևմտահայերենում ունի նաև «բուժում» նշանակությունը. տե՛ս Ա.Կռանեան, նշվ. բառ., էջ 95:
[47] Մեզանում այժմ լայնորեն կիրառվող ոչ միայն տերմին, այլև բժշկություն:

հիւանդութիւն խլնային թաղանթներու), *կենսանիւթ* (վիթամին), *կլուգոզ* (glucose), *կնախտաբան* (gynaecologist), *կողատապ* (ցախցաւ, կողերու ներքին թաղանթի բորբոքում), *կողացաւ, կրծաղէտ* (stethoscope), *կրծքաբորբոքում* (mastitis), *հալածախտ* (paranoia), *համաճարակ, հարսանիթ, քութէշ* (scarlatine), *հերձամտութիւն* (schizophrénie), *հիւանդանոց, հիւանդապահ, հիւանդութիւն, հիւանդութեան պատմութիւն* (epicris), *հիւծախտ* (ծիւրախտ), *հիւսկէնատապ* (fibrosis), *հոգեբեկում* (depression), *հոգեբոյժ, հոգեբուժութիւն, հոգեվերլուծում, հոգետանջանք* (trauma), *ճահճատենդ* (malaria), *ճարպային ուռ* (lipoma), *ճնշաբուժութիւն* (acupressure), *մազնիսաբուժութիւն, մանկաբարձ, մանկաբոյժ, մանկաբուժարան, մաղձաճարպ* (cholesterol), *մանիշ* (յոդ), *մանկուղղութիւն* (orthop(a)edics), *մանրէ* (bacteria), *մաքրաղեր, միզարիւնութիւն* (ur(a)emia), *մթարութիւն* (տեսողության խանգարում), *մկանացաւ, մկնոռ* (furuncle), *մոլաքոր* (եղնջատենդ), *յօդակարծրացում* (arthrosis. նաև՝ *յօդի կարծրացում*), *յօդատապ* (հոդերի բորբոքում), *յօդացավ, նախախտանիշ, ներդիտակ* (endoscope), *ներմկանային* (ներարկում), *նմուշառում, նմուշաքննութիւն* (biopsy), *նշագեղձահատում, նշագեղձատապ, նշանագրութիւն* (scanography), *նշագրել* (scan (ultrasound)), *նշդրակ, նշտրակ* (վիրաբուժական նուրբ դանակ), *նոպայ* (հիւանդութեան բուռն տազնապ)*, նորագոյացութիւն* (neoplasia), *շաքարախտ* (diabetes), *շնաքաղց* (bulimia), *շողատեսութիւն* (radioscopy), *շողաբուժում* (radiotherapy), *շողանկար* (tomography), *շնչարգելութիւն* (ասթմա), *ողնախտ* (ողնաշարի հիւանդութիւն, ողնացավ), *ողնացավ* (ողնաշարի՝ կողերու ցաւ, ողնախտ), *ոսկրաբոյժ, ոսկրաբուժութիւն, ոսկրաթեքութիւն* (rachitis), *ոսկրախտ, ոսկրանոսրացում* (osteoporosis), *ոսկրատապ, ոսկրացաւ, որովայնադիտում* (laparoscopy), *որո-*

*փայնահերձում* (labarotomy), *որքին* (մաշկային հիւանդութիւն), *ուրկանոց* (մորթի ծանր հիւանդութեան բուժարան), *պալար* (ախտավոր ուռեցք, թարախոտ վէրք), *պահպանակ, պաղառութիւն* (rigor), *պատուաստում* (vaccination), *պրկախտ* (tetanus. մկանների կաշկանդվածութիւն), *ջերմ* (տենդ), *ջերմաչափ, ջլախտավոր* (ջղազար), *ջլատապ* (neuritis), *ջղացավ* (neuralgia), *ջրաբոյժ* (ջրով բուժող), *ջրազերծում* (dehydration), *ջրախտաբուժում, ջերմաբուժում* (diatherapy), *ջղազարութիւն* (hiysteria, neurosis), *ջղահանգոյց, ջրգողութիւն* (հեղուկի աւելորդ գոյացում մարմնէն ներս), *սաղմաբանութիւն* (embryology), *սնկախտ, սննդամասնագէտ, սողնախտ* (herpes), *ստամոքսահատում* (gastrectomy), *ստամոքսատապ* (gastritis), *ստամոքսաղիքաբան*, *ստամոքսաղիտում* (gastrpscopy), *ստնախտ* (mastopathy), *սրտաբան*, *սրտաբոյժ, սրտախտ* (սիրտի հիւանդութիւն), *սրտակծանք* (sistole), *սրտամկանատապ* (myocarditis), *սրտատապ* (carditis), *սրտերազութիւն* (tachicardia), *սրսկում, վարակ, վահանագեղձատապ* (thyroiditis), *վարակիչ, վարակում, վեներախտ* (սեռային վարակիչ հիւանդութիւն)[48], *վերնոտութիւն* (epylepsy), *վիրաբոյժ*, *վիրաբուժութիւն, վիրակապ, վիրահատ* (վիրաբոյժ), *վիրահատել, վիրերիզ* (plaster), *տագնապ* (ճգնաժամ, նոպայ), *տարափոխիկ* (վարակիչ), *տարրալուծարան* (laboratory), *տարրալուծում* (analysis (laboratory)),

---

[48] Արևմտահայերենում առկա է նաև *վեներական հիւանդութիւն* տարբերակը (տե՛ս Ուղեցոյց, պրակ Դ, էջ 118), ԱՀԲԲ-ում՝ *վեներական ախտ*-ը (ԱՀԲԲ, էջ 1372): Հ. Գայայանի կազմած բառարանում այս ախտը վկայված է իբրև՝ *ափրոդիտեան* (տռփական (հիւանդութիւն). տե՛ս Յ. Գայաեան, նշվ. բառ., էջ 55:

ցաւամոք, *ճնցղատապ* (bronchitis)[49], *ունկնատապ* (otitis), *փղախտ* (փիղի պէս ուռեցնող հիւանդութիւն), *փորամաշկատապ* (peritonitis), *փորացավ, փորլուծութիւն* (փորքշուք), *փորհարութիւն* (փորքշուք), *քաղցկեղաբան, քաղցկեղահարոյց, քիմիաբուժութիւն, քոստութիւն* (մորթի հիւանդութիւն):

Թեև ըստ արդի հայերենի բացատրական բառարանների, ինչպես արդեն նշվել է, առանձնացված տերմինները գործառում են արևելահայերենում, բայցև հարկ է արձանագրել, որ արևելահայերենում առավել հաճախ (չասելու համար՝ միշտ) օգտագործվում են, օրինակ, հիվանդությունների անվանումների օտար տերմինները. *ակնաքող*-ը *կատարակտ*-ն է, *աղետապ*-ը՝ *էնտերիտ*-ը, *անարիւնութիւն-ը*՝ *անեմիա*-ն, *արտեւանատապ*-ը՝ *բլեֆարիտ*-ը, *եղջերենատապ*-ը՝ *կերատիտ*-ը, *ըմպանատապ*-ը՝ *ֆարինգիտ*-ը,*լեարդատապ*-ը՝ *հեպատիտ*-ը, *ջըղազարութիւն*-ը՝ *նևրոզ*-ը, *սողնախտ*-ը՝ *հերպես*-ը, *վահանազեղձատապ*-ը՝ *թիրեոիդիտ*-ը, *ճնցղատապ* -ը՝ *բրոնխիտ*-ը, *ունկնատապ* -ը՝ *օտիտ*-ը, *փորամաշկատապ* -ը՝ *պերիտոնիտ*-ը և այլն, և այլն:

Կարելի է նաև վստահաբար պնդել, որ արևելահայերենում չեն կիրառվում վերոնշյալ որոշ տերմիններ, ինչպես, օրինակ, *ախտափոխանցում, ախտատարածում* (լայնորեն գործածվում է *մետաստազ*-ը), *անզունատեսություն* (միշտ կիրառում են *դալտոնիզմ*-ը), *անհամակենտրոնություն* (բժիշկն առանց այլևայլության կօգտագործի միայն *աստիգմատիզմ*-ը), *թուլամտություն* (*թուլամիտ*-ի փոխարեն անհրաժեշտության դեպքում առկա է *օլիգոֆրեն*-ը. հավանաբար այս բառով, ըստ

[49] Ա.Սարգսյանի կազմած բառարանում *ճնցղատապ* –ը «շնչափողի բորբոքում»-ն է. տե՛ս Ա. Սարգսյան, նշվ. բառ., էջ 291:

այն գործածողների, առավել ճշգրիտ է բնութագրվում նվազ մտավոր ընդունակությամբ անձը), *արգանդահատում* (այժմ արդեն հաճախակի հանդիպող *կեսարյան հատում* -ն է), *կրծքանկար* (մշտապես հոլովվում է *մամոգրաֆիա*-ն (mammo-graphy)), այլև *արնամածում, բարորակ հյուսկենուռ, մաղձա-ճարպ, մանիշ, վիրահատ* և բազում այլ տերմիններ:

Մինչդեռ դրանցից շատերը կարելի է ընդունելի համարել և կիրառել մեզանում, ինչպես, օրինակ, վերոնշյալները, այլև *անկանոն տրոփում, արնաբան, արնահեղուկ*, *բերանա-տապ*, *բեկաբոյժ, բջջաուիշ, գեղձատապ, դալկախտ, դիմադրա-տկարութիւն, դիմադրողականութեան անկման վարակ* (ԴԱՎ), *զստացաւ, խաժախտ, կնախտաբան, կենսանիւթ, կրծքաբոր-բոքում, յօդակարծրացում, յօդատապ, հոգեբեկում, նմուշա-քննութիւն, ոսկրանոսրացում, պրկախտ, ստնախտ, վիրերից* և շատ այլ տերմիններ:

Ճշմարտության դեմ մեղանչած չլինելու համար հարկ է նշել, որ անցյալ դարի 90-ականներին արևելահայերեն ներթա-փանցած մի շարք տերմիններ (ինչպես, օրինակ, *հիվան-դութեան պատմություն, հոգեվերլուծում, նորագոյացություն, շնչարգելութիւն, պահպանակ, քաղցկեղաբան, քաղցկեղահա-րոյց, քիմիաբուժութիւն* և այլն), թվում էր, կամրակայվեն արևե-լահայերենի բժշկական տերմինահամակարգում, սակայն վեր-ջին տասնամյակում արձանագրվում է զգալի ետընթաց (գոր-ծածվում են սրանց օտար տարբերակները), որ, ամենայն հա-վանականությամբ, պայմանավորված է հասարակական-քա-ղաքական ինչ-ինչ հանգամանքներով:

Նշված տերմիններից, թերևս, առավել հաջողված, հաս-կանալի և ընդունելի կարելի է համարել արևելահայերենում

կիրառվողները (միգուցե արևելահայի «աչքով» դիտարկելիս)[50]՝ *փոխպատվաստում* (transplantation. արևմտահայերեն *արտատնկում* (նաև *գործարանի պատվաստում*)-ի փոխարեն)[51], *հականեխիչ* (antiseptic. արևմտահայերեն՝ *հականեխական*), *շերտագրում* (tomography. արևմտահայերեն՝ *շողանկար*)[52], *ջրազրկում* (dehydration. արևմտահայերեն՝ *ջրազերծում*), *սննդակարգ* (diet. արևմտահայերեն՝ *սննդականոն*), *վիրահատություն* (արևմտահայերեն՝ *գործողություն*)[53]:

բ) Ըստ Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի՝ 90-ականներին հրատարակած «Ուղեցոյց»-ի[54]՝ ընդհանուր (և՛ արևելահայերենում և՛ արևմտահայերենում կիրառվող) նորաբանություններ համարվող բժշկագիտական տերմինների ցանկը լրացնում են հետևյալ տերմինները՝ *առաջին օգնություն, անեղնաբուժություն, արգանդահատում*, *բուժօգնություն, գեղավիրաբուժություն* (chirugie esthétigue) *դեղահատ, էլեկտրացնցում* (electric shock), *էլեկտրասրտագիր, էլեկտրա-*

[50] Առաջին եզրը արևելահայերեն է:
[51] Թեև արևմտահայերենի վերոնշյալ բառարաններում առկա չէ *փոխպատվաստում*–ը, սակայն Ուղեցոյցի Դ պրակում այն վկայվում է իբրև արևմտահայերենում գործածվող տերմին:
[52] Այժմ արևելահայերենում *կոմպյուտերային տոմոգրաֆիա*-ն փոխարինվում է *համակարգչային շերտագրում* տերմինային բառակապակցությամբ, ըստ այդմ էլ *ԿՏ*–ի փոխարեն հաճախ օգտագործվում է *ՀՇ* հապավումը:
[53] Այս տերմինի՝ արևելահայերենյան տարբերակը Ուղեցոյցի Դ պրակում նույնպես վկայվում է իբրև արևմտահայերենում գործածվող տերմին:
[54] Ուղեցոյց, պրակ Ա, Մարսել, 1993, էջ 37-42, 67- 72, 95-100: Ուղեցոյց, պրակ Գ, Մարսել, 1998, էջ 51-62, 27 -40:

_սրտագիծ, էլեկտրասրտագրութիւն_[55] (electrocardiogram), _երակախցում, երակախցանում_ (infarct), _կոպոսպնեակ_ (contact lens), _հակաընկճող_ (anti- depressant), _համաբուժարան_ (polyclinic), _հեշտամահացում_ (euthanasia), _մահաքուն_ (coma), _նմանաբուժութիւն_ (homeopathy), _շողանկարահանում_ (radiography), շողաքննում (radiogscopy), _պնդերակութիւն_ (sclerosis), _ջլախտ_ (neurosis), _ջղապրկում, ջղացնցում_ (trauma), _ջղացնցել_ (traumatiz (to)), _սրտախթան_ (stimulateur cardiaque), _սրտագիծ_ (cardiogram), _տարզգայուն_ (allergic), _տարզգայունութիւն_ (allergy):

գ) Արևմտահայերենում և արևելահայերենում գործառում են միևնույն նշանակությամբ տարաձև տերմիններ[56]. _աղիքափուք*- աղեփքութիւն, անզգայութիւն- *անզգայացում, ատամնափուտ- *կարիես, արգելանոց- *ժամանակաւոր մեկուսարան_ (quarantine), _արեան ճնշում- *զարկերակային գերճնշում, արնաւիշ- *շիճուկ, բջջատապ- *ենթամաշկային բորբոքում_ (cellulitis), _բուժարան- *առողջարան, գլխու պտոյտ- *գլխապտոյտ, գործարան- *օրգան, դեղագիր- *դեղատոմս, դեղաչափ- *դեղաքանակ և դեղաբաժին, դեղարան- *դեղատուն, դեղաբանութիւն-*դեղագիտութիւն, ենթամորթային- *ենթամաշկային, երակային- *անօթային_ (vasculaire), _երակախցում-*անօթախից և սրտի տագնապ_ (infarct), _երակախցում- *խցակալում_ (thrombosis), _երիկամատապ - *երիկամի բորբոքում, թանչ- արնալուծ_ (dysentery), _թմբիր, մահաքուն- *քնախտ, խռչափող-*կերակ-_

---

[55] «Ուղեցոյց»-ում նշվում է՝ « * ցոյց կու տայ արեւելահայերէն տարբերակը». տե՛ս «Ուղեցոյց», պրակ Գ, էջ 15:
[56] Աստղանիշով առանձնացվում են արևելահայերենում կիրառվող տերմինները՝ ըստ վերը նշված բառարանների և հրատարակված նյութերի:

*բափող, կարմրախտ- *կարմրուկ, հարսանիթ-*կարմրախտ, հրահրիչ- *խթանիչ* (hormone), *մանկական անդամալուծու-թիւն- *պոլիոմէլիտ, մորթաբան- * մաշկաբան, մորթատապ-*մաշկի բորբոքում* (dermatitis), *յառաջագեղձ-*շագանակագեղձ, յուշաթափութիւն-*յիշողության կորուստ* (amnesia), *յօդացաւ-*յօդաբորբոքում* (arthralgia), *շնչերակի կարծրացում- *պնդե-րակութիւն, շնչերակի բորբոքում- *զարկերակի տապ* (aortitis), *շողանկարում-*շողադիտարկում* (radiography), *պնդութիւն-*փորկապ, ջիղ-*նեարդ, ջղաբանութիւն- *նեարդաբանութիւն, ջղաբան- *նեարդաբան, ջրապալար- *այտուց, սննդականոն-*կենսակարգ* և *ռեժիմ, սննդափոխարկում- *նյութափո-խանակութիւն* (metabolism), *վարակում - *վարակ* (infection), *վիրահատակայան - *վիրահատարան, ցաւամոք դեղամիջոց- * ցաւազրկող դեղ, ցրալուծութիւն- *արտաերիկամային զտում* (dialysis), *ուղեղատապ-*գլխուղեղի բորբոքում* (encephalitis), *ունկնակ- *խոզուկ, փողացաւ- *կրծկավանդակի ցավ, փողա-շողանկար- *անօթանկար, փողատապ- *անօթախտ, փողավի-րահատում- * անօթալայնանք, փողահատում- *անօթահատում, փորամաշկատապ- *փորամիզի բորբոքում, փրոթեին- * սպի-տակուց:*

Վերը թվարկված տերմինների համեմատություն-զու-գադրությամբ պարզորոշ է դառնում, որ երկու գրական լեզու-ներում գործառող բժշկական տերմինների տարաձնությունը կառուցվածքային է՝ պայմանավորված՝

- բաղադրիչների դիրքային փոփոխությամբ՝ *ստամոքսա-դիքաբան-աղեստամոքսաբան, առողջապահութիւն ապահո-վագրական-ապահովագրական առողջապահություն, մահա-քուն- քնախտ.*

● միևնույն առաջին (արմատ կամ ածանց) և տարբեր երկրորդ (արմատ կամ ածանց) բաղադրիչներով, կամ հակառակը. *անզգայութիւն- անզգայացում, բերանատապ- բերանաբորբ, դեղագիր- դեղատոմս, դեղաչափ- դեղաքանակ և դեղաբաժին, դեղարան- դեղատուն, դեղաբանութիւն- դեղագիտություն, ենթամորթային- ենթամաշկային, երիկամատապ - երիկամաբորբ, կարմրախտ - կարմրուկ, յօղատապ- հոդաբորբ, միզեցուցիչ*[57]*- միզամուղ, շողանկարում- շողադիտարկում, փարակում - փարակ, վիրահատակայան – վիրահատարան, ցաւամոք դեղամիջոց- ցաւազրկող դեղ.*

կամ՝ *երակախցում- անօթախից, խռչափող-կերակրափող, հրահրիչ- խթանիչ, մորթաբան-մաշկաբան, մորթատապ- մաշկաբորբ, յառաջագեղձ- շագանակագեղձ, սննդափոխարկում- նյութափոխանակութիւն, փողահատում- անօթահատում.*

● տարբեր (երբեմն փոխառյալ) տերմիններով՝ *գործարան- օրգան, երակային- անօթային, թանչ- արնալուծ, ժահր, մանրէ - վիրուս, պնդութիւն- փորկապ, ջիղ - նեարդ, ջրապալար- այտուց, սննդականոն- կենսակարգ* և *ռեժիմ, ունկնակ- խոզուկ, փրոթեին- սպիտակուց,* այլև նրանով, որ՝

• արևմտահայերենյան բարդ (բարդածանցավոր) տերմինին արևելահայերենում համապատասխանում է ածանցավոր տերմին և ընդհակառակը՝ *թթախտ - թութք, խոզախտ* (գեղձերու ուռեցք)- *խոզուկ, հակաթոքախտ* (հակաթոքախտային)- *հակաթոքախտային, ուռականութիւն- ուռախտ* (պալարախտ)։

Ի հակադրություն արևելահայերենի՝ արևմտահայերենում հիվանդությունների անվանումները կազմվում են գերա-

---

[57] Հ. Գայայանի կազմած բառարանում վկայված է *մէզմուղ* (միզեցուցիչ (դեղեր՝ ըմպելիք)) տերմինը. տե՛ս Յ.Գայաեան, նշվ. բառ., էջ 333։

զանցապես *տապ* արմատով, թերևս, այն հիմնավորմամբ, որ հիվանդությունն ուղեկցվում է բարձր ջերմությամբ:

դ) Նույն տերմիններն արևմտահայերենում և արևելահայերենում ունեն  տարբեր նշանակություններ (այլև արևելահայերենում՝ փոխաբերական նշանակություն)[58], ինչպես, օրինակ, *աղեկապ*[59] (աղեթափութեան դէմ գործուած կապ)- *աղեկապ* (աղիքների կալանդ (բանդաժ), աղեխից), *բոյժ* (դեղ, դարման) - *բույժ* (ԱՀԲԲ, տե՛ս 1. բուժում. 2. բուժիչ), *բուժքոյր* (հիւանդապահուհի)- *բուժքույր* (բժշկական քույր), *գալար* (խիթ, խոցտուկ, ներքին սուր ցաւ) – *գալար* (փխբ.՝ ստամոքսի սուր ցավ, խիթք), *դում* (հարբուխ) –*դում* (մարմնի որևէ մասի լորձաթաղանթի բորբոքում, կատառ), *թերածին* (վիժած, պակասաւոր, թերանդամ)- *թերածին* (օրապակաս ծնված), *թուրի* (աչքի ցաւի դեղ) - *թուրի* (հոնքերը ներկելու դեղ, ծարիր),  *իջուած* (կաթուած, ուղեղային հիւանդութիւն) - *իջվածք* (մարմնի որևէ գործարանի տեղի և դիրքի փոփոխությունը դեպի ցած), *խուլինջ*[60] (կոնակի ուռեցք) - *խուլինջ* (պալար, ուռուցք), *խպիպ* (ուռ պարանոցի) - *խպիպ* (վահանաձև գեղձի՝ բորբոքային պրոցեսների, արյունազեղումների և ուռուցքների հետ չկապված մեծացում, զոբ), *ծերաբուժութիւն* (ծերերու դարմանում, խնամք) –*ծերաբուժութիւն* (բժշկության մի բաժինը, որ զբաղվում է ծերությունը «բուժելու»՝ ծերացման պրոցեսների դանդաղեցման ու երկա-

[58] Ըստ ԱՀԲԲ-ի:

[59] Առաջին եզրը արևմտահայերեն է, երկրորդը՝ արևելահայերեն:

[60] Արաբերեն բառի *խուլինճ* տարբերակն է առկա Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկության» (Ե., 1987)  աշխատությունում. տե՛ս աշխատության 164-րդ էջը:

րակեցության գործնական խնդիրներով)[61], *ներերակային* (երակին մէջ (ներարկում)) - *ներերակային* (ԱՀԲԲ-ում այն ոչ տերմինային արժեքով բառ է, առաջնային իմաստը  ածականական է,  ասել է՝ արևելահայերենում ցուցաբերում է տարարժեքություն՝ «1. երակ(ներ)ի մեջ եղող՝ գտնվող՝ տեղի ունեցող, 2. երակ(ներ)ի մեջ մուծվող՝ ներարկվող». ԱՀԲԲ, էջ 1064), *սրսկում* (ներարկում (երակի մէջ)) – *սրսկում* (սրսկելը, սրըսկվելը), *վիրաբուժութիւն* (վիրահատութիւն)- *վիրաբուժութիւն* (1. հիվանդությունների՝ վնասվածքների՝ վերքերի ևն վիրահատական բուժում. 2. բժշկության այն բաժինը, որ զբաղվում է հիվանդությունների՝ վնասվածքների՝ վերքերի ևն վիրահատական բուժման եղանակների ու մեթոդների ուսումնասիրությամբ ու մշակմամբ):

ե) Ըստ բառարանների  միայն արևմտահայերենում են գործառում հետևյալ տերմինները՝ *ախտաժամ* (դարձ, նոպայ), *ախտաճանաչում* (հիւանդութեան գուշակում՝ախտանշաններէն), *ապաքինարան* (բուժարան, դարմանատուն), *արգանդահատում* (արգանդի հատումով ծնունդ (caesaruan section)), *բժշկասենեակ* (clinic), *բուժաշրջան* (բուժման, ապաքինման շրջան), *գեղավիրաբոյժ* (գեղեցկացնելու գործողութիւն ընող), *գործողութիւն* (վիրահատում), *դարմանատուն* (հիւանդատուն, բուժարան), *ելեկտրաբոյժ* (ելեկտրականութեամբ բուժող)[62], *երակախցում* (երակներու խցում), *զմայ* (ասթմա, դժվարաշնչու-

[61] Այստեղից էլ *ծերաբույժ*-ի՝ արևմտահայերենում (ծերերու խնամող) և արևելահայերենում (ծերաբուժությամբ զբաղվող մասնագետ բժիշկ) առկա տարբեր գործառույթները:
[62] ԱՀԲԲ-ում վկայված է «էլեկտրական երևույթների՝ գործընթացների և հոսանքի օգտագործումը  բուժական նպատակներով» նշանակությամբ *էլեկտրաբուժություն* բառը. ԱՀԲԲ, էջ 388:

թիւն, շնչարգելութիւն), *թաղանթատապ* (պլեւրիտ, թոքամիզի բորբոքում), *ժահր* (հիւանդութեան ազդակ (վիրիւս)), *լորցք* (պրկախտ, մկանակծկութիւն), *խոյլականջ* (ականջի ուռեցք պատճառող հիւանդութիւն), *խեղդվուք* (դժվարաշնչութիւն, շնչարգելութիւն), *խուխաբեր* (խուխին ելքը դիւրացնող դեղեր), *ծննդարգելիչ* (զաւակ ունենալն արգիլող կամ սահմանափակող (դեղ)), *կարմրացաւ* (կորեկկտիկ, կորեկանման այտուցներ գոյացնող տենդ), *կալանդիչ* (բեկաբոյժ, վնասուած անդամները կապող), *կեղցավ* (քաղցկեղ), *կոյշ* (փորանցութիւն, փորհաբութիւն), *համայնաբուժ* (ամէն ցաւ բուժող), *հեշտամահութիւն* (մահը դիւրացնող կամ արագացնող բժշկական միջամտութիւն (euthanasie)), *հիւանդակառ* (1. հիւանդատար կառք. 2. հիւանդատար մեքենա), *հնդախտ* (խոլերա), *մայրանոց* (ծնընդանոց, տղաբերքի տուն), *մատնաշուրթ* (մատի խոց՝ կեղ՝ վէրք, կծիպ), *մզնատապ* (ուղեղը պատող միզներու բորբոքում), *միջացավ* (մեջքի ցավ, մեջքացաւ), *մսկուծ* (ակնիտ, մսեղէն փոքրիկ այտոյց), *նշտրակել*[63] (վէրք մը, ախտ մը նշտրակով բանալ), *ուղեղատապ* (ուղեղի բորբոքում), *պնդերակութիւն* (երակներու կարծրացում, կարծրախտ), *ջերմամիզութիւն* (միզանցքի բորբոքում), *ջղապայքարութիւն* (ջղերի քայքայում), *ջրայտուց* (բշտիկ, փամփշտիկ (ափերուն մէջ)), *ջերմացոյց*, (ջերմաչափ), *սրտագէտ* (սիրտի հիւանդութեան մասնագէտ), *փորքշուք, քաղցրամիզութիւն* (շաքարախտ):

գ) Ըստ Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհըրդի «Ուղեցոյց»-ի՝ արևելահայ նորաբանությունների

[63] ԱՀԲԲ-ում առկա է «նշտարով հատել՝ ճեղքել՝ պատռել» նշանակությամբ *նշտարել* բայը. ԱՀԲԲ, էջ 1078:

համառոտ ցանկի[64] բժշկագիտական տերմիններ. *ալերգաբոյժ, ալերգածին, ախտորոշիչ կենտրոն, աղեստամոքսաբան, բժշկական ապահովագրություն, բուժկենտրոն[65], բուժծառայութիւն, լազերաթերապիա, լազերաքիմիա, հակաալերգիկ, նեարդաբոյժ, նեարդայնացնցում, նեարդայնացունց, ռադիովիրաբուժութիւն, ռիթմախազարք, ստուգափորձ, ցնցակաթուած, փորձարկ, քարաբուժութիւն:*

է) Միևնույն տերմինների գործածություն՝ արևելահայերենում «տե՛ս» կամ «նույնն է» հղումներով, այսինքն, ինչպես նշում է Է.Աղայանը, «.... երբ .... բառի գործածությունը կամ տվյալ նշանակությունը մերժվում է՝ արդի հայերենի այժմյան գրական նորմայի հիման վրա» (ԱՀԲԲ, էջ XV). ինչպես, օրինակ, *աղեթափություն* (տե՛ս *ճողվածք*), *անդամահատություն* (նույնն է՝ *անդամատություն*), *անցվորիկ* (տե՛ս *շաքարախտ*), *բժշկարան* (դարմանատուն. տե՛ս *բուժարան*), *գեղձատապ* (գեղձերու բորբոքում. տե՛*ս գեղձաբորբ*), *դեղագիր* (տե՛ս *դեղատոմս*), *դեղահատ* (տե՛ս *դեղահաբ*), *դեղարան* (տե՛ս *դեղատուն*), *դեղարար* (տե՛ս *դեղագործ*), *թյուրակն* (տե՛ս *շեղակն*), *լնդազարություն* (տե՛ս *լնդախտ*), *խոյլ* (ուռեցք (պարանոցի))- *խույլ* (տե՛ս *խուլոտ՝ խուլերով՝ ուռուցքներով պատված*), *խուխ* (թանձր թուք, մաղաս)- *խուխ* (տե՛ս *խորխ*),

---

[64] Ըստ «Ուղեցոյց»-ի՝ արևելահայ նորաբանությունների համառոտ ցանկը կազմելիս հիմք են ծառայել Ռ.Շալունցի և Ֆ.Խլղաթյանի աշխատանքները: Նշվում է նաև՝ «Բառացանկի ծավալն անհարկի չմեծացնելու նպատակով նրանում չեն ընդգրկուած նեղ մասնագիտական նորակազմ բառ-եզրոյթները: ... Տրուած են միայն այն բառերը, որոնք համեմատաբար ընդհանրական են». տե՛ս «Ուղեցոյց», պրակ, Գ էջ 63-64:

[65] Այժմ արևելահայերենում առավել կիրառելի է *բժշկական կենտրոն* բաղադրյալ տերմինը:

*ծանրաշնչություն* (տե՛ս *շնչարգելություն*), *կոճիճ* (մորթի փոքր ուռեցք. տե՛ս *բշտիկ*), *կրծաղետ* (նույնն է՝ *կրծքաղիտակ*), *մկնոռ* (նույնն է՝ *կայծուռուցք*), *մորթաբան* (տե՛ս *մաշկաբան*), *մորթաբանություն* (տե՛ս *մաշկաբանություն*), *յիմարաբոյժ* (տե՛ս *հոգեբույժ*), *յիմարանոց* (տե՛ս *գժանոց*), *վարդախտ* (տե՛ս *կարմրուկ*), *փորանցություն* (տե՛ս *փորհարինք*), *փտախտ* (նույնն է՝ *կերցավ*), քնախտ (նույնն է՝ *մահաքուն, լեթարգիա*):

ը) ԱՀԲԲ-ում տերմինները «հնց.» նշումով են, այսինքն՝ Է.Աղայանի հավաստմամբ՝ «....աշխարհաբար գրական լեզվում գործածական են եղել մինչսովետական շրջանում» (ԱՀԲԲ, նույն տեղում), իսկ այժմ անգործածական են. *բժշկապետ* (գլխավոր բժիշկ), *խղխայթ* (պալար, թարախ), *մահտարաժամ* (համաճարակ), *փողացավ* (կոկորդի ցավ):

թ) Առանձին դեպքերում արևմտահայերենյան տերմինի համապատասխանակը արևելահայերենում բժշկական տերմին չէ. *հալուէ* (սապր (մաքրադեղ))- *հալվե* (շուշանազգիների ընտանիքին պատկանող բազմամյա բույս. հալվա), *հիւանդատար* (շտապ օգնություն) - *հիվանդատար* (հիվանդներ տանող, փոխադրող), *հիւանդապահուհի* (հիւանդ խնամող անձ. բուժքույր)- *հիվանդապահուհի* (հիվանդապահի կին), *մաքրողական* (լուծողական, ստամոքսը մաքրող դեղ) – *մաքրողական* (մաքրելու հատկություն ունեցող, մաքրող), *մղձուկ* (փողացաւ) – *մղձուկ* (1. շունչը կտրվելը. 2. սիրտը նեղվելը. 3. խեղդող, խեղդիչ, հեղձամղձուկ), *մոլութիւն* (հոգեկան ախտ)- *մոլություն* (մոլի լինելը. որևէ հակում, որից մարդ չի կարողանում հրաժարվել), *պուտ* (ելունդ, այտուցք, փոքր ուռեցք) - *պուտ* (ծաղկաբույս. բիծ՝ կետ՝ խալ. կաթիլ, հեղուկի շատ փոքր քանակություն), *քնաբեր* (քուն պատճառող (դեղ)) - *քնաբեր* (քուն բերող, քուն առաջացնող):

ժ) Եզակի դեպքերում արևմտահայերենյան տերմինը ԱՀԲԲ-ում արձանագրվում է «գվռ.» նշումով, այսինքն՝ դիտվում բարբառային. *տղաբերութիւն, տղաբերք* (զաւակ ծնիլը) – *տղաբերություն, տղաբերք* (գվռ. երեխա բերելը, ծննդաբերություն):

ժա) Արևմտահայերենում և արևելահայերենում արձանագրվում են նաև օտար տերմիններ՝ համապատասխանաբար՝ *էքս րէյ* (ռենտգենանկար), ռատիոկրաֆի (ռենտգեն), *տոքթեոր* ((ժղխսկց.) բժիշկ)[66], փրոթեին և *էքստրասենս, լազերաթերապիա, լազերաքիմիա, ռադիոսեանս:*

Վերոնշյալ տերմինների շարքում հետաքրքրական են մի քանի տերմիններ, որոնք թեև արձանագրված են արդի հայերենի բառարաններում, սակայն չեն գործածվում արդի արևելահայերենում:

*Անզարը* վկայված է Նոր հայկազեան, Ս.Գաբամաճյանի և Ս. Մալխասյանցի կազմած բառարաններում՝ համապատասխանաբար «ցաւ գլխոյ կիսով մասամբ, կամ ի կէսն գլխոյ»[67] և «միգրեն»[68] բացատրություններով, ԱՀԲԲ-ն նշված բացատրություններին հավելում է Արարատյան և Ղարաբաղի բարբառներում «գլխի կես մասում զգացվող ցավ, անզար, միգրեն» իմաստով *շեկեկ* բառը (ԱՀԲԲ, էջ 50. տե՛ս նաև Հայոց լեզվի բարբառային բառարան, հ.4, Ե., 2007, էջ 219): Բայցև հատ-

---

[66] Այս բառերը վկայված են Ա.Սարգսյանի՝ 1991թ. հրատարակած «Արևմտահայերենի բառարան»-ում՝ էջք 106, 266, 287:

[67] Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Վենետիկ, 1836, էջ 125:

[68] Ս. Գաբամաճեան, Նոր բառագիրք հայերէն լեզուի, Կ.Պօլիս, 1910, էջ 73: Ս.Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան (այսուհետև՝ ՄՀԲԲ), հ. 1, 1944, Ե., էջ 99:

կանշական է, որ այն ընդգրկված չէ Հ.Աճառյանի «Հայերէն արմատական բառարան» -ում:

*Դումը* նույնպես վկայված է ՆՀԲ-ում՝ «իջուած գլխոյ. որ և ասի ՀԱՐԲՈՒԽ, ՌԸՆԳՑԱԻ» բացատրությամբ (ՆՀԲ, h.1, էջ 639): Այն թաթարերեն «*tuman* «հարբուխ»» բառից, «հազուադէպ հանդիպող բառ կամ նշանակութիւն» նշումով հիշատակում է Ս. Մալխասյանցը (ՄՀԲԲ, h. 1, էջ 537): Բառն արձանագրում է նաև Հ.Աճառյանը[69]: «Արդի հայերենի բացատրական բառարան»-ը մեկնում է «մարմնի որևէ մասի լորձաթաղանթի բորբոքում, կատառ» (ԱՀԲԲ, էջ 315):

Նշված բառերի շարքում առանձնանում է նաև «խուխին ելքը դիւրացնող դեղեր» նշանակությամբ *խուխաբեր* բառը: Ըստ Հ.Աճառյանի *խուխ*-ը «թանձր թուք, մաղաս»-ն է: Հետաքրքիր է նրա դիտարկումը արմատի բարբառային ձևերը քննելիս. նա նշում է, որ *խուխ*-ը «**խորխ** «կեղեւանք» բառի հետ շփոթելով ձևացած են Ջղ. (գիւղերը) **խորխ**, Կր. Տփ. **խօրխ**, Ախց. **խօռխ**…» (ՀԱԲ, h.2 էջ 416), այսինքն՝ փաստորեն բառը՝ սխալ հնչմամբ, ամրակայվել է գրական արևելահայերենում (այժմ էլ այն գործածվում է), և հայերենի բացատրական բառարաններն էլ *խուխ*-ը հղում են *խորխ*-ին (հմմտ. ՄՀԲԲ, h.2, էջ 299. ԱՀԲԲ, էջ 617):

Այսպիսով, արևմտահայերենի և արևելահայերենի բժշկական տերմինների պարզ զուգադրում- թվարկումից անգամ ակնհայտ է, որ երկու գրական լեզուների բժշկական տերմինային համակարգերը համարյա նույնական են. նկատվում է նաև տերմինային համակարգերի փոխհարըստացման միտում

---

[69] Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), h. 1, Ե., 1971, էջ 683:

(ինչպես արևելահայերենն է տերմիններ փոխառում արևմտահայերենից, այնպես էլ ընդհակառակը):

Արևմտահայերենի և արևելահայերենի քաղաքական տերմինների զուգադրական քննությունը նույնպես կատարվում է վերը նշված սկզբունքով և դասակարգումներով: Նախապես, սակայն, հարկ է, ըստ Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի կազմած՝ «արեւելահայ նորաբանութիւնների համառօտ ցանկի», ներկայացնել արևելահայերենի՝ արևմտահայերենից փոխառած և լայնորեն կիրառող *ահաբեկիչ, ահաբեկչութիւն, ընկերաբան, ընկերաբանական, ընկերաբանութիւն, ընտրատեղամաս, ընտրարշաւ, ընտրաքարոզ, ժողովրդավար, խօսնակ* (սպիկեր), *ծաւալապաշտ, ծաւալապաշտական, ծաւալապաշտութիւն* (էքսպանսիա), *կանաչներ, հակաահաբեկական, հակաահաբեկչութիւն, նախարար, նախարարութիւն, քայլարշաւ, քարոզարշաւ*[70] նորաբանությունները՝ միաժամանակ արձանագրելով, որ *ահաբեկիչ, ահաբեկչութիւն,ընկերաբան, ընկերաբանական, ընկերաբանութիւն, ժողովրդավար* բառերը՝ հենց արևմտահայերենյան նշանակություններով, սակայն ոչ իբրև տերմին, վկայված են ԱՀԲԲ-ում (տե՜ս ԱՀԲԲ, էջ 19, 405, 481). այնպես որ նշված բառերը առանձնացվում են վերոնշյալ համառոտ ցանկից՝ խուսափելու համար թյուրիմացություններից. դրանք չեն կարող դիտվել «արեւելահայ նորաբանութիւններ» :

Բառարանների և հրատարակված նյութերի տվյալներով, արևմտահայերենի և արևելահայերենի քաղաքական տերմինների համադրական և զուգադրական քննությամբ ի հայտ են գալիս հետնյալ իրողությունները:

---

[70] Տե՛ս «Ուղեցոյց», պրակ, Գ էջ 67-84:

ա) Ե՛վ արևմտահայերենում, և՛ արևելահայերենում գործառում են միևնույն նշանակությամբ տերմիններ[71]. ինչպես, օրինակ, երկու գրականներում էլ առկա են *ազգայնականութիւն* (նացիոնալիզմ), *ազգընտիր* (ազգին կողմէ ընտըրուած, վաւերացուած (կաթողիկոս, նախագահ), *ամբոխավար* (խռովարար, դեմագոգ), *այլախոհ, աջակողմեան* (աջ կողմի)[72], *ատենապետութիւն* (ատենապետ լինելը), *աշխարհաժողով* (համաժողով), *աշխարհաքաղաքացի* (որու հայրենիքը աշխարհն է, կոսմոպոլիտ)[73], *բռնատիրութիւն* (բռնի իշխանութիւն, բռնապետութիւն), *գաղթավայր, գաղութ, գաղութատիրական, գործադիր, դաշնագիր, դաշնադրութիւն* (դաշնագիր, համաձայնագիր), *դաշնակցութիւն* (1. ներքնապէս անկախ պետութիւններու միաբանութիւն. 2. հայ յեղափոխական կուսակցութիւն մը), *դեսպան, դրամատիրութիւն* (կապիտալիզմ. նաև՝ դրամատէրերու մենատիրութիւն[74]), *եղաշրջում* (եղափոխութիւն), *եռապետութիւն* (երեք հոգւոյ միատեղ իշխանութիւն), *երեսփոխան*[75] (համայնքի, թաղի կողմից ընտրված ներկայացուցիչ, որ մասնակցում է օրենսդրական մարմնի աշխատանքներին,

---

[71] Կրկին հարկ է արձանագրել՝ ըստ բառարանների և հրատարակված նյութերի, նաև այն, որ աշխատանքում պահպանված է դրանց ուղղագրությունը:
[72] Արևմտահայերենում նաև՝ «կառաւարութեան կողմնակից (երեսփոխան)». տե՛ս Ա. Կռանեան, նշվ. բառ., էջ 103: Արևելահայերենում նորաբանություն է *աջություն*-ը. տե՛ս Ս.Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Ե., «Նաիրի» հրատ., 2002, էջ 53:
[73] Արևմտահայերենում առկա է նաև *համրաքաղաքացի* «աշխարհաքաղաքացի» տերմինը:
[74] Տե՛ս Ա. Կռանեան, նշվ. բառ., էջ 103:
[75] Արևելահայերենում առկա է *երեսփոխանություն* «երեսփոխան լինելը» բառը. տե՛ս ԱՀԲԲ, էջ 342:

պատգամաւոր, դեպուտատ), *երեսփոխանական* (դեպուտատական), *ընկերաբան*[76] (սոցիոլոգ), *ընկերաբանութիւն* (սոցիոլոգիա), *ընկերային* (հասարակական), *ընդդիմութիւն* (հակառակ կէցուածք, դիմադրութիւն), *ընտրապայքար, թաղականութիւն* (թաղի գործերը վարող մարմին), *թաղապետութիւն* (1. թաղային վարչություն. 2. թաղապետի պաշտոնը), *ինքնավարութիւն* (ազատութիւն, անկախութիւն), *ինքնորոշում* (իր ճակատագիրը որոշելու իրաւունք), *իշխանապետութիւն* (բռնապետություն), *խորհրդայնացում* (սովետական կարգերու հաստատում), *ծաւալապաշտ* (տարածուելով երկիր գրավելու ձգտող, էքսպանսիոնիստ), *կայսրութիւն, կառավարութիւն* (պետութիւն, պետական ղեկավարութիւն. վարչաձև, նախարարական կազմ), *կուսակցութիւն* (քաղաքական դաւանանքի մը շուրջ խմբուած կազմակերպութիւն), *համադաշնակցութիւն* (անկախ պետութիւններու դաշնակցութիւն (քոնֆետերասիոն)), *հանրապետական* (հանրապետութեան կուսակից)[77], *հանրահաւաք, հանրաքուէ, հաւատարմագիր* (նոր դեսպանի մը ներկայացուցած վաւերագիրը երկրի պետին), *հաւատարմագրել, հաւատարմագրութիւն, հիւպատոս, հնչակեան* (հայ կուսակցութիւն անդամ), *հռչակագիր, միապետ, միապետութիւն*, *յեղափոխական, յեղափոխութիւն, նախարարութիւն* (մինիստրություն), *նահանգ* (երկրի վարչաքաղաքական ստորաբաժանում), *պաշտօնաթերթ* (պաշտօնական թերթ (կառավարական՝ կուսակցական)), *պատգամաւոր* (երեսփոխան), *ռամկավար* (1. ռամկավարական վարչակարգի կողմնակից, դե-

---

[76] Արևելահայերենում վկայված է նաև *ընկերաբանական* բառը՝ «տե՛ս Սոցիոլոգիական» հղումով. տե՛ս ԱՀԲԲ, էջ 405:

[77] Արևելահայերենում այժմ կիրառվում է ««Հանրապետություն» կուսակցության անդամ» նշանակությամբ:

մոկրատ. 2. ռամկավարական կուսակցության անդամ. 3.ռամկավարական կուսակցություն), *ռամկավարութիւն* (1. կառավարման ձև. 2.ռամկավարների կուսակցություն), *սահմանադրութիւն* (կառավարութեան եւ քաղաքացիների յարաբերութեանց օրինագիրք), *վարչակազմ* (վարչութեան կամ պաշտօնէութեան կազմ, անձնակազմ), *վարչակարգ* (վարչաձեւ. կառավարական դրութիւն), *վարչաձեւ* (վարչակարգ, երկիր մը կառավարելու ձեւ), *վարչապետ* (նախարարապետ), *վեհաժողով*[78] (կոնգրես), *տէրութիւն* (պետութիւն), *տիրապետութիւն* (իշխանութիւն), *քաղաքագէտ* (քաղաքականութեան հմուտ), *քաղաքագիտութիւն, քաղաքականագիտութիւն, քաղաքականութիւն* (փոխ-նուաճումի միջազգային յարաբերութիւն), *քաղաքացի:*

բ) Նույն տերմիններն արևմտահայերենում և արևելահայերենում ունեն տարբեր նշանակություններ (այլև արևելահայերենում՝ փոխաբերական նշանակություն)[79], ինչպես, օրինակ, *ազգապահպանում* (ազգային ձուլումի դէմ միջոցառում) - *ազգապահպանում* (ազգը պահպանելը՝ պահելը), *աթոռ* (պաշտօն)- *աթոռ* (փխբ. պաշտոն), *աւագաժողով* (վեհաժողով, գագաթաժողով)- *ավագաժողով* (ավագների ժողով), *դիւանագէտ* (քաղաքագէտ)- *դիվանագետ* (փխբ. վարպետ՝ խորամանկ, ծայրահեղորեն զգուշավոր մարդ, քաղաքագետ, դիպլոմատ), *իրաւակարգ* (վարչական դրութիւն, վարչակարգ) - *իրաւակարգ* (հասարակական հարաբերությունների՝ իրավական նորմաներով հաստատված կարգ, իրավական կարգ),

---

[78] Արևմտահայերենում ունի նաև «դատաստանական մարմին» նշանակությունը. տե՛ս Ա. Սարգսյան, նշվ. բառ., էջ 277:
[79] Ըստ ԱՀԲԲ-ի:

*ծերակոյտ* (օրէնսդիր մարմին. երէցներու ժողով) -*ծերակույտ* (ծերերից կազմված խորհուրդ, որ որևէ իշխանություն է ստանում), *ծերակուտական* (ծերակոյտի անդամ)- *ծերակուտական* (ծերակույտի անդամ), *հանրապետութիւն* (վարչաձև, որուն պետերը կ'ընտրուեն ժողովուրդի կողմէն)- *հանրապետություն* (պետական կառուցվածքի ձև, որի ժամանակ իշխանության գերագույն մարմնի անդամներ ընտրվում են որոշակի ժամանակով, հասարակապետություն), *հիւպատոս* (դեսպանի տեղապահ)- *հյուպատոս* (իր տերությունը ներկայացնող և տերության ու նրա քաղաքացիների շահերը պաշտպանող պաշտոնական անձ ուրիշ տերության մեջ)[80], *պատգամաւոր* (պատուիրակ, դեսպան)- *պատգամավոր* (ընտրովի ներկայացուցիչ, պետական ընտրովի մարմնի անդամ, դեպուտատ), *պատգամաւորութիւն* (պատուիրակութիւն) –*պատգամավորություն* (պատգամավոր լինելը, որպես պատգամավոր ընտրվելը), *պատուիրակ* (պատգամաւոր, ներկայացուցիչ. (ժողովուրդի՝) երեսփոխան. (ընկերութեան մը՝ պետութեան մը՝) գործակալ) - *պատվիրակ* (հասարակության՝ կոլեկտիվի՝ կազմակերպության ևն կողմից ընտրված և իրեն տրված հրահանգների համաձայն գործող ներկայացուցիչ, դելեգատ), *պատուիրակութիւն* (պատգամաւորութիւն, ներկայացուցչութիւն) – *պատուիրակություն* (1. պատվիրակ լինելը. 2. պատվիրակի պարտականությունները. 3. պատվիրակների խումբ՝ կազմ), *վարչամեքենայ* (պետական գործունէութեանց կառոյց) –*վարչամեքենա* (փխբ. վարչական մեքենա, կառավարման մեքենա. կառավարման մարմինների ու դրանց կառուցվածքի սիստեմը՝

---

[80] Արևելահայերենում այժմ առկա է արևմտահայերենյան նշանակությամբ:

համակարգը), *վեհաժողով* (բարձրագոյն իշխանութեանց ժողով) - *վեհաժողով* (զանազան տերությունների բարձրաստիճան ներկայացուցիչների ժողով, որ վճռում է որոշ կարևոր հարցեր (առավել. միջազգային բնույթի), կոնգրես), *օրէնսդրութիւն* (երկրի մը օրէնսդիր իշխանութիւնը) – *օրենսդրություն* (1. օրենքների սահմանումը՝ ստեղծումը և հրապարակումը. 2. որևէ երկրի կամ իրավունքի որևէ բնագավառի օրենքների ամբողջությունը):

գ) Ըստ բառարանների միայն արևմտահայերենում են գործառում հետևյալ տերմինները՝ *ազնուապետութիւն* (արիստոկրատիա), *ատենապետ* (որևէ ընտրովի հասարակական մարմնի նախագահ), *արհեստակցութիւն* (նոյն արհեստին պատկանողներու միութիւն (corporation)), *արհեստապետութիւն* (սինդիկատ, միևնույն արհեստի մեջ գտնվող գործակցական դաշնակցություն, արհեստակցական միություն), *բարձրընկալ* (իշխանավոր), *ընկերաքաղաքական* (հասարակական և քաղաքական), *դիւան* (1. ազգային կամ հասարակական ժողովի նախագահություն. 2. քարտուղարություն), *դիւանապետ* (դիւանի գլուխ), *ընկեր(ա)վար* (սոցիալիստ), *ընկեր(ա)վարական* (սոցիալիստական), *ծերակուտական* (սենատոր), *կայսերապաշտ* (1. իմպերիալիստ. 2. իմպերիալիստական), *կայսերապաշտութիւն* (իմպերիալիզմ), *հակահամայնավար* (հակակոմունիստական), *համայնավար* (1. կոմունիստ. 2. կոմունիստական), *ճնշախումբ* (ճնշումի քաղաքական ուժ ազգային նպատակի համար (լոպպի)), *սատարում* (լոբբինգ), *նախարարապետ*[81] (պառլամենտի նախագահ):

---

[81] ԱՀԲԲ-ում վկայված է «պատմական» նշումով՝ «առաջին նախարար, նախարարների ավագ» նշանակությամբ. ԱՀԲԲ, էջ 1051:

դ) Միևնույն տերմինների գործածություն՝ արևելահայերենում «տե՛ս» կամ «նույնն է» հղումներով, այսինքն, ինչպես արդեն նշվել է, բառի գործածությունը կամ տվյալ նշանակությունը արդի հայերենի այժմյան գրական նորմայով մերժվում է, ինչպես, օրինակ, *ազգայնամոլ* (նույնն է՝ *ազգամոլ*), *անջատողական* (նույնն է՝ *անջատական*), *բղեշխ* (տե՛ս *հիւպատոս*), *թաղական* (նույնն է՝ *թաղային*՝ թաղին հատուկ), *ինքնօրինութիւն* (տե՛ս *ինքնավարություն*), *խուժանավար* (տե՛ս *ամբոխավար*), *հասարակապետութիւն* (տե՛ս *հանրապետություն*), *համաժողով* (նույնն է՝ *վեհաժողով*), *հանրաքաղաքացի* (նույնն է՝ *աշխարհաքաղաքացի*), *հասարակապետութիւն* (տե՛ս *հանրապետություն*), *հնչակ* (տե՛ս *հնչակյան*՝ կուսակցության անդամ), *պաշտօնագիր* (նույնն է՝ *պաշտոնաթերթ*):

ե) ԱՀԲԲ-ում տերմինը «հնց.» նշումով է, ասել է՝ այժմ անգործածական. *ազգահամար* (մարդահամար), *արարողապետ*[82] (արարողութեանց վրայ հսկող), *բանբեր* (գործադուլ), *գահերեց*[83] (նախագահ, գլխաւոր*)*, *թաղական*[84] (թաղային վարչության անդամ), *ծերակոյտ* (սենատ)[85], *ձախակողմյան* (ձախ կողմում եղող՝ գտնվող՝ տարածվող. հնց. ձախ հոսանքի ներկայացուցիչ՝ կողմնակից):

---

[82] ԱՀԲԲ-ում առկա է «պատմական նշումով»: ՀՀ Նախագահի աշխատակազմի կառույցն ունի համարյա *արարողապետ*-ի կարգավիճակով *արարողակարգի բաժնի պետ* պաշտոնը. տե՛ս www. upresident. am:

[83] ԱՀԲԲ-ում առկա է «պատմական» նշումով:

[84] ԱՀԲԲ-ում առկա է «պատմական» նշումով:

[85] ԱՀԲԲ-ում առկա է «պատմական» նշումով:

զ) Առանձին դեպքերում արևմտահայերենյան տերմինի համապատասխանակը արևելահայերենում քաղաքական տերմին չէ. *ապակայունացում* (երկրի մը ապահով վիճակի խանգարում, վրդովում) - *ապակայունացում* (կայունության խախտում), *անձնակազմ* (պաշտօնեաներու կազմ՝ խումբ) – *անձնակազմ* (որևէ կարգ՝ աստիճանակարգ ներկայացնող մարդկանց խումբ), *թոշակաւոր* (թոշակ ստացող պաշտօնեայ) – *թոշակավոր* (թոշակ ունեցող՝ ստացող), *սակաւապետութիւն* (պետութիւն, որ կառավարուած է քանի մը գլխաւոր իշխանաւորներէ) –*սակավապետություն* (1. սակավապետ լինելը. 2. սակավապետի կյանք՝ կենցաղ), *ուխտ* (պետությունների միություն՝ որոշ նպատակի հասնելու համար ստեղծված դաշինք) - *ուխտ* (փոխադարձ համաձայնություն, դաշինք):

է) Ըստ Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի «Ուղեցոյց»-ի՝ արևելահայ նորաբանությունների համառոտ ցանկի[86] քաղաքական նոր և «նոր իմաստով գործածուած»[87] տերմիններ. *ազդեցութեան գօտիներ, անկախ դիտորդ, աշխարհաշրջան, աշխարհատնտեսական, աշխարհաքաղաքական շահեր, աշխարհաքաղաքականութիւն, ապակառուցողական, բազմակարծութիւն, բազմակուսակցական, բազմակուսակցութիւն, բացախօս*, բացախօսութիւն*, բողոքի երթ, բողոքի ցոյց, գազաթնաժողով, դաշնային ժողով, երկքաղաքացի, երկքաղաքացիութիւն, եւրահամայնք, եւրամիութիւն, զօրանոցային սոցիալիզմ, ընտրազանգուած* (էլեկտորատ), *ընտրախաւ, ընտրավէճ, ընտրատարածք, ընտրարշաւ, թաղապետ*, թաղապետարան, ժողճակատ* (ժողովրդական ճա-

---

[86] Տե՛ս «Ուղեցոյց», պրակ, Գ էջ 67-84:
[87] Առանձնացվում են աստղանիշով:

կատ), *ժողովրդական դիւանագիտութիւն, ժողովրդավարական**, *ժողովըրդավարութիւն**, *ինքնանկախ, իրաւական դաշտ, իրաւական պետութիւն, հակամիլիտարիզմ, հակառասիզմ, հակասոցիալիզմ, հակացոյց, հակաքարոզչութիւն, համայնքային**, *համայնքապետ, համանախագահ, համանախագահութիւն, հանրահաւաք, հռչակագիր* (տեսութեան մը պաշտօնական յայտարարութիւն կամ բանաձեւում (մանիֆեստ), *մարզպետարան, միակուսակցական, նորանկախ երկրներ, նստացոյց, նստացուցարար, սերտաճ**, *սերտաճում**, *վարչախումբ:*

ը) Արևելահայերենում գործածվում են մի շարք օտար տերմիններ՝ *ավտորիտարիզմ*[88], *ատլանտիզմ, գլոբալիզմ, Եվրոպական միություն (դրան առնչվող Եվրախորհուրդ, Եվրահանձնաժողով, Եվրադատարան և այլն), եւրոցենտրիզմ, եւրոցենտրիստ, իմպիչմենթ, լեգիտիմություն, լոբբի*[89], *լոբբիստ, լուստրացիա, կոնսենսուս*[90], *կոնֆլիկտ*[91], *մանդատ, վետո, քվորում, օլիգարխիա*[92], *օմբուդսմեն*[93], որոնցից շատերը հաս-

---

[88] Արևելահայերենում կիրառվում են նաև *ավտորիտարիզմ*-ի հայերեն տերմինները՝ *բացարձակ միապետություն, բռնապետություն, ամբողջատիրություն*:

[89] Թեև, ինչպես արդեն նշվել է, երկու գրական լեզուներում էլ առկա են *սատարող*, *սատարում,* իսկ միայն արևմտահայերենում՝ *ճնշախումբ* տերմինները. տե՛ս Ա. Կռանեան, նշվ. բառ., էջ 277:

[90] Արևելահայերենում առաջարկվում է *միակամություն* տերմինը:

[91] Արևելահայերենում առկա է *բախում* բառը, որն առանց վերապահումների կարող է փոխարինել *կոնֆլիկտ* օտար տերմինին:

[92] Արևելահայերենում այժմ հանդիպում է այս տերմինի արևմտահայերենյան *սակավապետություն* տարբերակը:

կանալի պատճառներով (այլև հանգամանքների բերումով) չկան արևմտահայերենի քաղաքական տերմինային համակարգում:

Վերոնշյալներին հարկ է առաղրել նաև՝

թ) արևելահայերենի՝ արևմտահայերենից փոխառած հետևյալ տերմին –նորաբանությունները և իմաստային նորաբանությունները՝ հավելելով միայն, որ արևելահայերենում այդ բառերն առկա են, սակայն տերմինային արժեք չեն ունեցել, ինչպես, օրինակ, *գործիչ* (կուսակցութեան գործօղ անդամ հասարակական գործունեություն ունեցող անձ. արևելահայերենում՝ հասարակական գործունեություն ունեցող անձ), *դաշնակցային* (միութենական, ֆէտէրալ. արևելահայերենում՝ 1. դաշնակիցներին հատուկ՝ վերաբերող, դաշնակիցների. 2. դաշինքի վրա հիմնված, դաշինքով պայմանավորված), *եռագոյն* (հայկական դրօշակ, երեք գոյնով դրօշակ. արևելահայերենում՝ երեք գույն ունեցող, երեք գույնով ներկված), *ինքնավար* (ինքնիշխան, անկախ. արևելահայերենում՝ 1. ինքնավարություն ունեցող, ինքնավարությամբ կառավարվող. 2. ինքնավարության վրա հիմնված), *ինքնիշխան* (ինքնավար, անկախ. արևելահայերենում՝ ինքնուրույն, ազատ, անկախ), *խորհրդարան* (երեսփոխանական ժողով, պառլամենտ. արևելահայերենում՝ խորհրդակցությունների սենյակ՝ սրահ), *համայնք* (հասարակութիւն), *հաւատարմատար* (դեսպանի պաշտօն կատարող անձ. արևելահայերենում՝որևէ մեկի անունից գործելու՝ հանդես գալու իրավունքով պաշտոնապես լիազորված

[93] Արևելահայերենում կիրառում են, և գրական արևելահայերենում, թերևս, առավել ընդունելի է *մարդու իրավունքների պաշտպան* բաղադրյալ տերմինը:

անձ), *մարզպետ* (շրջանային մարզի պետ. արևելահայերենում՝ *մարզպետ,* տե՛ս *մարզպան*), *նախագահ, սատարող* (լոքբիստ. արևելահայերենում՝ օժանդակող, օգնող, նպաստող), *քաղաքապետ* (արևելահայերենում՝ «պատմ.» նշումով), *քաղաքապետարան* (արևելահայերենում՝ «պատմ.» նշումով), *քարոզչութիւն* (արևելահայերենում՝ 1. քարոզիչ լինելը. 2. քարոզչի գործունեությունը. 3. քարոզ կարդալը, քարոզում):

Վերոնշյալ տերմինների շարքում հետաքրքիր է «սպիկեր» իմաստով *խոսնակ*-ը: Բառը վկայված է ՆՀԲ-ում և ՄՀԲԲ-ում՝ համապատասխանաբար՝ «խօսական. քաջաբան. ճարտար ի բանս» (ՆՀԲ, հ.1, էջ 997) և « 1.Լաւ խօսող, խօսելու շնորհք ունեցող: 2. Յօգուտ մէկի խօսող, փաստաբան: 3. Բարեխօս: 4. Խօսող՝ կանչող թռչուն, աքաղաղ» (ՄՀԲԲ, հ.2, էջ 313) իմաստներով: Արևմտահայերենի բառարաններում *խոսնակ*-ի առաջնային իմաստը «ռատիոյի՝ հեռուստատեսիլի վրայ լուրեր հաղորդող, լրատու»-ն է, այնուհետև նշվում են «հատուկ յայտագիր վարող», «յօգուտ մէկու մը ի պաշտօնէ խօսող, փաստաբան, ջատագով, պաշտպան», «անձի մը կամ կազմակերպութեան մը կողմէ խօսող, բանբեր, ներկայացուցիչ», «յօգուտ մէկու մը միջնորդող, բարեխօս» իմաստները[94]: Արդի հայերենի բացատրական բառարանները վկայում են «խոսուն, ճարտար» և «հազվադեպ հանդիպող բառ» նշումով «դատապաշտպան,

[94] Գ. Ճէրճէրեան, Փ. Կ. Տօնիկեան, Ա.Տէր-Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, Պէյրութ, Կ. Տօնիկեան եւ որդիք հրատարակչատուն, 1992, էջ 896: Ա.Սարգսյան, նշվ. բառ., էջ 155: Յ. Գայաեան, նշվ. բառ., էջ 202: Ա.Կռանեան, նշվ. աշխ., էջ 186 :

պաշտպան» իմաստները՝ արձանագրելով նաև արևմտահայերենյան «ռադիոյի հաղորդավար»-ը[95]:

Արևելահայերենում այժմ լայնորեն կիրառվող *խոսնակ*-ի «սպիկեր» նշանակությունը փոխառություն է, ամենայն հավանականությամբ, ռուսերենից (հմմտ.՝ «the Speaker սպիկեր ա) անգլիական համայնքների պալատի նախագահ. բ) ԱՄՆ-ի ներկայացուցիչների պալատի նախագահ»)[96]: Այժմ հաճախակի գործառող *մամուլի խոսնակ* բառակապակցությունում այն, թերևս, արտահայտում է «խոսելու շնորհք ունեցող» (նաև «յօգուտ մէկի խօսող») իմաստը:

Միայն արևելահայերեն քաղաքական տերմինային համակարգում է հանդիպում *անգլիական թագուհի* (փաստացի իշխանություն չունեցող) բաղադրյալ կազմությունը, որ ռուսերեն *английская королева*-ի պատճենումն է: Ս.Էլոյանի հավաստմամբ այն սխալ կազմություն է. պետք է լինի Անգլիայի թագուհի[97]:

Այսպիսով, արևմտահայերենի և արևելահայերենի քաղաքական տերմինահամակարգերի զուգադրական քննությունից պարզ է դառնում, որ երկու գրական լեզուների այս ոլորտին առնչվող տերմինները, պայմանավորված հասարակական-քաղաքական տարբեր իրավիճակներով, փոքր-ինչ տարբերվում են, բայցև դարձյալ նկատվում է տերմինային համակարգերի փոխհարստացման միտում:

---

95 ԱՀԲԲ, էջ 596: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Ե., 1972, էջ 555:

96 Անգլերեն-հայերեն բառարան, խմբ.-մբ՝ Հ.Ասմանգուլյանի և Մ.Հովհաննիսյանի, Ե., 1984, էջ 904:

97 Ս.Էլոյան, նշվ. բառ., էջ 35:

## ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՒ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Պատմական զարգացման ընթացքում լեզուն իր բառապաշարը հարստացնում է, ամբարում գիտական, տեխնիկական, մշակութային ամենատարբեր ոլորտների զարգացումն արտացոլող բառեր: Հայերենը, որպես կենդանի լեզու, բացառություն չէ: Հատկապես վերջին երկու-երեք տասնամյակներում, երբ տեղի է ունենում ինֆորմացիոն-տեղեկատվական համակարգերի աննախադեպ առաջընթաց, նորաստեղծ ու նորիմաստ հարյուր-հազարավոր բառեր են ներթափանցում գրական հայերեն (թե՛ արևմտահայերեն և թե՛ արևելահայերեն):

Հայերեն նոր տերմինների ստեղծման հարցում արևմտահայերենն ավելի բծախնդիր է, որն ունի իր հիմնավոր պատճառները: Գրական հայերենի այս տարբերակն առ այսօր մտավորականության, գրական մշակների, լրատվության ոլորտում և ուսումնական հաստատություններում գործող անխոնջ անհատների ջանքերի շնորհիվ փորձում է պահպանել իր ինքնատիպությունը և զերծ մնալ օտարամուտ ազդեցություններից[98]:

Անշուշտ, լեզուն չի կարող խուսափել փոխառություններից, այն չի կարող մեկուսանալ, կղզիանալ. ի վերջո, անխառն լեզու գոյություն չունի: Այս իրողությունը կարելի է դիտարկել առաջին հերթին աշխարհի առավել զարգացած, այդ թվում՝ եվրոպական լեզուներում:

---

[98] Ռոպեր Տէր Մերկերեան, Ուղեցոյց Ա, Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, Մարսել, 1993, էջ 3:

Իհարկե, թե՛ փոխառություններ կատարելիս և թե՛ այդպիսիք մերժելիս անհրաժեշտ է խուսափել ծայրահեղություններից: Բոլոր դեպքերում, ողջունելի է, որ արևմտահայերենը ջանում է տերմինները խմբավորել, դասդասել ըստ ոլորտների և լեզվի ներքին միջոցներով, հայերենի բառարմատներով արտահայտել նոր հասկացությունները, փոխարինել դրանցով օտարամուտ բառաշերտը: Սփյուռքում գնահատելի աշխատանք է կատարել Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդը, որը կազմավորման առաջին իսկ օրից իր ամենահիմնական ու բուն նպատակն է համարել միասնականացնել, համակարգել տերմինային համակարգը, ինչպես նաև կերտել ու առաջարկել նոր եզրեր՝ անհրաժեշտ նոր գաղափարներ արտահայտելու համար[99]:

Խորհուրդն իր հրատարակած չորս «Ուղեցոյց»-ներում առաջարկում է բառային ցանկեր՝ հիմնականում տերմիններ, որոնք, հեղինակների հավաստմամբ, ո՛չ օրենքի ուժ ունեն, ո՛չ էլ պարտադիր գործածվելու հավակնություններ: Անգլերենից, ֆրանսերենից և գերմաներենից պատճենված այդ բառերն են.

ա) լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող և շրջանառող տերմիններ,

բ) դեռևս անկայուն և չկանոնարկված տերմիններ,

գ) Խորհրդի կողմից կազմված և առաջարկված նորագույն տերմիններ, որոնք արտահայտում են նորահայտ գաղափարներ, և որոնք կարող են ընդունվել կամ մերժվել լեզուն կիրառողների կողմից:

Նորաբանությունների հանդեպ ծայրահեղ հոգատարություն, բայց և արտակարգ բծախնդրություն է անհրաժեշտ. հա-

---

[99] Տե՛ս նշվ աշխ., էջ 5:

ղորդակցվողների լեզվամտածողության մեջ ամրապնդվելու համար ժամանակ է պահանջվում: Ինչպես նշեցինք, «Ուղեցոյց»-ներում բերված շատ բառեր երկու գրականներում էլ գործածական են, ինչպես՝ ***արտոնել, նպաստառու, հարահոս, վիճահարույց, չարաշահում, կրիչ, ծածկաբառ, ստեղնաշար, հրամանաշար***[100] և այլն, իսկ տերմինների մի մեծ խումբ, որ Էդ. Աղայանի բառարանում վկայված չէ (***նմանակ*** /այս բառը արձանագրված է, բայց ոչ որպես տերմին/, ***աստղնատպիչ, հեռապատճեն, թվանշագրիչ, ընտրանք, դյուրաթեք սկավառակ*** և այլն), սպասում է կիրառության իր իրավունքին:

Արևմտահայերեն տերմինները արևելահայերենի բառապաշարի հարստացման աղբյուրներ են, քանի որ կերտվում են.

ա) նույն լեզվանյութից,

բ) լեզվամտածողության նույն սկզբունքներով,

գ) բառակազմության «խնայողական», միևնույն սկզբունքներով[101]:

Այնպես որ, որևէ նոր հասկացություն արտահայտելու համար արևելահայերենում առկա բացը հաճախ լրացվում է արևմտահայերենի օգնությամբ, եթե այնտեղ արդեն կան անհրաժեշտ միավորները[102]: Ի դեպ, այդպիսիք ԱՀԲԲ-ում կամ վկայված չեն (օրինակ՝ ***առանձնազրույց, ազատ ձեռներեց, բռնարարք, հանրահավաք, արտագնա (նստաշրջան), փաթեթ***

---

[100] Արևելահայերենում նշված բառերը վկայված են Էդ.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (այսուհետ՝ ԱՀԲԲ), սակայն դրանիցից երկուսը՝ **կրիչ, ծածկաբառ**, վկայված են ոչ որպես տերմին, իսկ **հրամանաշար**-ը բացակայում է նշված բառարանում:

[101] Ուղեցոյց Գ, էջ 63-64:

[102] Նույն տեղը, էջ 11:

***(օրինագծի փաթեթ), աղաճ, մարդասիրական միջանցք, զտաքաշ),*** կա՛մ բերվում են **<u>արևմտ</u>**. նշումով (օրինակ՝ ***<u>խոսնակ</u>*** (ԱՀԲԲ, էջ 594), ***<u>կարգախոս</u>*** (ԱՀԲԲ, էջ 703), կամ էլ վկայված են, բայց այլ՝ **<u>հնց.</u>** կամ **<u>պատմ</u>**. նշումներով և իմաստներով, օրինակ՝ ***<u>համայնք</u>*** բառի (ԱՀԲԲ, էջ 803) առաջին իմաստն է՝ նախնադարյան կոմունիստական տնտեսակարգին հատուկ՝ մարդկանց հասարակական միավորման ձև, երկրորդ իմաստը (**<u>պատմ</u>**. նշումով)՝ մեկ քաղաքի կամ գյուղի բնակչությունը՝ որպես հասարակության ինքնավար կազմակերպություն, իսկ երրորդ իմաստը (**<u>արևմտ.</u>** նշումով)՝ կոմունա: Ակնհայտ է, որ այժմ կիրառական է սույն բառի երկրորդ՝ **<u>պատմ</u>**. նշումով իմաստը: Կան բառեր էլ՝ ***ահաբեկիչ, հարահոս, հարցապնդում, հարցախույզ, բացախոս*** և այլն, որոնք, թեև վկայված են վերը նշված բառարանում, սակայն այժմ նոր՝ տերմինային գործառույթով ու իմաստներով են հանդես գալիս:

Այսպիսով, տեղի է ունենում գրական հայերենի երկու դրսևորումների՝ մեկը մյուսով հարստանալու շարունակական գործընթաց: Այս մասին նշում է նաև Անդրանիկ վրդ. Կռանյանը. «մեր (արևմտահայերենի բառարան՝ Ս.Տ.) Բառգիրքին մաս կը կազմեն նաև Հայաստանեն ծնունդ առած կարգ մը դիպուկ բառեր, ինչպէս՝ ***բեռնաթափել, արտահերթ (նիստ), հավատարմատար, բռնաշորթում, փոխշահավետ, մրցունակ, տարաղրամ*** եւն»[103]: **Լեզվական այսպիսի փոխներթափանցումները ներկայացնում են լեզվական փոխհարստացման, փոխհամալրման և լեզվակիրների փոխըմբռնման, ուստի և տերմինաբանության զարգացման յուրահատուկ միտում:**

---

[103] Անդրանիկ վրդ. Կռանեան, Բառգիրք հայերէն լեզուի, Շիրակ հրատարակչատուն, Պէյրութ, 1998, էջ 8:

Համակարգչային, կիրառական տնտեսագիտության և իրավաբանության տերմինաբանության քննությանը նվիրված այս հատվածում մենք դիտարկել ենք նաև նշված «Ուղեցոյց»-ների ընձեռած նյութը:

Քանի որ տեղեկատվական տեխնոլոգիաների հայրենիքը համարվում է Ամերիկայի Միացյալ Նահանգները, ուստի այդ ոլորտին վերաբերող գրեթե բոլոր հասկացություններն արտահայտող տերմինները ստեղծվում են անգլերեն ու «շրջում» աշխարհով մեկ: «Գերմանիայի ու Ռուսաստանի մտավորականները, առանց արժանապատվության, ու որևէ փոփոխության նույն ձևով այդ տերմինները գործածում են իրենց լեզուներում: Իսկ Ֆրանսիան արժանի ջանք է թափում իր մայրենին անաղարտ պահելու և օտար բառերի դեմ նորերը ստեղծելու՝ չձերբազատվելով սակայն լատինական և հունական արմատներից: Մինչդեռ հայերենն այս առումով անզուգական է. ոչ մի օտար լեզվի չի դիմում նոր տերմիններ կերտելու համար»[104]: Այս գիտակցմամբ էլ «Ուղեցոյց»-ներում անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն համարժեքների դիմաց, ըստ հարմարության, զուտ հայկական արմատներ են գործածվում, որպեսզի օտար տերմինները դյուրըմբռնելի դառնան: Ընդ որում, այդ համարժեքները բավականաչափ ճշգրտորեն են արտահայտում օտար տերմինների իմաստները (սա հեղինակների՝ օտար լեզուները գերազանց տիրապետելու, այդ լեզուները մայրենիի չափ զգալու, ընկալելու արդյունք է): Երբեմն օտար տերմինների պատճենումը կատարվում է մի քանի տարբերակներով՝ իմաստային զուգահեռներով՝ հնարավորություն տալով ընտրություն կատարելու (օրինակ՝ անալո-

---

[104] Ուղեցոյց , Ա, էջ 29:

գաթվանշանային կերպափոխիչ, համօրինակ (արևել.) – **համ-գույն, հանգունական, նմանակ** (արևմտ.)),  իսկ երբեմն էլ պատճենումը կատարվում է բառակապակցությամբ (ինչպես՝ բուֆեր, մեկուսաշրջույթ (արևել.) - **միջանկյալ հիշողություն** (արևմտ.)), որը դարձյալ իմաստի լիարժեք արտահայտման ձգտումով է պայմանավորված:

Հեղինակները ցանկալի են համարում, որ հայաստանաբնակ ժողովուրդը առաջարկվող հայերեն տերմինները որդեգրի իր ամենօրյա արտահայտությունների մեջ, և մեր արևելահայերենը նույնպես ճոխանա և առանց աղավաղվելու փոխանցվի հաջորդ սերունդներին[105]:

Անդրանիկ վրդ. Կռանյանն իր բառարանում մի բաժին՝ «Հայկական սեղանին օտար բառեր»[106] խորագրով, հատկացրել է օտար տերմինների՝ արևմտահայերենում հանձնարարվող համարժեքներին, որոնց մեծ մասը կիրառվում է արևելահայերենում: Այդ օտար բառերը արևմտահայերենին անցել են գերազանցապես թուրքերենից, իսկ արևելահայերենին՝ նաև ռուսերենից, սակայն առաջարկվողները փաստորեն գործածական են երկու գրական լեզուներում, ավելին՝  դրանք վկայված են ԱՀԲԲ-ում. օրինակ՝ անանաս-ի դիմաց հանձնարարվող **արքայախնձոր**-ը (ԱՀԲԲ, էջ 148), թէպսի-ի դիմաց՝ **մատուցարան, սկուտեղ** (ԱՀԲԲ, էջ 976), խավիար-ի դիմաց՝ **ձկնկիթ** (ԱՀԲԲ, էջ 569, ընդ որում՝ որպես՝ **նույնն է**), չէրէզ-ի դիմաց՝  **աղանդեր** (ԱՀԲԲ, էջ 21), պուլղուր-ի դիմաց՝ **ձավար** (ԱՀԲԲ, էջ 917), սալաթա-ի դիմաց՝ **աղցան** (ԱՀԲԲ, էջ 28) և այլն,

---

[105] Անդրանիկ վրդ. Կռանեան, Բառարան-գանձարան հայերէն լեզուի, Շիրակ հրատարակչատուն, Պէյրութ, 1998,  էջ 30:

[106] Տե՛ս նույն տեղը, էջ 505-506:

իսկ մի մեծ մասն էլ, ըստ Ա. Կռանյանի, հարկ է հանձնարարել օգտագործելու նաև արևելահայերենում:

Բացի այդ, նույն տեղում նա գրում է, որ բառերու ճոխացումէն եւ արդիականացումէն զատ, բազմաթիւ բացատրութիւններ կը վերատեսուին, հոմանիշներ եւ իմաստի նոր առումներ կը աւելցուին բառարանէն ներս, ինչպես՝ թեզ - **դրոյթ**, թէլէքս – **հեռատիպ**, թէքնոլոժի - **գիտարուեստ**, թրանզիթ – **տարանցում**, **անցուղի**, ինթեռնէթ – **համացանց**, ֆաքս – **հեռապատճէն**, ի-մէյլ - **ել-մակ**, լոպպի - **ճնշախումբ, սատարորդ,** մանղալ – **կրակարան,** մարքա - **ցուցունիշ**, մոզայիք – **խճանկար**, ռեժիմ – **սննդակարգ**, տէֆիսիթ – **պակասուրդ,** տուշ – **ջրցան,** փլաթին – **լուսնոսկի,** քոմփլէքս – **1. բարդոյթ, 2. համալիր** և այլ բազմաթիվ բառեր, որոնց մի մասը թեև արձանագրված է ԱՀԲԲ-ում, սակայն՝ այլ իմաստներով (օրինակ՝ **կրակարան** բառը «մանղալ» իմաստով չի բերվում. ԱՀԲԲ, էջ 772):

Այս ուսումնասիրության շրջանակներում, քննության առնելով արևմտահայերենի մի շարք (ինչպես երկու գրական լեզուների զուգադրական, այնպես էլ արևմտահայերենի բացատրական) բառարաններ, այդ հարցերն արծարծող գիտական աշխատություններ ու հոդվածներ, եկանք այն եզրակացության, որ երկու գրականների բառապաշարների ընդհանրությունները գնալով աճում են. այդ է վկայում նաև 1938 թվականին լույս տեսած՝ Յ. Գայաեանի (Մխիթար Պոնտացի) «Բառարան – գանձարան հայերէն լեզուի» և արդեն մեր օրերում լույս տեսած՝ Անդրանիկ վրդ. Կռանեանի «Բառգիրք հայերէն լեզուի», նաև ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի արևմտահայերենի բաժնի և դրան կից ձևավորված արտասահմանյան խմբի ուժերով ստեղծվող բառարանների տվյալների զուգադրումը:

Դիտարկումները ցույց են տալիս, որ թե՛ Կռանյանի բառարանում, թե՛ «Ուղեցույց»-ներում ընդգրկված են բազմաթիվ միավորներ (ինչպես տերմիններ, այնպես էլ համագործածական բառեր), որոնք առկա են ԱՀԲԲ -ում, սակայն տարբեր են դրանց կիրառությունների հաճախականությունը, իմաստային հետագա զարգացումները: Օրինակ, արևելահայերենում ոչ համագործածական **ազգընտիր, ակնածել, բանիմաց, ընդերք, ընդվզում, ժուժկալ, ինքնաբավ** և բազմաթիվ այլ բառեր (նաև՝ խիստ գրական ոճական ծանրաբեռնվածությամբ՝ **աղարտել, անեղծ, անքնին, բարեբախտ, դժնդակ, զանցառություն** և այլն) արևմտահայերենի համար սովորական են:

Նման միտում հաճախ նկատվում է նաև տերմինների կիրարկության առումով:

Ստորև բերում ենք արևելահայերենում առկա համակարգչային բառապաշարի այն մասը, որը արևմտահայերենում ունի զուգահեռներ. մեր խնդիրն է պարզել, թե այդ զուգադրության արդյունքում տերմիններից որո՞նք կարելի է հանձնարարելի համարել երկու գրականների համար: Նկատենք, որ այս տերմինահամակարգը նորագույններից է, դեռ չի արմատավորվել մեր իրականության մեջ, թեև օտար տերմինների հայերեն համարժեքները ինֆորմատիկայի դասագրքերում գործածական են ու կիրառելի: Եվ քանի որ համակարգչային տերմինների ծագման՝ փոխառության աղբյուրը անգլերենն է, ուստի «ելման» կետ ենք ընդունել այդ լեզուն, որպեսզի պարզ լինի երկու՝ արևելահայերեն ու արևմտահայերեն պատճենումների ճշգրտությունը: Նկատի ենք ունեցել նաև այն հանգամանքը, որ հաճախ այդ տերմինները ներկայացնող արևելահայերենյան բառարաններում այս կամ այն հասկացության թարգմանությունը բացակայում է, մինչդեռ արևմտահայերենը

պարտադրորեն ստեղծել է հայերեն տարբերակը՝ հավատարիմ մնալով որդեգրած իր սկզբունքին (ինչպես կտեսնենք ստորև, հաճախ հայերեն այդ ձևերը գործածական են դառնում նաև արևելահայերենում)։ Առանձին դեպքերում կմատնանշենք **նախընտրելի** տարբերակը՝ **կիրառվողի-**ն զուգընթաց։

Այսպիսով, արևելահայերեն - արևմտահայերեն համակարգչային տերմինահամակարգերի զուգահեռ դիտարկումը կներառի.

ա) օտար տերմինների դիմաց երկու գրականներում առկա հայերեն համարժեքների ներկայացում,

բ) միևնույն հասկացության համար և՛ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում առկա մեկից ավելի բառերից առավել հաջողված ձևերի ընտրություն,

գ) արևմտահայերեն կամ արևելահայերեն տարբերակներից նախընտրելի ձևերի հանձնարարում։

## Անգլերեն - արևելահայերեն – արևմտահայերեն տերմինային ցանկեր[107]

1. algorithm - արևելահայերենում ստեղծվել են **ալգորիթմ, մեթոդ, կանոն** համարժեքները, իսկ արևմտահայերենում՝ **հրամանաշար**-ը. կիրառելի են **ալգորիթմ**-ն ու **հրամանաշար**-ը։
2. alphanumeric - արևելահայերենն ունի **այբբենաթվանշանային պայմանանշաններ** բառակապակցությունը, իսկ արևմտահա-

[107] Ցանկի արևելահայերենի մասում բերվում են արևելահայերենում այդ տերմիններն արտացոլող բառարանների տվյալները (տե՛ս գրակ. ցանկ, 1, 8-9, 11-12). եթե այդ՝ ձախ մասում միայն մեկ տերմին է բերված, ուրեմն տերմինը միայն մեկ բառարանում է առկա. օրինակ՝ **երկխոսային վահան - զրուցատուփ, ֆաքս – հեռապատճեն**։

յերենը՝ **տառաթվային.** հանձնարարելի է արևմտահայերենի ձևը, որն ավելի պարզ է ու հարմար:

3. analog - **անալոգաթվանշանային կերպափոխիչ, համօրինակ** տերմինների դիմաց արևմտահայերենը ստեղծել է *հանգոյն, հանգունական, նմանակ* բառերը. արևելահայերենում դեռ կիրառական են ***անալոգ**-ն* ու ***համօրինակ**-ը:*
4. automation - **ավտոմատացում** - ինքնագործում. Այս պարազայում դեռ գործածելի է արևելահայերենի ***ավտոմատացում**-*ը:
5. backslash - **պայմանանշան, հակաթեք գիծ** – *հակաշեղագիծ*[108]*.* անշուշտ, ճիշտ կլիներ ընդունել արևմտահայերեն տարբերակը. այն և՛ անգլերենի ստույգ իմաստն է արտացոլում, և՛ հարմար է կիրառության համար:
6. backup - **պահուստավորում, պատճենների պահպանում** – *պահեստապատճէն.* թվում է՝ արևմտահայերեն ձևը ավելի իմաստալից է:
7. binary - **երկուական** - *երկեակ.* մեզանում ընդունված և կիրառելի է *երկուականը,* քանի որ այդ բառը մաթեմատիկայում վաղուց ընդունված, հաստատված ու տարածում գտած տերմին է:
8. bit (Binary digit) - **բիթ** – *երկնիշ.* գերադասելի է արևմտահայերեն տարբերակը, թեև համընդհանուր տարածում է գտել **բիթը,** նաև **երկուականը**՝ որպես նաև հաշվման միավոր:
9. bomb - **ռումբ** – *խանգահարում.* տարածված են թե՛ **բոմբ-ը**, թե՛ **ռումբ-ը**, իսկ արևմտահայերեն տարբերակը՝ *խանգահարում,* դեռ «հասանելի» չէ:
10. buffer (memory) - **բուֆեր, մեկուսաշրջույթ** - *միջանկյալ հիշողություն.* գերադասելի և իմաստի ճիշտ արտացոլումն է արև-

[108] Շեղագիր տառերով նշում ենք արևմտահայերեն տարբերակը:

մտահայերենի թարգմանությունը՝ ***միջանկյալ հիշողություն***, որն էլ մենք հանձնարարում ենք:

11. bute - **բայթ** - *ությակ.* սա էլ, երկնիշի և երկուականի՝ մաթեմատիկական հաշվման համակարգում ունի՛ **բայթ** և **ութական** ՝ հաշվման միավորի կիրառությունը:
12. active - **ակտիվ, գործուն** – *գործուն*

    actives Fenster - **ակտիվ պատուհան** – *գործուն պատուհան*

    activate - **ակտիվացնել** - *գործօնել.* վաղուց ի վեր **ակտիվի** փոխարեն գործածական է **գործունը**, բայց այս դեպքում, երբ բառը պիտի «աշխատի» նաև բառաբնում, դեռ կիրառվում է **ակտիվը**. ***գործօնել*** արևմտահայերենը չի կարողանում հաստատվել:
13. ascending - **աճել, աճող** - *բարձրացող.* հնարավոր այս տարբերակներից նախընտրելի է **աճող**-*ը* (թեև ***բարձրանալ*** արևմտահայերենն ունի նաև աճելու իմաստ. ԱՀԲԲ, էջ 179):
14. background printing - **միջակա տպում (տպում համակարգչից)** - *հետնաշխատ տպագրություն.* ընդունելի է արևելահայերեն՝ **միջակա տպում** թարգմանությունը:
15. bar - **շերտ, կող** – *երիզ.* **կող**-ը շփոթ կարող է առաջացնել այս դեպքում. իսկ ընդունելի կարող են լինել թե՛ **շերտը**, թե՛ ***երիզը*** (տե՛ս ստորև՝ **code** անգլերեն տերմինի թարգմանությունը)*:*
16. batch - **խմբաքանակ, փաթեթ** - *մասնոր.* ավելի հաջող է արևելահայերեն *փաթեթը*:
17. booting - **գործարկել, բեռնում** - *մեկնարկել.* արևմտահայերեն տերմինը՝ *մեկնարկել*, ճշգրիտ է արտացոլում անհրաժեշտ իմաստը:
18. browse (to) - **զննարկել, դիտել, թերթել** - *աչքէ անցնել.* արևմտահայերենի **աչքէ անցնել**-ը մեզանում **աչքով անցկացնել**

տարբերակով է գործածվում, որը հաջողվածն է բերված երեքից:

19. button bar - **կոճակ, սնեռակ** – *մանրանիշ*. գերադասելի է արևմտահայերենը՝ *մանրանիշ*:
20. cache memory - **հիշապահեստ, հիշողություն** – *նախահիշողություն.* այս երեքից ավելի հաջողված է արևմտահայերենը՝ *նախահիշողություն*:
21. cascade - **կասկադային, բազմաքայլ, բազմամակարդակ** - *իրարհաջորդող*. ընդունված է *կասկադայինը*, իսկ ճիշտ արևմտահայերենը՝ ***իրարհաջորդող***, չի գործածվում:
22. chip - **չիփ, մանրասխեմա, միկրոսխեմա** - *մանրածիր*. վերջինս **չիփ**-ի հարմար տարբերակն է:
23. click - **կտտոց, մատնազարկ** - *չխկոց, չխկել*. նշված տերմիններից և ոչ մեկը գործածության համար պիտանի չէ, թեև արևմտահայերեն ձևերը՝ ***չխկոց, չխկել***, սփյուռքում անկաշկանդ կիրառվում են:
24. code - կոդ - *նշան, կրճատագիր*

    **կոդերի թիվ** - նշանաթիվ. թեև արևելահայերենում **կոդի** ճիշտ թարգմանությունը՝ «պայմանական հապավումների բանալի, պայմանական նշանների համակարգ» (ԱՀԲԲ, էջ 745), համապատասխանում է արևմտահայերեն ***նշան, կրճատագիր*** տերմիններին, հատկապես ***կրճատագրին,*** սակայն վերջիններս ամբողջությամբ չեն արտացոլում անգլերեն տերմինի իմաստը, ուստի համընդհանուր գործածության մեջ են **կոդ**-ը և դրանով կազմված կապակցությունները:
25. command, statement - **հրաման** – *հրահանգ.* երկուսն էլ՝ արևելահայերենն ու արևմտահայերենը, հավասարապես ընդունելի են. այստեղ իր խոսքը կասի ժամանակը:

26. compatible - **համատեղելի** - *ազուցելի.* վերջինս, արևմտահայերենը, արտացոլում է անգլերեն տերմինի իմաստը, ուստի ընդունելի է այն:
27. compilation - **կազմարկում** - *համամեկնություն.*

    **կազմարկիչ, յուրացուցիչ** - *համամեկնիչ.* **համ(ա)-** նախածանցն արևմտահայերեն համարժեքի մեջ լիովին արտացոլում է նախատիպ տերմինի իմաստը, նամանավանդ որ հաջողությամբ «աշխատում է» նաև բառակազմական բնում՝ ***համամեկնություն, համամեկնիչ:***
28. computer - **համակարգիչ, կոմպյուտեր** - *համակարգիչ.* այս տերմինի և դրա՝ իր գործառույթին անհամապատասխանության մասին շատ է խոսվել, սակայն, ստեղծվելով արևմտահայերենում, այն հաջողությամբ տարածվեց նաև արևելահայերենում (ԱՀԲԲ -ում այն վկայված չէ):
29. computer science - **գիտություն համակարգիչների մասին, կոմպյուտերային գիտություններ, ինֆորմատիկա** – *տեղեկագիտություն, տեղեկաբանություն.* արևմտահայերեն տարբերակներից ամենաճիշտն ու արդիականը ***տեղեկագիտությունն է,*** սակայն մեզանում հավասարապես կիրառելի է նաև ինֆորմատիկան:
30. configuration - **կազմաձև, փոխդասավորություն** – *կազմույթ.* վերջինս՝ արևմտահայերենն, ամենադիպուկն է:
31. conversiqn - **փոխարկում, տվյալների ձևափոխում ներկայացման մի ձևից մյուսին** - վերածում. զուգահեռ արևելահայերեն փոխարկում և արևմտահայերեն վերածում տերմիններից այժմ կիրառելի է առաջինը, թեև երկրորդն էլ շատ հաջող տարբերակ է:
32. cursor - **կուրսոր, շարժագիծ** – *նշիչ.* ինչպես փորձն է ցույց տալիս, մենք դեռ հակված ենք պատճենումներին, ուստի կուր-

որ էլ գործածում ենք, սակայն *նշիչ*-ը ի վերջո դրան կփոխարինի:

33. data - **տվյալներ, տվյալներ** – *տուեալ*. այստեղ կիրառվում է միայն արևելահայերեն տերմինը՝ **տվյալներ**:
34. database - **տեղեկատուն, տեղեկացանկ** – *տեղեկահիմ(ք)*. արևմտահայերենը անգլերեն տերմինի ճիշտ համարժեքն է, ամբողջովին արտացոլում է այդ տերմինի իմաստը, ուստի պետք է ընդունվի ***տեղեկահիմ(ք)*** -ը:
35. debug - **կարգաբերում, սխալների ուղղում, վրիպազերծում** – *վրիպակազերծում*. հարմար է արևմտահայերեն ***վրիպակազերծում***-ը:
36. default - **լռությամբ ընդունվող, ենթադրյալ, չընտրովի, սեփական, ներքին** - *զանցառում, չգոյություն*. տերմինային այս զուգահեռ ձևերից և ոչ մեկը չի գործածվում, որովհետև հաջող չեն. թերևս արևմտահայերեն ***զանցառում-ը*** դիտարկվի համեմատաբար ընդունելի ձև:
37. delete key - **հեռացնել, վերացնել** – *ջնջաստեղ*. կան օրինակներ, երբ ընդունելի է միայն արևմտահայերենը. սա այդ դեպքերից է՝ ***ջնջաստեղ***:
38. digital command - **թվանշային, թվային** - *թուավարում*. նույնը այս զուգահեռներում է՝ ընդունելի է ***թվավարումը***:
39. digitize - **թվանշայնացնել, թվայնացնել** - *թուանշագրել*. այստեղ **թվայնացնել** արևելահայերեն տարբերակն է միակ գործածականը:
40. directory - **գրացուցակ (կատալոգ, դիրեկտորրիա), գրացուցակ** – *տոմսացուցակ*. արևմտահայերենի՝ **տոմս**-ով կազմված տերմինները, թեև բառարաններում հաջող տերմիններ են կերտում, սակայն մեր մտածողությանը խորթ են, չեն ընկալվում. կիրառելի են **դիրեկտորիա** և **գրացուցակ** տերմինները:

41. disk - **սկավառակ, պնակ** - *սկաւառակ.* ***սկավառակը*** արևելահայ իրականության մեջ այն բազմիմաստ բառերից է (ԱՀԲԲ, էջ 1309), որը սակայն չունի տեխնիկական այս սարքի իմաստը: Արևմտահայերենը անկախաբար ստեղծել է նույն բառը՝ այդպիսով մեկ ընդհանուր տերմինի հանգեցնելով:
42. disk operating system (D. O. S. ) - **սկավառակային օպերացիոն համակարգ, պնակային համակարգ** - *սկաւառակի վարիչ.* տերմինային այս համակարգում կան բազմանդամ այսպիսի կազմություններ, որոնք ճիշտ փոխանցումն են անգլերեն համարժեքի. ընդունվում և գործածական է **սկավառակային օպերացիոն համակարգ** արևելահայերեն տարբերակը:
43. desktop publishing (DTP) - **սեղանի հրատարակչական համակարգ, սեղանադիր հրատարակչություն** - *համակարգչային հրատարակութիւն.* այս օրինակում ընդունելի համարժեք է արևմտահայերեն տերմինը՝ ***համակարգչային հրատարակություն:***
44. dialog box - **երկխոսային վահան** - *զրուցատուփ.* նախորդ դեպքի նման արևմտահայերեն տերմինը՝ ***զրուցատուփ,*** լավագույնս արտացոլում է անգլերեն տերմինի իմաստը:
45. display (to) - **դիսփլեյ, ցուցասարք** - *ցուցադրել.* նախապատվությունը այս օրինակում տրվում է արևելահայերեն տերմինին՝ **ցուցասարք**, թեև այժմ այդ ոլորտում լայնորեն կիրառելի է **դիսփլեյ**-ը:
46. download - **ցանցում հեռավոր կոմպյուտերից տվյալների (ֆայլերի) ընթերցման գործընթաց, ներլցնել** - *հարանցել.* կան այսօրինակ դեպքեր էլ, երբ ոչ արևելահայերեն, ոչ էլ արևմտահայերեն տերմինները հաջող չեն. կամ վեցանդամ բաղադրություններ են, կամ էլ ոչ հարմար թարգմանություններ: Թերևս առաջարկելի է ***ներլցնել*** արևելահայերեն տարբերակը:

47. dot - matrix printer - **մատրիցային պրինտեր, կետացանցային տպիչ** - *աստղնատպիչ.* ընդունելի է կարճ՝ արևմտահայերենը՝ ***աստղնատպիչ***:
48. driver (printer) - **կառավարման սխեմա (պրինտերի դրայվեր), տպիչի սարքավարիչ** - *սկաւառակամղակ.* արևմտահայերեն տերմինը ամենահարմարն է ***սկավառակամղակ:***
49. edit (to) - խմբագրել - *բարեգրել.* արևելահայերեն խմբագրել տերմինը հանրության կողմից ընդունված և այս տերմինահամակարգում նորովի ընկալում ստացած (երբ ԷՀՄ-ի կողմից թարգմանվող տեքստը ենթարկվում է նախա- և հետ- խմբագրման՝ հարմարեցման, ճշտման) ու միակ կիրառելին է:
50. e -mail - էլեկտրոնային փոստ - *էլեկտրոնային թղթատար(ութիւն).* գործածական է էլեկտրոնային ***փոստ***-ը:
51. escape - ելք, փրկում, զերծում – *լքում. ելք*-ը այս շարքում միակ «ելքն» է:
52. errore message - հաղորդակցություն սխալի մասին - *վրիպազդ.* շատ տեղին ու իմաստի ճիշտ արտացոլումն է արևմտահայերեն վրիպազդ-ը: Պետք է դրան վարժվել, ինչպես մեր հանրությունը վարժվեց ազդ-ին (հայտարարության փոխարեն):
53. fax - ֆաքս – *հեռապատճէն.* երկուսն էլ հավասարապես գործածական են, սակայն ի վերջո կհաղթի արևմտահայերենը՝ հեռապատճենն:
54. field - դաշտ - դաշտ. կա երկու գրականների համընկնում:
55. file - ֆայլ, նշոց - *տոմսածրար.* ֆայլ-ը բազմիմաստ է, տոմսածրարը անհասկանալի, իսկ նշոցը՝ անընդունելի: Կիրառության մեջ է ֆայլը՝ իր՝ տարբեր դեպքերում տարբեր իմաստներով:
56. footer - էջատակ - *էջատակ.* երկու գրականների լիարժեք համընկնում:

57. floppy disk - դիսկետ (ճկուն սկավառակ) - *դիւրաթեք սկաւառակ.* արևմտահայերեն տերմինը ամենահաջողն է՝ դյուրաթեք սկավառակ:
58. format - ձևաչափ - *մասնաբաժին.* ընդունված է արևելահայերեն ձևաչափ տերմինը:
59. hard copy - թղթային պատճեն – *թղթօրինակ.* իսկ այս զույգում գերադասելի է թղթօրինակ արևմտահայերենը:
60. hard disk - **կոշտ սկավառակ, սկավառակասարք, վինչեստեր, կարծրապնակ** – *կարծր սկաւառակ.* վերջինս՝ արևմտահայերենը, ամենաընդունելի տերմինն է, թեև տարածված է **վինչեստեր** ձևը:
61. hard retum – ***նոր տող***[109]:
62. hard ware - **համակարգչի ապարատային միջոցներ** – *սարքակազմ.* վերջինս՝ արևմտահայերենը, հարմար է գործածության համար:
63. home - **ստեղն, տուն** - *գրուածի գլուխ.* այստեղ ևս արևմտահայերեն տերմինն է հաջողվածը՝ ***գրվածի գլուխ***, այսինքն՝ վերադարձ սկզբին:
64. hypertext - **գերտեքստ** - *գերբնագիր.* ընդունելի է հայերեն ճիշտ թարգմանված ***գերբնագիր***-ը:
65. header - **վերնագիր, նախափաթեթ** - *էջագլուխ.* ճիշտ են երկուսն էլ՝ և՛ ***վերնագիր***-ը և՛ ***էջագլուխ***-ը, սակայն ***վերնագիր***-ն է գործածվում:

---

[109] Կան դեպքեր, երբ օտար տերմինի դիմաց համարժեք ունի միայն արևմտահայերենը. օրինակ՝ hard retum – ***նոր տող*** , information processing – ***տեղեկավարում,*** protter - ***գծիչ,*** soft retum – **ինքնագործ տողափոխում** և այլն:

:

66. icon - **նիշ (պայմանական նշան)** – *պատկերակ.* արևմտահայերենը անգլերենի ճիշտ համարժեքն է, սակայն ինչպես և մի շարք այլ դեպքերում, այստեղ ևս կիրառական է դարձել արևելահայերենը՝ **նիշ**:
67. indent - **տողազլուխ** – *ներքնալուսանք թողուլ.* գործածական է արևելահայերեն **տողազլուխ**-ը:
68. insert mode - **ներդրման ռեժիմ, մտցնելու աշխատակերպ** – *ներմուծման եղանակ.* գերադասելի է արևմտահայերեն ***ներմուծման եղանակ*** տերմինը:
69. interactive - **ինտերակտիվ, փոխգործուն** – *միջգործօն.* երկու՝ **ինտերակտիվ** և ***միջգործոն*** տերմիններից մեզանում տարածված է առաջինը (թեև օտար տերմինի ճիշտ համարժեքը երկրորդն է՝ արևմտահայերենը):
70. information processing – *տեղեկավարում.* երբ օտար տերմինն ունի միայն արևմտահայերեն համարժեք, ընդունելի և հանձնարարելի է հենց այդ:
71. install - **ինստալյացիա, սահմանում (հաստատում, տեղակայում)** – *տեղադրել.* արևելահայերենում և արևմտահայերենում գոյություն ունեցող շուրջ հինգ համարժեքներ ունենալով՝ գործածական է պատճենվածը՝ **ինստալյացիա.** առաջարկում ենք **տեղակայում**-ը (արևելահ.) կամ ***տեղադրել***-ը (արևմտահ.):
72. interface – **ինտերֆեյս** - *միջերեսակ.* ըստ սովորության՝ դեռ գործածական է օտար տերմինը՝ ունենալով հանդերձ **միջերեսակ** արևմտահայերենը:
73. interpreter - **մեկնաբանիչ** – *մեկնիչ.* հանձնարարելի է ***մեկնիչ***-ը:
74. key - **բանալի, *ստեղն*** – *ստեղ.* երեք տարբեր բառարաններում ունենալով նույն՝ **ստեղն** համարժեքը՝ կիրառական է **բանալին**:
75. keyboard - **ստեղնաշար** – *ստեղնաշար.* երկու գրականներում ընդունված միակ տերմինը՝ ***ստեղնաշար:***

76. laser printer - **լազերային պրինտեր, լազերային տպիչ** – *լազե-րատպիչ.* վերջինս նաև բառակազմական ճիշտ համարժեքն է:
77. load - **տվյալների բեռնում,** ***բեռնվածություն*** – *հարանցում.* այստեղ ընդունելի է **տվյալների բեռնում** տերմինը, թեև բա-ռակապակցություն է, բայց իմաստը լիարժեք է փոխանցում:
78. mainframe - **մեծ ԷՀՄ, խոշոր համակարգիչ** - *գլխավոր համա-կարգիչ.* այս պարագայում խոսքը **գլխավոր**, կամ **մայր**՝ հիմ-նական համակարգչի մասին է, ուստի պետք է գործածության մեջ մտցնել ***գլխավոր համակարգիչ*** արևմտահայերեն տերմինը:
79. memory - **հիշողություն, հիշող սարք, հիշողություն** – *հիշո-ղություն.* բոլոր տարբերակներից նախընտրելի է **հիշողու-թյուն**-ը:
80. macro (command) - **մակրոհրաման,** ***մակրոկոդ*** – *համահրա-հանգ.* **մակրո-, միկրո-, մինի-** կազմիչներով բաղադրյալ տեր-միններում (ինչպես այս, այնպես էլ մյուս տերմինահամակար-գերում) բախվում ենք անմիօրինակության հետ. մի դեպքում ճիշտ է տերմինը կազմել կիսապատճենմամբ՝ մակրոհրաման, միկրոհամակարգիչ, մինիհամակարգիչ և այլն, մյուս դեպքում, ինչպես արևմտահայերենն է անում, ամբողջական թարգ-մանությամբ՝ *համահրահանգ, մանրակարգիչ, փոքրակարգիչ:* Իհարկե, մեր իրականության մեջ ընդունելի են առաջին՝ կիսա-պատճենումներով տերմինները:
81. maximize - **փռված, ընդարձակել, բացել –** *մեծցընել.* ճիշտ է **ընդարձակել**-ը:
82. menu (bar) - **մենյու, ընտրացանկ** – *ընտրացանկ.* այստեղ կա երկուսի համար համար ընդհանուր՝ ***ընտրացանկ***-*ը*:
83. minimize - **սեղմված, նվազագույնի հասցնել** - *փոքրացնել.* հանձնարարելին արևմտահայերենն է՝ ***փոքրացնել:***

84. microcomputer - **միկրոկոմպյուտեր,** ***մանրահամակարգիչ*** – *մանրակարգիչ.* այս և հաջորդ երկու դեպքերում տարածված են կիսապատճենումները, սակայն մենք հակված ենք արևմտահայերեն տարբերակներին:
85. microprocessor - **միկրոպրոցեսոր, մանրամշակիչ** – *մանրավարիչ* (այս և հաջորդ օրինակների մասին խոսվել է. տե՛ս օրինակ 80-ի մեկնաբանությունը):
86. minicomputer - **մինիկոմպյուտեր, մինիհամակարգիչ** – *փոքրակարգիչ:*
87. modem - **մոդեմ** - *եղանակիչ.* վերջին՝ արևմտահայերեն համարժեքը, դեռ գործածության մեջ չի մտել:
88. module - **մոդուլ, հանգույց** – *միաւոր.* որևէ մեկը հաջող չէ, ուստի կիրառվում է օտար **մոդուլ** տերմինը:
89. mother board - **մայրական քարտ, հիմնահարթակ** – *մայր քարտ.* միակ ընդունելին արևմտահայերենի ***մայր քարտ*** տերմինն է:
90. mouse - **մկնիկ** - *մկնիկ.* այս տերմինն աստիճանաբար դառնում է ժամանակավրեպ:
91. mouse pad - **մկնիկի գորգիկ** - *մկնակալ.* վերն ասվածը վերաբերում է ***մկնակալ***-ին:
92. monitor - **մոնիտոր, ցուցասարք** – *ցուցանակ, ցուցան.* կիրառելի է **մոնիտորը**, թեև շատ հաջող է դարձյալ արևելահայերեն՝ **ցուցասարք**-ը:
93. netword - **կոմպյուտերային ցանց** – *հաղորդացանց.* շատ ընդունելի և հաջողված է արևմտահայերեն տերմինը՝ ***հաղորդացանց:***
94. off - line - **ավտոնոմ, ցանցից դուրս, արտացանցային** – *անջատված.* արևմտահայերենը ստեղծել է պարզ՝ ***անջատված***, նաև հաջորդ օրինակում՝ **կցված** համարժեքները:
95. on – line - **ակտիվ վիճակ** – *կցուած.*

96. overwrite - **վերագրանցել, վերագրանցել** – *կրկնագրել.* **վերա-** նախածանցի հետ միշտ խնդիրներ են ստեղծվում՝ **վերա**՝ նորից, թե՝ կրկին. այս պարագայում արևմտահայերենը նման խնդիր չունի՝ մի անգամ ևս՝ **կրկին** ենք գրանցում՝ ***կրկնագրել***:

97. option - **օպցիա, ընտրանք** – *ընտրանք.* պետք է ընդունվի ընդհանուրը՝ ***ընտրանք:***

98. password - **նշանաբառ, գաղտնաբառ** – *ծածկաբառ.* արդեն կիրառության մեջ է ***ծածկաբառ***-ը:

99. path - **մուտքի իրավունքի ուղի, ուղի** – *ուղի.* պարզ և հարմար՝՝ ***ուղի:***

100. page break - **էջի վերջը, էջատման կետ** - *էջամոյծ.* նախընտրելի է արևելահայերեն **էջի վերջ**-ը ձևը:

101. page down - **ստեղն PC ստեղնաշարի վրա, էջով դեպի ներքև ստեղն** – *յաջորդ էջ.* համաձնարարելի է ***հաջորդ էջ***-ը*:*

102. page setup - **էջի պարամետրեր, էջակայում** - *էջադրում.* ընդունված է՝ ***էջադրում***-ը:

103. page up - **ստեղն PC –ի ստեղնաշարի վրա** - *նախորդ էջ.* 101-րդ օրինակի համաբանությամբ՝ ընդունելի է արևմտահայերեն ***նախորդ էջ*** -ը:

104. personal computer - **անձնական օգտագործման կոմպյուտեր, անհատական համակարգիչ –** *մանրակարգիչ.* վերջինս չի գործածվում. կիրառվում են արևելահայերեն բառակապակցությունները:

105. Protter - **գծիչ.** այստեղ էլ չունենք արևմտահայերեն համարժեք, **ուստի** գործածվում է եղած միակը:

106. Printer - **պրինտեր, տպագրող սարք, տպիչ -** *տպիչ.* կիրառական է ընդհանուր ***տպիչ***-*ը*:

107. printout - **տպված էջ** - *տպօրինակ, տպօն.* ***տպված էջ***-ը օտար տերմինի ճիշտ արտացոլումն է:

108. processor - **պրոցեսոր, մշակիչ** - *համավարիչ.* գործածականը **պրոցեսոր** տերմինն է:

109. program(me) - **ծրագիր** – *յայտագիր, ծրագիր.* ընդունված տարբերակն է՝ արևելահայերեն **ծրագիր**-ը:

110. programming - **ծրագրավորում** – *յայտագրում, ծրագրում.* ծրագրում և ծրագրավորում զույգը տարբեր իմաստների կրողներ են, որոնցից «ԷՀՄ համար ծրագրավորել» իմաստը ԱՀԲԲ -ում չկա (տե՛ս էջ 662): Մեզանում գործածական է ճիշտը՝ **ծրագրավորում**-ը*:*

111. pixel - **փիքսել, պատկերման տարր, կետիկ** – *նկարատարր.* շատ հաջող է արևմտահայերենի ***նկարատարր*** տերմինը, որը սակայն չի գործածվում:

112. preferences - **նախապատվություններ** – *նախընտրանք.* սա ևս նախընտրելի է:

113. promt - **հրավեր, հուշվածք** – *հարցաշար.* նույնը այս դեպքում՝ արևմտահայերեն տերմինը ճիշտն է:

114. random access memory - **հիշողության սարքին դիմելու հնարավորություն, դիպվածային մատչում հիշողության տեղամասերին** - *հարամատոյց յիշողութիւն.* **հիշողության սարքին դիմելու հնարավորություն** բառակապակցությունը ստույգ արտահայտիչն է օտար տերմինի:

115. reboot - **վերաբեռնում, վերագործարկում** – *վերամեկնարկել.* ընդունելի է վերջինս՝ արևմտահայերենը:

116. record - **գրանցում, գրառում** – *տեղեկատոմս.* **տոմս** բաղադրիչով այս արևմտահայերեն տերմինը ևս չի ընկալվում, ուստի գործածական է **գրառում**-ը:

117. retrieve - **որոնում, փնտրում, գտնել, առբերել** – *(վեր) ստանալ.* **որոնում**-ն է ընդունելի և հանձնարարելի:

118. right justified - **տողաշտկել աջ** - *աջէն շտկուած.*ճիշտ է ***աջէն շտկուած***-ի արևելահայերեն տարբերակը՝ ***աջից շտկված:***

119. routine - **ծրագիր, հրամանաշար** – *սովորական ծրագիր.* վերջինս՝ արևմտահայերենը, պետք է գործածության մեջ դնել:

120. run (program) - **միապատիկ անցում** - *բանեցնել.* ոչ մեկը հաջող չէ. արևմտահայերենը չի «աշխատում», չի կիրառվում նաև օտար տերմինը:

121. save (to) –**պահպանել** - *յիշագրել.* նախընտրելի է ***հի-շագրել***-ը:

122. scanner - **տեսածրիչ, ծրիչ** – *թվանշագրիչ.* բերվածներից ընդունելի է ***թվանշագրիչ***-ը, որին պետք է ընտելանալ. իսկ առայժմ գործածում ենք անգլերենը:

123. screen –**էկրան** – *պաստառիկ.* արևելահայերենում դեռ գործածական է էկրան – ը:

124. scroll – **անցավազք, ոլորել** – *սահեցնել.* վերջինս կարելի է հանձնարարել:

125. segment – **մաս** – *հատուած.* այս և նախորդ երկու օրի-նակներում ընդունելին արևմտահայերենն է:

126. select - **ընտրել** - *լուսաշեշտել.* **ընտրել**-ը այս դեպքում հասկանալի և ընդունելի է:

127. server - **սերվեր (սպասարկումն իրականացնող), սպա-սարկիչ** - *սպասարկիչ.* անշուշտ սերվերը ***սպասարկիչն*** է, սակայն առայժմ գործածում ենք **սերվերը**:

128. session - **սեանս, աշխատաշրջան** - *նիստ.* որևէ մեկն էլ ընդունելի չէ. կիրառում են **աշխատաշրջան**-ը:

129. sign - **նշան** - *տառանիշ.* ճիշտ է վերջինը՝ արև-մտահայերենը:

130. slash - **պայմանանշան, գծիկ, նշան** - *շեղագիծ.* վերջինս միակ ճիշտ թարգմանությունն է:

131. shareware - **պայմանական ձրի (կիսաձրի) ծրագիր** – *բաժնեկցուող յայտագրաշար / ծրագրաշար.* ո՛չ արևելահայերենը, ո՛չ էլ արևմտահայերենը հաջողված տերմիններ չեն. ուղղակի օտար բառի գործառույթի թարգմանությունն են:

132. soft retum - *ինքնագործ տողափոխում.* ունենք միակ համարժեքը՝ արևմտահայերենը:

133. spread sheet – **էլեկտրոնային աղյուսակ, հաշվաթերթ** – *ցուցակարգիչ.* որևէ մեկը չի ընդունվում.

134. status bar – **վիճակի տող, աշխատավիճակի շերտ** – *կացութեան երիզ.* նախորդ օրինակի նման, այս դեպքում էլ որևէ մեկը չի ընդունվում.

135. soft ware – **ծրագրային ապահովում, ծրագրակազմ** – *յայտագրաշար, ծրագրաշար.* ընդունված է **ծրագրային ապահովում** արևելահայերեն տերմինը:

136. sorting – **տեսակավորում, տեսակավորել** - *դասաւորում.* արևելահայերեն **տեսակավորում** -ն է կիրառելի:

137. space – **տարածություն, բացատ** – *միջոց.* **բացատ**-ը նախընտրելի է:

138. standard – **ստանդարտ, չափօրինակ** – *հիմնօրինակ.* ***հիմնօրինակ*** արևմտահայերեն տարբերակն նախընտրելին է:

139. statement – **դրույթ** – *հրահանգ.* հրահանգը, որպես հրամանի հոմանիշ, արդեն մեկ այլ դեպքի համար գործածվել է, ուստի այստեղ պիտի **դրույթ**-ն ընդունվի:

140. subdirectoty - **ենթագրացուցակ** - *ենթատոմսացուցակ.* ընդունելին **ենթագրացուցակ**-ն է:

141. subfile – **ենթանշոց** - *ենթատոմսածրար.* **ենթանշոց**-ը նախընտրելի է:

142. symbol – **պայմանանշան, նշան** – *խորհրդանիշ.* այս դեպքում բոլոր տարբերակներից ամենաճիշտը արևմտահայե-

րենում նշված ***խորհրդանիշն*** է, որը ԱՀԲԲ -ում նույն իմաստով արձանագրված է (տե՛ս էջ 605):

143. system – **համակարգ(ային)** - *դրություն, համակարգ.* ***համակարգ***-ը ընդհանուր է երկու գրականների համար:

144. terminal – **տերմինալ, ներմուծման / արտածման հեռավոր սարք, վերջնասարք** – *ծայրակայան.* վերջինը նախընտրելի է:

145. tab – **աղյուսակավորման ստեղն, սյունատել** – *ցուցակաստեղն.* վերջինը նախընտրելի է:

146. template - **ձևանմուշ, տրաֆարետ** - *կաղապար.* վերջինը՝ արևմտահայերենը, արտացոլում է արևելահայերեն երկու տերմինների իմաստը:

147. tile – **խճանկարային պատկերման տարր, կցաշարել** – *հարակից ցուցադրում.* վերջինը ընդունելի է:

148. time sharing – **ժամանակի բաժանում, ժամանակային համօգտագործում** – *ժամանակի բաժնեկցում.* արևմտահայերենը՝ *ժամանակի բաժնեկցում,* շատ հաջող տարբերակ է:

149. totally justified – *ամբողջովին շտկուած.* այս դեպքում ևս ունենք արևմտահայերենի միակ ու հաջողված թարգմանություն:

150. undelete – **ետարկել ջնջումը, ետջնջել** – *վերահաստատել.* վերջինն է միակ ճիշտ տարբերակը:

151. undo – **գործողության վերացում, արգելում, ետարկել** – *վերականգնել.* այս և հաջորդ չորս դեպքերում հանձնարարելի է արևմտահայերեն տերմինը (բերվում են շեղագրերով):

152. virus – **կոմպյուտերային վիրուս**– *մանրէ:*

153. wild card – ***դերանշան*** - *անորոշ տառանիշ:*

154. wordwrap – **տեքստի բառերի տեղավորում** – *տողափոխում:*

155. workstation - **աշխատանքային կայան, աշխատակայան** - *աշխատակայան:*

Այսպիսով, այս տերմինահամակարգի զուգադիր քննությունից կարելի է եզրակացնել, որ՝

1. տարբեր բառարաններից քաղված՝ արևելահայերեն - արևմտահայերեն զուգահեռ օրինակներում շատ դեպքերում արևմտահայերեն տերմիններն ավելի հաջողված են.

2. մի շարք դեպքերում օտար տերմինի դիմաց միայն արևմտահայերենն ուներ համարժեք.

3. արևելահայերենի ընդունված մի շարք տերմինների դիմաց, մեր խորին համոզմամբ, ապագայում կարելի է գործածել արևմտահայերենի ձևերը:

Հարկ ենք համարում դիտարկել նաև ոչ նորագույն մեկ տերմինային համակարգ՝ իրավաբանականը, և այս պարագայում փոքր - ինչ այլ բնույթ է կրում հետազոտությունը: «Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնէն ի վեր,- կարդում ենք «Ուղեցոյց Դ»-ի առաջաբանում,- պետականութեան կայացման գործընթացին բիւր խնդիրներուն կողքին, իրաւական, օրէնսդրական, արդարադատութեան մարզին առընչուող լիակատար բառապաշար ունենալը այսօր դարձած է անհրաժեշտութիւն»[110]:

Այդ ոլորտի տերմինները արևմտահայերենում հիմնականում ֆրանսիական, նաև անգլիական իրավական համակարգերից են քաղված, ուստի իրավական դաշտին պատկանող ամենաէական ու կարևոր տերմինների մեծ մասը արդեն գոյություն ունի ու գործածական է հայերենում. ֆրանսերեն – հայերեն իրավաբանական բառացանկը բաղկացած է

[110] Ուղեցույց Դ, էջ 7 – 9:

711 տերմիններից, իսկ անգլերեն – հայերենը՝ 614-ից: Քանակական այս տարբերությունը բացատրվում է ֆրանսիական և ամերիկյան - անգլիական իրավական օրենսդրությունների տարբերություններով:

Արևմտահայ իրականության մեջ գոյություն չունեցող նոր գաղափարները արտահայտված են հիմնականում պատճենման ճանապարհով ձևավորված տերմիններով. օրինակ՝ **carte de séjour** - բնակելու արտօնագիր, **contre accusation** – հակամբաստանութիւն, **guasi - delit** - ակամայ իրաւախախտում, նաև բառակապակցություններով, ինչպես՝ **blanchiment** - հարկախոյս դրամներու յուրացում, **usufruitier** - այլապատկան կալուածէ եկամուտ ունեցող, **avenant** - վճռի յաւելուած և այլն:

Սակայն դիտարկելով ընդամենը երկու տասնյակ տերմիններ (որոնք ընտրել ենք Ուղեցույցներից, և որոնցից շատերն ունեն հոմանիշներ, որոնք լավագույնի ընտրության հնարավորություն են ընձեռում)՝ գալիս ենք այն եզրահանգման, որ դրանք հիմնականում ընդգրկված են ԱՀԲԲ -ում՝ մանրամասն բացատրություններով, հաճախ նաև առանց **իրավ**. նշումի. օրինակ, **ջնջում, վերացում**, կամ **մեղսակից, գործակից և սննդային թոշակ, ալիմենտ** զույգերի դեպքումabatement of action – **հայցի կարճում**

1. abjuration - **երդմնազանցութիւն,** առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 339)
2. abolition – **ջնջում, վերացում**
3. accomplice – **մեղսակից, գործակից**
4. accuse (to) - **ամբաստանել, մեղադրել.** արևելահայերենում երկուսն էլ կիրառվում են **իրավ.** նշումով (ԱՀԲԲ, էջ 30)
5. adjudication – **վճիռ, որոշում, իրավ.** նշումով (ԱՀԲԲ, էջ 1150)
6. advocate - **դատապաշտպան, իրավ.** նշումով (ԱՀԲԲ, էջ 280)

7. alimony – **սննդային թոշակ, ալիմենտ,** առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 10)
8. amnesty – **ներում, համաներում, իրավ.** նշումով (ԱՀԲԲ, էջ 1069)
9. appeal - **վճռաբեկ զանգատ, բողոքարկում,** առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 200)
10. appellant - **բողոքարկու, իրավ.** նշումով (ԱՀԲԲ, էջ 200)
11. arrest – **ձերբակալութիւն, կալանք,** առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 922)
12. assign – **օրինական ժառանգորդ,** առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 477)
13. attorney - **փաստաբան, իրաւաբան,** առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 507)
14. bail - **երաշխավճար,** չկա ԱՀԲԲ-ում
15. bail out (to) - **երաշխավճարով ազատել,** չկա ԱՀԲԲ-ում
16. bankrupty – **սնանկություն,** առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 1314)
17. beneficiaey – **նպաստառու,** առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 1083)
18. brach - **բեկում, խափանում,** չկա ԱՀԲԲ-ում
19. bring action against (to) - **դատ բանալ, հայց ներկայացնել**
20. cap - **փաստաբանի անեզր գլխարկ,** չկա ԱՀԲԲ-ում
21. case – **հայց, դատ, գործ, իրավ.** նշումով (ԱՀԲԲ, էջ 815)
22. case on appeal – **վճռաբեկ դատ, վճռաբեկման ներկայացրած գործ,** առանց **իրավ.** նշումի (ԱՀԲԲ, էջ 200)

Բերված բոլոր տերմինները արևմտահայերենում ընդգրկված են իրավաբանական եզրերի ցանկում. դրանք, ի տարբերություն նախորդ տերմինահամակարգի, վկայված են նաև արևելահայերենի իրավաբանական մասնագիտական բառարաններում, քանի որ նորագույններից չեն և անխտիր գոյու-

թյուն ունեն արևելահայերենում (շատերը նաև ԱՀԲԲ-ում, երբեմն առանց իրավ. նշումի, քանի որ այդ բառերի մեծ մասը նաև ընդհանուր գործածական են), իսկ նորամուտ հասկացությունները հաջողությամբ թարգմանվում են:

Անշուշտ, արևմտահայերեն տերմինները, այլև ողջ բառապաշարը, արևելահայերենի շտեմարանն ու գանձն են, որոնց նաև դիմում ենք նոր տերմինների համարժեքներ ստեղծելիս:

Մասնագիտական տերմիններ օգտագործելը պիտի սատարի արևմտահայ և արևելահայ տարբերակների լեզվական փոխազդեցության կարևոր գործընթացին, այլև երկու ճյուղերով հաղորդակցվողների փոխհասկացողությանը (նաև մասնագիտական ոլորտներում):

# ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՒ ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Գրական արևմտահայերենի ուսումնասիրմանը նվիրված աշխատությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի. տեսական ուսումնասիրություններ, որոնցում քննվում են արևմտահայերենի ձևավորման հարցերը, նկարագրվում են հոլովման և խոնարհման համակարգերը, բառապաշարի առանձնահատկությունները[111], և գործնական աշխատանքներ՝ տարբեր տիպի բառարաններ[112] ու դասագրքեր[113]:

---

[111] **Աճառյան Հ.**, *Հայոց լեզվի պատմություն*, մ.2, Ե., 1951**, նույնի**՝ *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 1-6, Ե., 1952-1971, **Աճեմյան Վ. Լ.**, *Գրական արևմտահայերենի ձևավորումը*, Ե., 1971, **Այտընեան Ա.**, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Վիեննա, 1866, **Ավետիսյան Յու.**, *Արևմտահայ բանաստեղծության լեզուն*, Ե., 2012, **Ղուկասյան Ս.**, *Գրական արևելահայերենի և արևմտահայերենի հնչերանգային առանձնահատկությունները*, Ե., 1990, **Շահբազյան Տ. Ս.**, *Արևմտահայ աշխարհաբարի առաջացումը*, Ե., 1963, **Ջահուկյան Գ. Բ.**, *Հայոց լեզվի զարգացման փուլերը*, Ե., 1964, **նույնի**՝ *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, **Սարգսյան Ա. Ե.,** *Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ*, Ե., 1985, **Ռ. Սաքապետոյան**, *Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները (զուգադրական քննություն)*, Ե., 2004, **Քոսյան Վ. Ա.**, *Արևմտահայերենի բառակապակցությունները* Ե., 1986:

[112] **Յ. Թ. Գայաեան (Մխիթար Պոնտացի)**, *Բառարան-գանձարան հայերէն լեզուի,*, Գահիրէ, 1938: **Անդրանիկ վրդ. Կռանեան**, *Բառգիրք հայերէն լեզուի*, Շիրակ հրատարակչատուն, Պէյրութ, 1998, **Ա. Ե. Սարգսյան**, *Արևմտահայերենի բառարան*, Ե., 1991, **Ռ. Սաքապետոյան**,*Արևմտահայերեն-արևելահայերեն ուղղախոսական- բացատ-*

Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհրդի «Ուղեցոյց» -ի առաջաբանում Ռ. Տեր-Մերկերյանը գրում է. «Աշխարհաբարի արեւմտահայ եւ արեւելահայ տարբերակներուն փոխադարձ յարաբերակցութեանց առնչուող հարցերը այսօր առաջնահերթ են: Վերջին տարիներու ընթացքին, յատկապէս Հայաստանի անկախութիւնէն ի վեր, նոր սերտ կապեր յառաջացած են երկու ճիւղերու հաղորդակցողներու միջեւ:

Ստեղծուած են լեզուական աւելի կանոնաւոր ու տեւական շփումներու համար նպաստաւոր պայմաններ, որոնց արդիւնքը լեզուական փոխազդեցութիւններն են: Այս նոր երեւոյթի հետեւանքները այսօր շօշափելի են առանձնապէս բառապաշարի մարզին մէջ»[114]:

Սույն հոդվածում դիտարկված է մի շարք դասագրքերում, ձեռնարկներում, աշխատանքային տետրերում ամփոփված նյութը[115]:

---

*բական բառարան*, Ե., 2000, *Արևմտահայ աշխարհաբարի եզրաբանական խորհուրդ, «Ուղեցոյց»*, պրակ Ա-Դ, Մարսել, 1998-2002:

[113] **Գալստյան Ս. Ա.**, *Հայոց լեզու.*, Ե., 1968, **Գալստյան Ս. Ա.**, **Գարեգինյան Գ. Լ.**, *Հայերենի զրուցարան*, Ե., 1990: Դասագրքերի ընդարձակ ցանկը տրվում է հետագա շարադրանքում՝ լեզվաբանական տերմինների վերլուծության ընթացքում:

[114] Ուղեցոյց, պրակ Գ., էջ 10:

[115] **Կարօ Առաքելեան**, **Աղաւնի Ֆըստըգճեան**, *Դիւրին հայերէն*, 1, Ա. մաս, Պէյրութ, 2011(Գ. հրատարակութիւն՝ բարեփոխուած), **նույն հեղինակների**՝ *Դիւրին հայերէն*, Բ. մաս (Բ. հրատարակութիւն), Պէյրութ, 2007, **նույն հեղինակների**՝ *Դիւրին հայերէն*, 2, Պէյրութ, (Բ. հրատ.՝ բարեփոխուած), **Յ. Քիւրքճեան, Մ. Գալայճեան- Քիւրքճեան**. միջնակարգի *«Հայրենի աղբիւր»* շարք, *աշխատանքի տետրակ 1*. Ա. կարգ, *աշխատանքի տետրակ 2*, Բ. կարգ, *աշխատանքի տետրակ*, պատրաստական կարգ (հրատ. տեղ և թվական չի նշվում. նշվում է՝ «արգիլված է *«Հայրենի աղբիւր»* դասագիրքերու եւ աշխատանքի

Լեզվաբանական տերմինաբանության գործածության տեսակետից քննել ենք նաև մի շարք այլ աշխատություններ[116]:

Նշենք նաև Ս. Աբրահամյանի, Պ. Բեդիրյանի, Գ. Գալըստյանի, Ս. Գալստյանի, Ռ. Սաքապետոյանի, Յու. Ավետիսյանի, Ա. Եղիայանի, Է. Տասնապետյանի, Հ. Չոլաքյանի, Մ. Գոճայանի դասագրքերն ու գործնական աշխատանքների ձեռնարկները, որոնցով հայերեն են սովորել և սովորում են աշխարհի չորս ծագերում ապրող հազարավոր հայորդիներ:

---

տետրակներու որեւէ գործածութիւն պատճէնահանում-բազմացումով, նոյնիսկ մասնակի»):

[116]**Յովհ. Գազանճեան**, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, պատկերազարդ տարրական դասընթացք, Կ. Պոլիս (այսուհետև՝ Յ Գ-1), **Յովհ. Գազանճեան**, *Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի*, պատկերազարդ միջին դասընթացք, Անթիլիաս-Լիբանան, 1980 (այսուհետև՝ Յ Գ-2), **Զարեհ Մելքոնեան**, *Գործնական քերականութիւն արդի հայերէն լեզուի*, Պէյրութ, 1966 (այսուհետև՝ ԶՄ), **Յ. Քիւրքճեան**, *Նոր քերականութիւն հայերէն լեզուի (արեւմտահայերէն)*, միջն. բաժինի Ա. տարի, «Հայկ. հրատարակչական», Աթենք-1989 (այսուհետև՝ Ք-1), **Յ. Քիւրքճեան**, *Նոր քերականութիւն հայերէն լեզուի (արեւմտահայերէն)*, Միջն. բաժինի Բ. տարի, «Հայկ. հրատարակչական», Աթենք-1989 (այսուհետև՝ Ք-2), **Յ. Քիւրքճեան**, *Նոր քերականութիւն հայերէն լեզուի (արեւմտահայերէն)*, Միջն. բաժինի Գ. տարի, «Հայկ. հրատարակչական», Աթենք-1989 (այսուհետև՝ Ք-3), **Մ. Մկրտիչեան**, *Քերականութեան դասեր*, Բ. գրքի (նախակրթարանի Ե-Զ կարգերում, Բ. տպագրութիւն, Հալէպ, 1962, տպ. ԱՐԵՒԵԼՔ (այսուհետև՝ Մ-1), **Մ. Մկրտիչեան**, *Քերականութեան դասեր*, Գ. Գիրք, Հալեպ, 1995 (այսուհետև՝ Մ-2):

8. **Հիլտա Գալֆայեան-Փանոսեան**, Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ, ԵՊՀ հրատ., Ե., 2009, էջ 129:

Դիտարկենք արևմտահայերենի դասագրքերում գործածվող մի շարք տերմիններ՝ դրանք ներկայացնելով բնագրային օրինակներով:

*Ստորոգիչ.* գործածվում է «ստորոգյալ» իմաստով: Այսպես՝ «Ենթական և ստորոգիչը նախադասության գլխավոր անդամներն են»:

«Ստորոգիչը կը պատասխանէ ի՞նչ կը՛նէ, ի՞նչ կ՛ըլլայ, ի՞նչ է, ո՞վ է, ի՞նչպես է, ի՞նչ պիտի ընէ, ի՞նչ պիտի ըլլայ…. հարցումներուն»:

«Եթէ ստորոգիչը ցույց տայ ներկայ ժամանակ, հարցումը ներկայ ժամանակով կը տրուի» [117]:

Հ. Գալֆայան - Փանոյանի «Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ» աշխատանքում տրվում է հետևյալ հիշեցումը (ծանոթագրությունը). «Արեւմտահայերէնի աւանդական քերականութեան մէջ օգտագործվող «բայ» կամ «ստորոգիչ» բառեզրերը համապատասխանում են հայաստանեան «ստորոգեալ» բառեզրին»[118] : Ի դեպ, նշենք, որ բայ կամ ստորոգիչ գրելիս հեղինակը շփոթում է բառային և շարահյուսական մակարդակները:

Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանի» հայերեն տերմինների բառացանկում *ստորոգիչ* տերմինը բացակայում է: Այն առկա չէ նաև Ա. Նազարյանի «Լեզվաբանական տերմինների ֆրանսերեն- ռուսերեն-հայերեն ուսումնական բառարանի» հայերեն տերմինացանկում:

---

[117] Կ.Առաքելեան, Ա. Ֆըստըգճեան, նշվ. աշխ., էջ 13:

[118] Հ. Գալֆայան – Փանոյան, Արեւմտահայ գրական լեզուի ուսումնական ձեռնարկ, Ե., ԵՊՀ հրատ., 2009, էջ 129:

Հ. Զ. Պետրոսյանի, Ս.Ա. Գալստյանի, Թ.Ա.Ղարագյուլյանի «Լեզվաբանական բառարանում», որում ընդգրկված են մինչև 1962թ. նյութերը, ևս *ստորոգիչ* տերմինը առկա չէ[119]:

«Շարահյուսական ուսումնասիրություններ» աշխատության մեջ Գ. Ջահուկյանը *ստորոգիչ* տերմինը գործածում է «հանգույց» նշանակությամբ: ««Հակոբը աշակերտ է» նախադասության մեջ է ստորոգիչի (հանգույցի) միջոցով հարաբերություն է հաստատվում լեզվականորեն արտահայտված *Հակոբը* ենթակայի և *աշակերտ* ստորոգելիի միջև» [120]:

Արևմտահայերենի դասագրքերում *գաղտնավանկի ը* գաղափարը նշվում է *սուղ ը* արտահայտությամբ: Այսպես՝ «Յաճախ վանկի մը մէջ ը հնչիւնը կը կոչուի *սուղ ը*: Վանկատումի ժամանակ, սակայն, այդ *սուղ ը*-ն ի յայտ կու գայ, այսինքն՝ կը գրուի: Օրինակ՝ ժը-պիտ, սըխ-տոր:

*Սուղ ը* ունեցող վանկը կը կոչուի սուղ վանկ»[121] :

«Լեզվաբանական բառարանում» նշվում է, որ գաղտնավանկը անվանվել է նաև *կես վանկ, սուղ վանկ, ծածուկ վանկ, կիսավանկ, կարճ վանկ* (ԼԲ,էջ 71):

*Սուղ վանկ* տերմինը առկա է նաև Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանում» (այսուհետև՝ ՀԲ). «Ըստ հնչեղության կամ լիահնչության զանազանում են՝ լիահունչ վանկ և ոչ լիահունչ վանկ կամ գաղտնավանկ (նաև՝ սուղ վանկ) (ՀԲ, էջ 555):

---

[119] Հ. Զ. Պետրոսյան, Ս.Ա. Գալստյան, Թ.Ա.Ղարագյուլյան, Լեզվաբանական բառարան (այսուհետև՝ ԼԲ)., Ե., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1975

[120] Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Ե., 2003, էջ 28:

[121] Կ. Առաքելեան, Ա.Ֆըստըգճեան, նշվ. աշխ., էջ 79:

Կ.Առաքելյանի և Ա. Ֆրստրզճյանի նշված դասագրքի Բ մասում կարդում ենք. «Խոսքի մասերը կ'ըլլան փոփոխուող եւ անփոփոխ» (էջ 51): «Անփոփոխ խոսքի մասերն են՝ածական-ները, թուականները, մակբայները, կապերը, շաղկապները, վերաբերականները եւ ձայնարկութիւնները» (էջ 52):

Արևելահայերենի քերականություններում գործածվում են *թեքվող* և *չթեքվող խոսքի մասեր* տերմինները[122]:

Նշենք, որ Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարա-նում» այդ տերմինը առկա է[123]:

Գլխագիր.- «Հասարակ անուններէն տարբերելու համար յա-տուկ անուններուն առաջին տառը գլխագիր (մեծատառ) կը գրուի»: (Կ. Առաքելեան, Ա. Ֆրստրզճեան, Դիւրին հայերէն, 1, Բ.մաս):

Հավելենք, որ արևելահայերեն որոշ տեքստերում (գիտա-ժողովի հայտարարություններ, ազդագրեր) նկատել ենք *մեծա-տառ* տերմինի փոխարեն *գլխագիր (գլխատառ)* տերմինի գործառության դեպքեր:

Յ. Քիւրքճեանի «Նոր քերականութիւն հայերէն լեզուի (ա-րևւմտահայերէն)» դասագրքում (Աթէնք, 1989) առկա է նաև *մանրագիր* տերմինը: «Շաբթուան օրերուն, տարուան ամիս-ներուն,լեզուներու եւ տուեալ ազգի մը պատկանող անհատ-ներու անունը (հայ, վրացի….)- հատկապէս յոգնակիի պարա-

122 Ս.Գ.Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակա-կից հայերենում, Ե., 1965:

123 Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., «Հայաստան», 1987, էջ 287:

գային, նախընտրելի է նկատել հասարակ գոյական եւ սկսիլ մանրագիրով» (Յ.Քիւրքճեան, նշվ, աշխ., էջ 23):

Խոսքի մասերի ուսուցման ժամանակ Կ.Առաքելյանի և Ա. Ֆըստըրգճյանի դասագրքում գործածվում են *զարտուղի բայեր*, *զարտուղի խոնարհում* տերմինները: «Զարտուղի խոնարհում ունին այն բայերը, որոնց արմատները խոնարհումի ատեն կը մնան անփոփոխ, բայց վերջաւորութիւնները անցեալ կատարեալ, յարակատար ներկայ, յարակատար անցեալ, վաղակատար անցեալ եւ հրամայական եղանակ ներկա ժամանակներուն մէջ չեն հետեւիր իրենց տիպար ձեւերուն» (էջ 156): *Զարտուղի բայերն են*՝ գտնել, իջնել, հեծնել, մտնել, տեսնել, առնել, խածնել, թքնել, ելլել, բերել, հարցնել, ցուցնել, լեցնել, անցընել, նստիլ, ծնիլ, հասնիլ, մեռնիլ, բուսնիլ, թռչիլ, փախչիլ, բանալ, լալ, կենալ, գիտնալ, բարկանալ և այլն (էջ 159):

Միջնակարգ դպրոցի մեկ այլ դասագրքի՝ Յ. Քիւրքճեան, Մ. Գալայճեան- Քիւրքճեան «Հայրենի աղբիւր» շարքի աշխատանքի տետրերում առկա են հետևյալ տերմինները.

*Ցուցական ածական.* «Այս, այդ և այն բառերը մեզի ծանօթ են իբր ցուցական ածականներ» (Աշխ. տետրակ1, Ա կարգ, էջ 56):

Կապը և շաղկապը դիտարկվում են որպես *կապակցողներ* (նշխ. աշխ., էջ 75):

2-րդ աշխատանքային տետրում գործածվում է *նմանաձայններ* տերմինը: «Նոյն ձեւով հնչուող-լսուող, բայց տարբեր իմաստ ունեցող բառերը կը կոչուին նմանաձայններ:

Այսպես՝ անցաւ եւ անձաւ (քարայր):[124] Նմանաձայնները յաճախ տարբեր ուղղագրութիւն կունենան: Բայց երբեմն

[124] Խոսքը վերաբերում է հարանուններին:

անոնք նաեւ ուղղագրութեամբ նման կ'ըլլան, այս զոյգերուն համար գործածուած է համանուն բառը» (էջ 5):

*Լրացում* տերմինի իմաստով գործածվում է *լրացուցիչներ* եզրույթը (էջ 5):

*Շրջված ենթակա* տերմինը գործածվում է *հետադաս ենթական* նշանակելու համար:

«Ենթական «շրջված» կը կոչուի, երբ դրուած է ստորոգիչէն ետք:

Անուշիկ եղնիկ մը բերաւ որսորդը մեզի » (էջ 7):

*Լռելեայն ենթակա* տերմինով անվանվում է *զեղչված* ենթական: «Երբեմն ենթական գրուած չ'ըլլար եւ իմաստով կը հասկցուի, կ'ըսենք՝«լռելեայն ենթակայ»» (նշվ. աշխ,. էջ 8):

Դիտարկենք նաև Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի ազգային վարչության հրատարակած «Լեզվական վարժութիւններու գրքի» (1988թ.) լեզվաբանական տերմինները:

*Նմանաձայն բառեր.-* «Նմանաձայն են այն բառերը, որոնք գրեթէ նոյն հնչիւնը ունին բայց նոյն ուղղագրութեամբ չեն գրուիր եւ միևնոյն իմաստը չունին:

Փակ-կը նշանակէ գոց

Բակ-կը նշանակէ այն տեղը, ուր կը խաղանք» (էջ 29 ) :

Բերվում են նաև այլ օրինակներ՝ դուռ, թուր, քար, գառ, համար, յամառ, քայլ, գայլ: Ակնհայտ է, որ խոսքը հարանունների մասին է:

*Բազմանիշ բառեր.-*«Բազմանիշ է այն բառը, որ մեկէ աւելի իմաստ ունի:

ափ-կը նշանակէ ձեռքին մէջ

ափ-կը նշանակէ ծովու, լճի կամ գետի եզերքը»:

Բազմիմաստ բառերի մասին է խոսքը:

Բայի ժամանակները ուսուցանելիս նշվում են *անկատար անցեալ* (կու լար) և *կատարեալ անցեալ* (Անօթի մանուկը լացաւ) ժամանակները (էջ 8):

Տարբերակվում են նաև *բացարձակ ապառնի* (էջ 81) և *անկատար ապառնի* (էջ 83):

«Բայը *բացարձակ ապառնի* ժամանակ է, երբ ցոյց տայ յետոյ կատարուելիք գործողութիւն մը (պիտի երգեմ, պիտի սահիմ, պիտի խնդամ)» (էջ 81):

«Անկատար ապառնի – պիտի երգէի, պիտի սահէի, պիտի խնդայի» (էջ 83):

«Նախադասութեան գլխավոր անդամներն են *բայը* (Տղան խնձոր կերաւ:) և *տեր բային* (Տղան խնձոր կերաւ:) (էջ 115):

Հետեւեալ նախադասութիւններուն *տէր բայիները* միացնելով մէկ նախադասութիւն գրէ՛» (էջ 117):

*Տեր բայի* տերմինը առաջինը գործածել է Գ. Ավետիքյանը: Նույն իմաստով գործածվել է նաև *տեր գործողության* տերմինը Հ. Ավգերյանի կողմից (ԼԲ, էջ 292): Ենթական անվանվել է նաև *անուն բայի* (ԼԲ, էջ 89): *Ենթակա* տերմինը առաջին անգամ գործածել է Մ. Սալլանթյանը (ԼԲ, էջ 88):

*Տէր բայի* տերմինը գործածվում է նաև Յովh. Գազանճեանի «Նոր քերականութիւն արդի հայերէն լեզուի» դասագրքում: «Խօսքին մէջ բայն ունի իրեն յատուկ բառ մը որ կը կոչուի *տէր բայի* կամ ենթակայ: Տէր բային այն բառն է որուն գործողութիւնը կամ վիճակը կը բացատրէ բայը» (ՅԳ-2, էջ 58):

Բերենք այլ օրինակներ ևս. բային համաձայնութիւնը տէր բայիին հետ (ՅԳ-2, էջ 188), միադէմ եւ տէր բայիէ զուրկ բայեր (ՅԳ-2,էջ 190):

*Նախադասության վերլուծություն* իմաստով գործածվում է *քերականական լուծում* բառակապակցությունը:

«*Քերականական լուծում* կը կոչուի այն գործողութիւնը որով նախադասութեան մը պարունակած բառերուն տեսակները եւ անոնց պաշտօնները կ'որոշենք» (ՅԳ-2, էջ 156):

Ներկայացնենք նաև այս դասագրքի՝ ձևաբանությանը վերաբերող տերմիններից:

«Բայը հինգ եղանակ ունի. սահմանական, հրամայական, ստորադասական, ըղձական և անորոշ»(ՅԳ-2, էջ 62):

«Անորոշ եղանակը չորս ձև ունի.

ա. *աներեոյթ*- գրել, խօսիլ

բ. *ներկայ ընդունելութիւն*- գրող, խօսող

գ. *անցեալ ընդունելութիւն*-գրած, խօսած

դ. *ապառնի ընդունելութիւն*-գրելիք, խօսելու» (ՅԳ-2, էջ 62):

Մակբայի ուսուցման ժամանակ Հ. Գազանճյանը գործածում է հետևյալ տերմինները՝ *եղանակաւորիչ, որակական, տեղական, ժամանակական, քանակական մակբայներ* (ՅԳ-2, էջ 110):

Ըստ կազմության առանձնացնում է *հասարակ մակբայներ* և *մակբայական ասացուածներ*: «Մակբայական ասացուած կը կոչուին մէկէ աւելի բառերով կազմուած կամ գրաբարաձեւ հոլովեալ ամէն տեսակի կարգ մը մակբայներ….» (ՅԳ-2, էջ 112):

<u>*Ածանցաբարդ*</u>- «*Ածանցաբարդ* կը կոչուին այն բարդ բառերը, որոնք միեւնոյն ատեն մասնիկով մըն ալ ածանցուած են, օրինակ՝ անխելահաս, լուսանկարիչ ևն» (ՅԳ-2, էջ 128):

Արևելահայերենի քերականություններում շրջանառվող *բարդածանցավոր* բառերի մասին է խոսքը:

*<u>Բառերու ընտանիք</u>*.- «*Բառերու ընտանիք* կը կոչուին բառերու այն խումբերը որոնք միեւնոյն պարզ բառին այլեւայլ ածանցումներովը կամ բարդութիւններովը կազմուած են» (ՅԳ-2, էջ 128):

*Հնչափոխութիւն* տերմինը գործածվում է *հնչյունափոխություն* տերմինի նշանակությամբ:

*Նախադաս* և *յետադաս մասնիկ*.- «իկ, ուկ, ակ յետադաս մասնիկները կծառայեն գոյականին նուազական կամ փաղաքշական նշանակութիւն տալու. օրինակ՝ մանկիկ, գառնուկ, գետակ ևն » (ՅԳ-2, էջ 132):

Այսօր արևելահայերենի քերականագիտության մեջ ամրակայված են *նախածանց* և *վերջածանց* տերմինները:

Քննվող դասագրքի 138-րդ էջում կարդում ենք. «*Ածանցեալ ածականներ* կը կազմուին ամէն տեսակ պարզ բառերու կցուած զանազան ածանցական մասնիկներով» (ՅԳ-2, էջ 138): *Ածանցյալ ածականներ* ասելով հասկանում ենք *ածանցավոր ածականներ*, իսկ *ածանցական մասնիկը* ածանցն է:

Յ. Քիւրքճեանի դասագրքերում գործածվում են հետևյալ տերմինները:

Հնչափոխութիւն (= հնչյունափոխություն)[125]:

Եղանակաւորիչներ (= եղանակավորող բառեր) (Ք-2, էջ 81):

Ենթակայի շրջումը, ենթական շրջել, շրջված ենթակա (= հետադաս ենթակա) (Ք-2, էջ 102):

Հակադրութեան պարագա (= հակառակ հիմունքի կամ զիջման պարագա) (Ք-3, էջ 61):

---

[125] Մ. Աբեղյանը և Գ. Ջահուկյանը գործածում են <u>հնչաբանություն</u> և <u>հնչափոխություն</u> տերմինները:

Ընկերակցութեան պարագա (= միասնության պարագա) (Ք-2, էջ 140):

Դերբայական դարձուածք (= դերբայական դարձված) (Ք-3, էջ 14):

Անդրադառնանք Մ. Մկրտիչյանի «Քերականութեան դասեր» (Գ-գիրք) գրքի մի քանի տերմինների:

*Պատմողական կամ զեկուցական նախադասութիւն* (Մ-2, էջ 8):

*Կցորդ խնդիր*,- «*Կցորդ խնդիրը* ստորոգիչի լրացուցիչներուն խումբին մաս չի կազմեր, այլ կը պատկանի ենթակայի խումբի, կցորդ խնդիր կը կոչուի այն գոյականը կամ դերանունը, որ ածականի մը կամ անորոշ դերանունի մը լրացուցիչն է» (Մ-2, էջ 55):

Բերվում են հետևյալ օրինակները.

Վարձատրութեան արժանի տղաքը նուէրներ ստացան (1):

Հանդիսականներէն ոմանք հեռացան սրահէն (2):

Արևելահայերենի քերականագիտության մեջ (1)-ը կողմնակի հանգման խնդիր է, (2)-ը՝ մասնական լրացում:

*Ստորադաս նախադասութեանց ձուլումը գլխավորին մէջ* բառակապակցական տերմինին արևելահայերենի շարահյուսագիտության մեջ համապատասխանում է *բարդ նախադասության պարզեցում* տերմինը[126]:

Մ. Մկրտիչյանի «Քերականութեան դասեր» (Բ գիրք) գրքից դիտարկվել են հետևյալ տերմինները:

[126] Ա. Գալստյան, Տարբերակայնությունը լեզվաբանական տերմինահամակարգում, Ջահուկյանական ընթերցումներ, 2012, էջ 34-47:

«Եռաշարք բաղաձայնները ունին երեք ստորաբաժանում, *լերկ* (պ,կ,տ,ծ,ճ), *միջակ* (բ,գ,դ,ձ,ջ) և *թաւ* (փ,ք,թ,ց,չ)» (Մ-1, էջ 6):

«Իւրաքանչյուր տառ ունի գրութեան երկու կերպ՝ *գլխագիր* եւ *փոքրագիր* կամ *պարզ գիր*» (Մ-1, էջ 6):

Մերձանիշ բառ.- «Երբ բառերը իրարու շատ կը մօտենան իմաստով, կը կոչուին *մերձանիշ բառեր* (մերձաւոր նշանակութիւն ունեցող)» (Մ-1, էջ 13):

Այսօր *մերձանիշ բառի* իմաստով գործածում ենք *հոմանիշը*:

Մ. Մկրտիչյանի գրքում *հոմանիշ* տերմինով անվանվում է այսօրվա *համանիշը*: ԼԲ-ում մերձանիշ բառեր բառահոդվածը ներկայացվում է * նշումով և հղում է կատարվում *հոմանիշ* բառահոդվածին (ԼԲ, էջ 214):

Գործածվում է *հնչափոխություն հնչյունափոխության* փոխարեն (Մ-1, էջ 23):

*Առընթերադրութիւն.*- «Այն անթեք բառերը, որոնք գոյականին առընթեր դրուելով զայն կը վերածեն պարագայական խնդրի, կը կոչուին առընթերադրութիւն»: (Մ-1, էջ 127):

Հեղինակը նկատի ունի կապ խոսքի մասը: ԼԲ-ը *առընթերադրութիւն* բառը բացատրում է հետևյալ կերպ. «Մասնակիորեն գործածված է անջատական լեզուներին բնորոշ՝ բառերի հարաբերության եղանակը նշելու համար» (ԼԲ, էջ 28):

Դասագրքերում առկա է նաև կետադրական նշանների անվանումների տարբերակայնություն: Այսպես՝ *բացահայտության նշաններ* և *բացահայտական նշաններ*, *առոգանության նշաններ* և *առոգանական նշաններ, հարցման նշան, հարցական նշան, պարույկ և հարցանիշ*:

Ասույթ.- «Ասոյթները կը հարստացնեն լեզուն, անոնք կու տան կարելիութիւնը՝ սովորական բայ մը կամ ածական մը աւելի կենդանի ձեւով ըսելու:

Երկու ժամ զիս յոգնեցուց շատ խօսելով, ըսելու տեղ, կ'ըսենք՝ Երկու ժամ գլուխս արդուկեց» (Յ. Քիւրքճեան, Մ. Գալայճեան-Քիւրքճեան, Միջնակարգի «Հայրենի աղբիւր» շարք, աշխատանքի տետրակ, պատրաստական կարգ, էջ 15):

*Ասոյթներ* տերմինն է գործածվում նաև «Մեր լեզուն 6. Քերականական վարժութիւններու գիրք» ձեռնարկում (հրատարակել է Առաջնորդարան հայոց Հիւսիսային Ամերիկայի արեւմտեան թեմ): 16-րդ էջում բերվում են հետևյալ օրինակները՝ սիրտ տալ, ինքզինք գտնել, ինքզինք հաւաքել, լեզին փրթել, սրտին խօսիլ, բերանը բաց մնալ և այլն:

Լևոն Շանթի կազմած «Հայրենի աշխարհ» ընթերցարանում[127] ևս գործածվում են *ասոյթ բայեր* և *ասոյթային բայեր* տերմինները:

«Հետեւեալ ասոյթային բայերը վերածէ՛ պարզ բայի. ծարաւս եկաւ, ուշքի եկայ, դող ելաւ, խօսք տուի, կամք չտուաւ, գործը գլուխ եկաւ» (էջ 42):

«Հետեւեալ ասոյթ բառերը դարձու՛ր պարզ բայերու. կանգ առնել, իրար անցնել, յամառութիւն ընել, վազ տալ, պատասխան տալ, դադար տալ» (էջ 63):

Այսօր արևելահայերենի քերականություններում գործածվում են *հարադիր բայ, հարադրավոր բայ* տերմինները, իսկ *ասույթ* տերմինը գործածվում է որպես высказывание տերմինի համարժեք:

---

[127] Լ. Շանթ, Հայրենի աշխարհ, Ընթերցարան հայերէն լեզուի, Ա գիրք դպրոցական V տարուան համար, Փարիզ, 1930:

Որպես ընդհանուր միտում կարելի է արձանագրել, որ արևմտահայ լեզվաբանական տերմինաբանությունը ավելի պահպանողական է հին գրաբարյան տերմինային բառապաշարի գործածության առումով (լերկ, միջակ և թավ բաղաձայններ, ընդունելություն, տեր բայի, առընթերադրություն և այլն): Սփյուռքահայ տարբեր գաղթօջախներում շրջանառվող դասագրքերը միասնական չեն տերմինագործածության տեսանկյունից. դրանց տարբերությունները պայմանավորված են մի շարք գործոններով, որոնցից կարևոր են դասագրքերի ստեղծման վայրը (ՀՀ, ԱՄՆ, Լիբանան և այլն), կազմման միասնական ծրագրերի բացակայությունը և այլն: Լեզվի դասագրքերում թեմաների ընտրության, լուսաբանման խորության և առաջին հերթին տերմինների գործածության հարցերում միասնական մոտեցումը առայժմ ցանկալի հեռանկար է, որի իրականացման համար նպատակամետ ջանքեր պետք է գործադրեն թե՛ սփյուռքի, թե՛ հայրենիքի մասնագետները:

Անդրադառնանք հասարակական-քաղաքական, մշակութաբանական և այլ բնույթի մի շարք տերմինների քննությանը:

Ռ. Սաքապետոյանի «Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները (զուգադրական քննություն)» աշխատության (Եր., ԵՊՀ հրատ., 2004, 232 էջ) հավելված 2-ում տրված է օտար բառերի դիմաց արևմտահայերենում գործածվող հայերեն բառերի ցանկ (մոտավորապես 680 բառ):

Այդ ցանկի բառերի մի մասը այսօր գործածվում է արևելահայերեն մամուլի, գրքերի բառապաշարում: Այս մասին Ռ. Սաքապետոյանը գրում է. «Աշխատության գլխի վերջում տրվում է այն բառերի ցանկը, որոնց մի մասը դարձել է

արևելահայ գրական լեզվի սեփականությունը, մի մասն էլ թերևս ժամանակի ընթացքում արևելահայերեն խոսող հանրության համար կդառնա կանոնական և ընդունելի: Դրանց մեջ կուզեինք հատկապես առանձնացնել գիտատեխնիկական եզրաբանությանը վերաբերող բազմաթիվ բառեր, որոնց հայերեն համարժեքները, մեր կարծիքով, լիովին բավարարում են եզրույթներին ներկայացվող պահանջները. ընդգրկում են համապատասխան հասկացության ծավալը, բարեհունչ են և կազմված են հայերենի բառակազմական կանոններով»:[128]

Այդ բառացանկից աղյուսակով (տե՛ս էջ 99) ներկայացնենք մի շարք բառեր (այդ թվում՝ տնտեսագիտական, հասարակագիտական քաղաքական, գրականագիտական, արվեստի և այլ ոլորտների տերմիններ): Աղյուսակի սյունակներում նշվում է մոտավորապես 120 բառի առկայությունը տարբեր ժամանակներում լույս տեսած՝ Հ. Գայայանի, Ա. Սարգսյանի, Ա. Կռանյանի, Ստ. Մալխասյանցի բառարաններում, Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» (այսուհետև՝ ԱՀԲԲ):

Աղյուսակից երևում է, որ բառացանկի 106 բառը ԱՀԲԲ-ում առկա է: Դրանցից միայն 18-ի դիմաց է գրվում արևմտ. ( արևմտահայերեն) նշումը, 4-ը (դրամատուն, լրագրող, լրաքաղ, տնօրեն) նշվում են որպես հնացած բառեր, 3-ը (գբոսաշրջիկ, զբոսաշրջություն, մասնաշենք) ներկայացվում են որպես նորաբանություններ: Այսպիսով, բառացանկի բառերը դիտվում են որպես ժամանակակից հայոց լեզվի ընդհանուր գործածական բառեր:

---

[128] Ռ. Սաքապետոյան, Արևելահայերենի և արևմտահայերենի բառապաշարային առանձնահատկությունները, Ե., 2004, էջ 132-133:

Հետաքրքիր է, որ Գայայանի բառարանում ընդգրկված են քննվող 120 բառից 37-ը միայն, Ա. Կռանյանի բառարանում՝ 74-ը, Մալխասյանցի բառարանում՝ 60-ը: Դիտարկվող 5 բառարաններում քննվող բառախմբի բառերից 13-ը ընդհանրապես բացակայում են (աշխարհաքաղաքական, արյունաբանություն, բարդույթ, գագաթ(ն)աժողով,դիպաշար, խափանարարական, համաշխարհայնացում, հանրահավաք, ճարտարագիտական, շնորհանդես, ոչնչապաշտ, սեռախտաբանություն, ստուգանմուշ, տեղեկագիտություն):

Բոլոր բառարաններում առկա են 15 բառեր. ազատքեղ, ամբոխավար, դրամատուն,երգահան,իրապաշտ, լոլիկ, խափանարար, ծերակույտ, կաճառ, կարգախոս, համայնավար, ճարտարագետ, վեհաժողով, տնօրեն, տնօրենություն:

Աշխարհի տարբեր երկրներում գործառող արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցումը (միասնականացումը) և հետագա զարգացումը մեզ պատկերանում են առավել լայն մշակութային համատեքստում (կիրակնօրյա և շաբաթօրյա դպրոցներ, հայկական երգերի և պարերի ուսուցում, շարժանկարների ցուցադրում, փոխայցելություններ, հայ մշակույթի օրեր գաղթօջախներում, գրքերի ցուցահանդես-վաճառք, մշակութային ամենատարբեր միջոցառումներ, ռադիո և հեռուստաժամեր, կայքէջեր համացանցում, շարադրության, ասմունքի մրցույթներ, գիտաժողովներ, ստեղծագործական մըրցույթներ և այլն): Մեր լեզվի երկու ճյուղերը՝ արևմտահայերենը և արևելահայերենը, մերձեցնելու, զորեղացնելու, փոխադարձ կերպով հարստացնելու և բյուրեղացնելու, մշակման առավել բարձր աստիճանի հասցնելու գործում իրենց մասնակցությունը պետք է ունենան մասնագետները (լրագրողները, լեզվաբանները, ուսուցիչները, գրականագետները, գրողները՝

լեզվի մշակները), ընդհանրապես՝ մտավորականությունը, նաև պետական ու հասարակական կառույցները:

| Ռ. Սաքապետոյանի բառացանկից ընտրված բառեր | Գայա-յան | Ա. Սարգսյան | Կռանյան | ԱՀԲԲ | Մալխա-սյանց |
|---|---|---|---|---|---|
| Ագեվազ | - | + | - | + | - |
| ադամաթուզ | + | - | - | + | + |
| ազատքեղ | + | + | + | + | + |
| ալեհավաք | - | + | + | + | - |
| ամբոխավար | + | + | + | + | + |
| ամբոխավարություն | - | - | - | + | + |
| անկարգել | - | + | + | + (արևմտ.) | - |
| աշխարհաքաղաքական | - | - | - | - | - |
| աշխարհաքաղաքացի | - | - | + | + | + |
| ապազգայնապաշտ | - | - | - | + | +* |
| արգանակ | - | - | + | + | + |
| արհեստավարժ | - | - | + | + | +* |

* Ս. Մալխասյանցը *նշանը գործածում է «մեռած և միևնույն ժամանակ հազուադեպ գործածուած բառերի առաջ»:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| արյունաբանություն | - | - | - | - | - |
| բաժնեթուղթ | + | - | + | + | + |
| բարդույթ | - | - | - | - | - |
| բարեշրջություն | + (բարե-շրջում) | - | - | ++ | ++ |
| բեկաբույժ | + | - | + | + | + |
| բեկաբուժություն | - | - | - | + | + |
| գագաթ(ն)նաժողով | - | - | - | - | - |
| գինեձոն | - | + | + | - | - |
| գիշերերգ | - | - | - | + | + |
| գրավատուն | + | - | - | + | + |
| դաշնակցային | - | - | + | + | - |
| դերուսույց | - | - | + | + | - |
| դիպաշար | - | - | - | - | - |
| դրամատուն | + | + | + | + (հնց. և արևմտ.) | + |
| եզր(տերմին) | - | + | + | + (7-րդ նշ. արևմտ.) | - |
| եզրաբանական | - | + | - | + (արևմտ.) | - |
| եզրաբանություն | - | + | - | + (արևմտ.) | - |
| երաժշտանոց | - | + | + | + | + |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| երգահան | + | + | + | + | + |
| զբոսաշրջիկ | + | - | + | + (նորբ.) | +* |
| զբոսաշրջություն | - | - | - | + (նորբ.) | - |
| իրապաշտ | + | + | + | + | +* |
| իրապաշտություն | - | + | + | + | + |
| լոլիկ | + | + | + | + (արևմտ.) | + |
| լսատեսողական | - | - | + | - | - |
| լրագրող | + | - | + | + (հնց.) | + |
| լրագրություն | - | - | + | + | + |
| լրաքաղ | - | - | - | + (հնց.) | + |
| լուսապատկեր | - | - | - | + | - |
| լուսնոսկի, լնոսկի | + | - | + | + | + |
| խափանարար | + | + | + | + (արևմտ.) | + |
| խափանարարություն | - | + | + | + (արևմտ.) | + |
| խորհրդապաշտ | - | + | + | + | - |
| խորհրդապաշտական | - | + | - | + | - |
| խորհրդապաշտություն | - | + | + | + | - |
| ծավալապաշտ | - | - | + | + (արևմտ.) | - |
| ծերակույտ | + | + | + | + | + |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| կազմաբանական, կազմախոսական | - | - | - | + | + |
| կազմախոսություն | - | - | + | + | + |
| կաճառ | + | + | + | + | + |
| կաճառական | - | - | + | + | +* |
| կայսերապաշտ | - | - | + | + (արևմտ.) | - |
| կայսերապաշտական | - | - | - | + (արևմտ.) | - |
| Կարգախոս | + | + | + | + (արևմտ.) | + տ. կարգարան |
| կարմրախտ | - | - | + | + | + |
| կարոտախտ | - | + | + | + | - |
| կենսանյութ | - | + | + | + | + |
| կերակրացանկ | - | - | - | + | - |
| կշռույթ | + | + | + | + | - |
| հաճոյախոսություն | - | - | - | + | + |
| համալիր | - | - | + | + | - |
| համակազմ | - | - | - | + | - |
| համակարգիչ | - | - | + | - | - |
| համույթ | - | + | + | + (արևմտ.) | - |
| հանրագիտարան | + | - | + | + | + |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| համայնավար | + | + | + | + (արևմտ.) | + |
| համայնավարական | + | - | - | + (արևմտ.) | - |
| համայնավարություն | + | - | + | + (արևմտ.) | + |
| համանվագ | - | + | + | + | - |
| համաշխարհայնացում | - | - | - | - | - |
| համասեռական | - | - | - | - | - |
| համասեռականություն | - | - | - | - | - |
| համացանց | - | - | + | - | - |
| հանրահավաք | - | - | - | - | - |
| հարզադրոշմ | - | - | - | + | - |
| հետահայաց | + | - | - | + | - |
| հիմնադրամ | - | - | + | + | + |
| հյուրախաղ | - | - | - | + | - |
| հուշանվեր | - | - | + | + | - |
| ձայնասփյուռ | + | + | | + (արևմտ.) | - |
| ճարտարագետ | + | + | + | + | + |
| ճարտարագիտական | - | - | - | - | - |
| մանրակ | - | - | - | + | - |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| մասնաշենք | - | - | - | + (նորբ.) | - |
| միասեռական | - | - | + | + (միասեռու թյուն) | - |
| մշակույթ | + | - | + | + | + |
| մշակութային | - | - | - | + | - |
| մրցաշարք | - | - | + | + | - |
| մրցավարտ | - | - | - | + | - |
| նախահաշիվ | + | - | + | + | + |
| նենգադուլ | - | - | - | + | - |
| ներզատուկ | - | - | - | + | - |
| ներուժ | + | - | + | + | - |
| նվազավար | - | + | + | + | - |
| նվիրապետությու ն | + | - | + | + | - |
| շարժասանդուխ | - | - | - | + (շարժա սանդուղք) | - |
| շնորհանդես | - | - | - | - | - |
| ոչնչական | - | + | - | + | + |
| ոչնչապաշտ | - | - | - | - | |
| ոտնահարդարում | - | - | - | + | - |
| պահեցողություն | + | - | + | + | + |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| ռազմավարական | - | - | - | + | + |
| ռազմավարությու ն | - | - | + | + | + |
| ռամկավար | - | + | + | + | + |
| սեռախտաբանութ յուն | - | - | - | - | - |
| սղաճ | - | - | + | - | - |
| սննդականոն | - | - | + | + | - |
| սպայակույտ | - | - | + | + | +* |
| ստուգանմուշ | - | - | - | - | - |
| սրտաբույժ | | - | + | - | - |
| սրտագրություն | - | - | - | + | +* |
| վեհաժողով | + | + | + | + | + |
| վերջնախաղ | - | - | - | + | - |
| տարանցիկ | - | - | + | + | + |
| տեղեկագիտությո ւն | - | - | - | - | - |
| տնօրեն | + | + | + | + (հնց. և արևմտ.) | + |
| տնօրենություն | + | + | + | + | + |
| ուժաչափ | - | - | - | + | + |
| ուժանակ | - | - | + | + | + |
| ուծանալ | + | - | + | + | + |

## Հավելված I[129]

Աբբայ-  աբբահայր, վանահայր, կրօնահայր, մեծաւոր:
Աբեղայ- միաբան, վանական, մոնազն, միայնակեաց, միանձն. (կեղծ՝) խաբեբայ: Աբեղուկ- աբեղաձագ, կատարաւոր արտոյտ:
Ագապ- հանրաճաշ, մատաղ (նախկին քրիստոնեաներու):
Ագոնարար-մարտիկ, մրցորդ. ըմբիշ:
Ագռմէջ-երկու ազդրերուն մէջտեղը, ցայլք:
Ադամաթուզ-բանան. (ծառը՝) ադամաթզենի:
Ադամախնձոր-խռտում, ուռ (վիզին առաջամասին վրայ):
Ադամանդ-(շողշողուն՝) շողակ, թանկարժէք քար:
Ազատանի- ազատորեար, ազնուականներ:
Ազատութիւն-անկախութիւն. ինքնիշխանութիւն. համարձակութիւն:
Ազատքեղ-համեմաւոր բոյս պարտէզի:
Ազգ- ցեղ, տոհմ, ազն, զարմ. –ի –ի, տեսակ տեսակ:
Ազգագրութիւն- ազգի մը մշակութային արտայայտութեանց ուսում:
Ազգայնամոլ-մոլեռանդ, ազգասէր:
Ազդր- զիստ, կշտոսկրէն մինչև բարձոսկրի գլուխը:
Ազնուապետութիւն-ազնուականներու դասակարգ:
Աթութայք-նշանագրեր, այբուբեն, տառեր:
Ալապաստր- ջրակուճ, լսնակուճ (գաճային թափանցիկ  քար):
Ալճէպրայ- գրահաշիւ. հանրահաշիւ:
Ալոճ-սինձ, վայրի մանր խնձոր, հազորան:
Ալոջ- ամիկ, ուլ (միամյա՝ էզ)
Ախաւեղագէս-վերնախարիսխ սիւնի:
Ախտ- հիւանդութիւն, խօթութիւն. մոլութիւն:

---

[129] Կազմվել է ըստ Յարութիւն Գայաեանի «Բառարան զանձարան հայերէն լեզուի» աշխատանքի (Գահիրէ, 1938): Ցանկն ընդգրկում է նաև անվանակարգային միավորներ:

Ախտաժամ-դարձ, նոպայ:
Ախտաճանաչում-հիւանդութեան գուշակում՝ ախտանշաններէն:
Ախտանիշ-ախտանշան, հիւանդութիւնը բացայայտող նշան:
Ած- չաչ, տնկելի ուտ:
Ածական-մակդիր, վերադիր:
Ածանց- ածանցական, բխած, ծագած, ելած (ըստ քերականութեան):
Ածխաքար- ածխային դիւրակէզ նիւթ՝ անծուխ եւ անհոտ:
Ածուխ- գործելի. (կիսայրեաց՝ մխացող՝) երտ:
Ակադեմիա-կաճառ, ճեմարան, լսարան:
Ականթ- արջամագիլ գեղատեսիլ տերեւներով բոյս:
Ականոդիք-տեսանելիք, աչք,ակունք, լուսարան:
Ականց- անիւի կեդրոն՝ գունդ, առեղ, միջանիւ:
Ականջթոռ- ունկնաբոյթ, ականջի բլթակ:
Ակառն- ներքնաբերդ, միջնաբերդ:
Ակատ- գեղեցիկ փայլով՝վառ գոյներով պատուական քար:
Ակնաբոյժ- աչքի բժիշկ:
Ակնակապիճ-աչքին խորշը՝ փոսը:
Ակնվանի- վանակն, բիւրեղ, ապակենման քար:
Ակոնիտոն-ընձախոտ, գեղեցիկ բայց թունաւոր ծաղիկներով բոյս:
Ակրատ-նախընթրակ, հրավերք:
Ակրկարիայ-թաղանդաստ, իգաբող (շատ պիտանի բոյս):
Ակքան-եկքան, ոքոզ, ուղտափուշ, բորկոնիմ:
Ահեկան- հայոց իններորդ ամիսը (ապրիլ):
Աղաղ- կաղնիի կեղեւէն՝ գղթորէն հանուած փոթոթահամ նիւթ՝ կաշեգործութեան համար մանաւանդ խիստ պիտանի:
Աղանդ-հերձուած. յարանուանութիւն:
Աղաւնիճ-աղաւնարոտ, աղաւնեխոտ (ատենօք համայնաբոյժ նկատուած):
Աղափ- փոշտ, պարկ (ամորձիքի):
Աղբղբուկ-տուղտ, բարբաք (բուժական բոյս):

Աղբորակ-բորակ, քարաղ, նատրուն:
Աղեթափութիւն-փոշտանք (ութիւն):
Աղեկապ- աղեթափութեան դէմ գործուած կապ:
Աղեղ- կամար. մեծ նետի -, լայնալիճ. ծիրանի գօտիի -, ծիածան. լպուտի -, անեղ:
Աղետապ- աղիներու բորբոքում:
Աղիք- ընդերք, փորոտիք. բանուած -, լար:
Աղկիթ-թառափկիթ. թառափ ձկան աղած հաւկիթներ:
Աղկիոն- ծղնի, խոթ, ծովածիծառ. ալկիոն:
Աղճկտատ- բաղրջուկ, մոլոշ. հացուպանիր,կտատեակ, եղնճկտատ, ճնճղկաբլիթ, բուժական եւ սննդական բոյս:
Աղուեսաձուք-խոլորձ, որձարմատ, ձուատակ,կտրկոյ տակ, ճըզտրուկ. (ըմպելին՝) մեղրապ:
Աղուհացք-քառասնորդք. մեծ պահք:
Աղուճակ-հանքային աղ, աղքար, գոհճ:
Աղտահանք- սրբան, նստատեղի, վայրարկու, յետոյք, ոռ:
Աղտոր-համեմային մանր պտուղներով թուփ:
Աղքար-աղուճակ, հանքային աղ, գոհճ:
Աղօթագիրք- աղօթքի գիրք, ժամագիրք:
Աղօթատուն-աղօթարան, եկեղեցի, ժամ, տաճար, մատուռ, ժողովարան. հեթանոսաց -, մեհեան, կռատուն. հրեից -, ժողովանոց. հին հրեից -, տաճար. մահմետականաց -, մզկիթ:
Աղօրիք- ջաղացք, ջրաղացք, ժուռիպատ, երկան. հովի -, հող-մաղաց. ձեռքի -, ձեռնաղօրի, երկանք. սուրճի -, սրճաղաց, -ի խոշոր ակռաները, լեսատամունք:
Աճալ-մաքրողական տերեւներով արեւելեան բոյս:
Աճառ-կռճիկ, խաղճախուղճ, հրճրճուկ:
Աճառախոտ- արծպայ, շմորտակ, փրփրացող բոյս:
Աճառք- առիք, ձեղնայարկ, վերնայարկ:
Աճուկ- ցայլք, ստորին որովայնի և ազդրերուն միացած տեղերը:
Ամանակ-երաժշտական չափ:
Ամանոր-տարեմուտ, Նոր-Տարի. հին Հայոց -, Նաւասարդ:

Ամարու-ոչխար, մաքի,  պատրուճակ:
Ամբոխավար- խուժանավար, խռովարար, խռովարկու:
Ամեթուս- մեղեսիկ (մանիշակագոյն պատուական քար):
Ամիկ-ուլ ալոջ  (միամեա՝ էզ):
Ամոլաջիղ- ազդերային աւազ ջիղ, լայնաջիղ:
Ամորձիք-երկուորիք, ձուանք,  կարեւորք, կոկովանք, (մէկը՝) խեղեփ:
Ամփիթատր(ոն)- շրջաթատր, հանդիսարան:
Ամօթոյք-առականք, սերականք, ծննդականք:
Այբբենարան- քերական:
Այգաստղ- լուսաբեր, Արուսեակ, Աստղիկ:
Այեր-օդ, մթնոլորտ:
Այլակերպութիւն- այլափոխութիւն, կերպարանափոխութիւն. (տօն՝) Վարդավառ:
Այլուրկայութիւն-ամբաստանեալի բացակայութիւն ոճիրին ՝ յանցանքին վայրէն:
Այծուղտ- լամայ. (մէկ տեսակը՝) ալպակ՝  յարգի բուրդով:
Այծվայրի- քարայծ, ժեռայծ:
Այծտերեւի- այծտերեւուկ, տիկնաթաթիկ (ծաղիկ):
Այտոսկր-լծոսկր:
Անագապղինձ-արոյր, անագի եւ պղինձի խառնուրդ:
Անանուխ- համեմային բոյս. վայրի -, դաղձ, խոռ. հոռոմ - , լեղընտրուկ:
Անասնաբոյժ- կենդանաբոյժ, անասուններու բժիշկ:
Անասնաբոյծ- կենդանաբոյծ,անասուններ պահող:
Անգայտաչափ- կազերու եւ գոլորշիներու ձգտումը չափող գործիք:
Անգար-  կէս գլխացավ:
Անգժատ-  անճիտան, ուբանի խէժ:
Անդամազննութիւն- գործարանաւոր էակներու կազմութեան գիտութիւն:
Անդամալոյծ- անդամները գործածելու անկարող,  զօսացած:

Անդամահատութիւն- մարմնի անդամ կտրելու գործ՝ գործողութիւն:
Անդամատել-անդամ կտրել. (ոտանաւորի մը ոտքերը՝ վանկերը) համրել:
Անդաչափութիւն- արտաչափութիւն, գետնաչափութիւն:
Անդարձագիր- կտակ, հրիտակ, վերջին կամք:
Անդեմ-դիմազուրկ (բայ):
Անդորրագիր- ընկալագիր, ստացական, ստացագիր:
Անդրի-արձան. խմբական -, խմբարձան:
Անդրիագործ-արձանագործ:
Անեղ-բուրդ՝ բամբակ նետելու աղեղ (լպուտի):
Անթառամ- (ծաղիկ՝) թաւրնջակ, անմեռուկ:
Անթել- ելեկտրական ալիքներով հաղորդակցութիւն:
Անթեմ- երիցուկ, կուծուռի, ճիճի, պուպունիճ, խնձորխոտ:
Անթոց-խշտեկ, եռանկիւն կտոր հագուստին անութին:
Անիսոն-համեմւոր հատիկներով բոյս, պտիկ:
Անկախութիւն- ազատութիւն. ինքնավարութիւն:
Անկան- սանդ. (ներկարարի՝ դեղագործի՝) լեսան. (պատերազմի՝) սանդար, հրասանդ:
Անկիչ- ջուլհակ, ոստայնանկ, կտաւագործ, տարազագործ:
Անկիւնագիծ- տրամագիծ, տրամանկիւն:
Անհանդուրժողութիւն- աններողութիւն, անթոյլտուութիւն (կրօնական):
Անմարսութիւն- դժուարամարսութիւն, չմարսելը:
Անմեռուկ- փրփրեմ, կոճկորակ. դանդուռ, նուկտաւ:
Անմեռուկ- (ծաղիկ՝) անթառամ, թաւրնջակ, ճաղճղուկ:
Անմոռուկ- մկնականջ, բզրուկ, կապտագոյն մանր ծաղիկ:
Անյանգ- յանգազուրկ (քերթուած):
Անշարժացնել- անշարժ պահել (սակը). անգործ պահել (դրամը):
Անուակալ- արգելակ, անիւներու զսպակ:
Անուշադր- քիմիական աղի տեսակ, աղային աւշակ:
Անջատողական- բաժանողական, հերձուածական:

Անջրդի- չոր, ցամաք, անբեր, անպտուղ,  ամուլ:
Անջրպետ- (յօնքերու միջեւ՝) յօնամէջք:
Անսուրբ- հեթանոս:
Անվաւեր- (գրքեր՝) անկանոնական:
Անտուզ- կղմուխ   (բուժական բոյս):
Անրակ- ուսոսկր:
Անցարգել- անցքը փակող շարժական արգելք կամ կայան:
Անցուորիկ-   շաքարախտ, շաքարամիզութիւն:
Աշարայ- հաճար, ճոն, ճոյփ, ցորենաբոյսի տեսակ:
Աշխատանոց- գործատուն. գործարան,  գործանոց. նաւաշինութեան -, նաւարան:
Աշխատասիրութիւն- երկ, հեղինակութիւն. ջանասիրութիւն:
Աշխատութիւն- բան, գործ, զբաղում, վաստակ, դատանք. ջան, ճիգ. յոգնութիւն, խոնջէնք. գրական -, երկ, երկասիրութիւն, գիրք. ձրի   -, տարապարհակ   -,  կօռ, պահկութիւն:
Աշխարհաբար- ընթացիկ գործածական՝  հայերէն:
Աշխարհագրութիւն- նկարագրութիւն երկրի կազմին՝ կլիմային եւ բերքերուն:
Աշխարհածով- ովկիանոս, համատարած ծով:
Աշխարհահայեաց- հայեցուած, տեսութիւն, գաղափար, կարծիք:
Աշխարհացոյց- աշխարհագրական քարտէս:
Աշխարհիկ- աշխարհային. (կին՝) կենցաղասէր, աշխարհասէր, զուարճամոլ. (լեզու՝) աշխարհաբար:
Աշխէտ- (ձի՝) երաշխ, շիկագոյն, շառագոյն, կարմիր:
Աշմ- հասմկաքար, կանանչորակ պատուական քար:
Աշտէ(եայ)- տէգ մկունդ:
Աշտիպ- ձաւար:
Ապաթարց- մակակէտ (՚):
Ապակեխոտ- (եղճազգի), կռուինչ, սոխոր:
Ապահովագիր- ապահովագրութեան թուղթ՝ մուրհակ:
Ապառնի- ապագայ, գալիք. հանդերձեալ (կեանք):

Ապացոյց- ցուցմունք. փաստ, պատճառաբանութիւն. վկայութիւն:
Ապաքինարան- բուժարան, դարմանատուն:
Ապիզակ- սլաքաձեւ զարդասեղ (կուրծքի):
Ապուխտ- արեւի մէջ չորցած՝ համեմած միս:
Ապրայ- ապրանք պարունակող առարկաներու կշիռը:
Ապրշում- մետաքս (թել):
Աջակողմեան- աջ կողմի. կառաւարութեան կողմնակից (երեսփոխան):
Առած- առակ. սկզբունք, կանոն. վճիռ:
Առակ- օրինակ, պատկեր, նմանութիւն:
Առանձնաշնորհ- արտօնութիւն. մենաշնորհ:
Առանձներգ- մեներգ (ութիւն):
Առանձնոց- ճգնարան, մենարան, խուց:
Առանցք- (անիւի՝) սեռն, սռնակ, լիսեռ. (խնդիրի մը՝) վախճան, նպատակ. (կշիռքի՝) մէտ:
Առաջնորդ- ուղեցոյց. ռահվիրայ. վարիչ, մեծաւոր, գլխաւոր. մենտոր. (հոգեւոր՝) հովիւ. խռովութեան մը - ՝ գլուխ, պարագլուխ, աւազակախումբի -, աւազակապետ:
Առաջք- (նաւի՝) նաւառաջք, ցռուկ. (շէնքի՝) ճակատ:
Առասան- առատուկ, լար, քուղ (ծրար կապելու):
Առասպել- վէպ, զրոյց, բանք, աւանդութիւն. հեքեաթ. սուտ:
Առաստաղ- առիք, ձեղուն, աճառք. (բերնի՝) քիմք:
Առիք- առաստաղ, ձեղուն. աճառք, ձեղնայարկ:
Առնելիքուոր- պահանջատէր, պարտապահանջ:
Առորմի- տախտակամածի հեծան, գերան. կոզակ:
Առուոյտ- երեքնուկ. (խոշոր տեսակը՝) մարառուոյտ, ասպատ:
Ասարոն- սթեր, կազմոր, վայրի նարդոս:
Ասորեակ- ասորեկ, աղցանի բանջար:
Ասուլիս- խօսակցութիւն, խօսուըռտուք (գրական՝ գիտական):
Ասուպ- լուսավառ սլացիկ երկնային մարմին:
Ասպաստան- ախոռ. ձիաստան:
Ասպար- վահան. պաշտպանութիւն, հովանի:

Ասպարէզ- ձիարձակարան, կրկէս, մրցարան, ընթերցարան, արշաւատեղ. հրապարակ. արուեստ, պաշտօն, վիճակ:
Աստակոս-, մեծ խեցգետին՝ դժուարամարս միսով:
Աստեղաբաշխ- աստեղաբան:
Աստեղատուն- աստեղախումբ, համաստեղութիւն:
Աստղածաղիկ- աստղաձեւ բազմաթերթ ծաղիկ:
Աստղիկ- Արուսեակ, Լուսաբեր, Այգաստղ:
Աստուած- Տէր, Արարիչ, Ստեղծող, Հաստիչ. հինաւուրցը՝ (հեթանոսական՝) չաստուած. դիք. կուռք:
Աստուածածին- Տիրամայր, Աստուծամայր:
Աստուածաշունչ- Սուրբ Գիրք, Սրբազան Մատեան:
Աստուածուհի- դիցուհի, դիցանոյշ:
Ասր- բուրդ, գեղմ:
Ատաղձ- նիւթ, շինուածանիւթ. տարերք. տրամադրութիւն. խմոր:
Ատաղձագործ- հիւսն:
Ատամնաբոյժ- ակռաներու բժիշկ:
Ատամնակրկիտ- քչփորիկ, ակռափոչխիչ:
Ատամնաշար- ակռաներու շարք:
Ատամնացաւ- ակռայի ցաւ:
Ատեան- դատարան. ժողով:
Ատենագրութիւն- արձանագրութիւն (ժողովի), յիշատակագրութիւն:
Ատենադպիր- դիւանադպիր. գրագիր, քարտուղար:
Ատենախօս- բանախօս, ճառախօս, հրապարակախօս, ատենաբան:
Ատենախօսութիւն- բանախօսութիւն, ճառ, ճառախօսութիւն, ուղերձ:
Ատենակալ- քաղաքային բարձրաստիճան պաշտօնատար:
Ատենապետ- միութեան կամ նիստի նախագահ:
Ատլաս- աշխարհացոյց քարտէզներ:
Ատրճանակ- փոքր հրազէն:
Ատրուշան- կրակատուն, զոհարան, բագին, սեղան:

Արամազդ- Դիոս, Զեւս, աստուծապետ հեթանոսութեան:
Արարողապետ- արարողութեանց վրայ հսկող:
Արարողութիւն- ծէս, պաշտամունք. ձեւեր:
Արարուած- գործողութիւն, դրուագ:
Արարչագործութիւն- ստեղծագործութիւն:
Արաց- Հայոց վեցերորդ ամիսը (յունուար):
Արգանդ- մայրենի փոր, ծոց, սաղմնատուն, ծննդատուն. (երկրի՝) խորք, ալք, ալուցք. (անասուններու՝) ծնաման:
Արգանդահատում- արգանդի հատումով ծնունդ (césarienne):
Արդն- մկունդ, նիզակ, գեղարդ. տէգ, շուառն:
Արեգ- հայոց ութերորդ ամիսը (մարտ):
Արեւազալ- այգ, արշալոյս, առաւօտ, լուսադէմ:
Արեւադարձ- հասարակածին զուգահեռական երկու ենթադրական շրջանակ, որոնց միջեւ իր շրջանը կը կատարէ արեւը:
Արեւելագէտ- Արեւելքի եւ անոր լեզուներուն տեղեակ:
Արզն- լեղ, շպլեղ, պաղլեղ, հանքային կրկնակ աղ:
Արժեթուղթ- հանրային արժէք ներկայացնող տոմսեր, մուրհակներ:
Արիւներթութիւն- տեռատեսութիւն, թթախտ:
Արծաթագործ- ոսկերիչ:
Արծաթեղէն- արծաթեայ իրեղէն
Արծուիք- փորուռեցք, ջրգողութիւն (ներքին հիւանդութիւն):
Արծպայ- օճառախոտ, շմօրտակ, օշնան, գոմիզ, փրփրացնող բոյս:
Արկնոց- վանդակ. թռչուններու -, լարանոց. գազաններու - , զառազեղ:
Արհիապատիւ- արքեպիսկոպոսի տիտղոս կաթոլիկ հայոց:
Արձան- յիշատակարան, կոթող. անձի -, անդրի. (իրանով միայն՝) կիսարձան, կիսանդրի. խմբակային -, խմբանդրի:
Արձանագործ- անդրիագործ:
Արձոյլ- ցանց, ուռկան (ձկնորսութեան):
Արճճուկ- արտիճուկ, կանկառ (բանջարեղեն):

Արմաւենի- արմաւի ծառ:
Արմուկ- բազուկին ծալուած մասը:
Արմտիք- հացաբոյս, հացահատիկ (ցորենազգի):
Արշիպեղագոս- կղզեխումբ:
Արոյր- դեղին պղինձ, զնկախառն պղինձ:
Արուեստ- արհեստ, ճարտարութիւն, գեղարուեստ. վիճակ, գործ:
Արուեստագէտ- գեղարուեստի պարապող. վարպետ:
Արուեստահանդէս- գեղարուեստական եւ ճարտարուեստական ցուցահանդէս:
Արջամագիլ- ականթ (գեղեցիկ տերեւներով բոյս):
Արջամուկ-  մկնարջ (կրծող անասուն):
Արջառ-  պախրէ,  պաճար, դուար, եզեր, կովեր:
Արջասպ- ծծմբաթթու, մետաղոքսիդ:
Արջնդեղ- սոնիճ, հորկ, սեւ հատիկ (համեմաւոր հատիկներով):
Արջտակ- լօշ, խոզահաց (խոզերու սիրած բոյս):
Արտաւազդահավ- քաջահաւ, եգիպտահաւ, ցեծ,  շեախ:
Արտեւանունք- թարթիչ, թարթեւան, կոպ:
Արտօնագիր- արտօնութեան թուղթ. վկայագիր:
Արտօնատէր- մենաշնորհի՝  լրագրի արտօնութիւն ունեցող:
Արտօնութիւն- առանձնաշնորհ. թոյլտուութիւն, հաւանութիւն:
Արփի- եթեր, նրբօդ:
Արքայամորի-, ժոխ. վայրի -, մոր (թթուաշ պտուղ՝  ելակի նման):
Արքայամորի- ժոխենի. վայրի -, մորենի:
Արքայասալոր- հաղեճան (հաւկթաձեւ մանիշակագոյն խոշոր սալոր):
Արքեպիսկոպոս- աւագ եպիսկոպոս:
Արօսի- հազորենի, սնենի (փնջաձն թթուաշ պտուղներով ծառ). (պտուղը՝) արօս, հազօրան , սին:
Աւագաժողով- դիւանագէտներու ժողով:
Աւագանի- աւագորեար, գլխաւորներ, մեծեր, ջոջեր:
Աւագերէց- գլխաւոր երէց, աւագ քահանայ:
Աւանդ- պահեստ. հին -ներ, հիշատակարաններ:

Աւանդատուն- սրբատուն եկեղեցիներու, պահարան:
Աւանդություն, գ, հին սովորութիւններ, կարգեր. զրոյց:
Աւետարան- Քրիստոսի պատգամը եւ կենսագրութիւնը:
Աւետարանական- աւետարանի. բողոքական:
Աւետարանիչ- աւետարան գրող. քարոզիչ:
Աւիշ-, հիւթ, շիճուկ. (վէրքէ ելած՝) արենաջուր, կառնաջուր:
Ափարփի- կաղանչան, քռիկան (ռետնաբեր բոյս):
Ափիոն- թմրեցուցիչ նիւթ մեկոնի:
Ափրոդիտեան- տռփական (հիւանդութիւն):
Աքցան- բեւեռաքաշ, կաստ. (ատամնաբոյժի՝) ատամնահան. (ատահակ ձիերու քթին՝) կոճէք:
Աքծան- ունելեակ, լաւիտ. (սաղմահան՝) սաղմաքծան. (հնոցէն հրաշէկ իրեր հանելու՝) բլշակ:
Բագին- զոհարան, խորան, սեղան (հեթանոսական):
Բադ- ջրասեր թռչուն (ընտանի). (վայրին՝) բադիճոն, մրտիմ:
Բադիճոն- մրտիմ, ծովային թռչուն:
Բազէ- յափշտակիչ թռչուն. (արուն՝) ճուռակ. (ձագը՝) գաւազ:
Բազկերակ- արքայերակ, բասիլիկ, մաճաս:
Բազկոսկր- տիգոսկր, խալիկ, բազուկի վերի մասի ոսկոր:
Բազմակ- ճրագ, կանթեղ, լամբար, լոյս, ջահ:
Բազմաստեղք- բոյլք, վեցկի, եօթնեղբարք. աստեղատուն:
Բազմոտանի- պոլիպոդ, ծովային կակղամորթ կենդանի:
Բազուկ- թեւ, ծղիք, տիգ. աջ –, զօրաւիգ, նեցուկ:
Բազրիք- վանդակապատ (սանդուղի):
Բաթթկենի- բաթտուկ, գայլխոտ, գաղձ, մակաբոյծ բոյս:
Բաժ- հարկ, տուրք, մաքս. այրի կնոջ -, մահր:
Բաժակաման- (պատարագի՝) ժամանոց:
Բաժնեթուղթ- բաժին տնտեսական ձեռնարկի մը մէջ:
Բաժնետէր- բազորդ, բաժանորդ (արժեթղթերու): Բալ, գ, կեռասի թթուաշ տեսակ. (ծառը՝) բալենի:
Բալխիր- սահնակ, չանայ. մեծ -, դահուկ, սիւնի եւ սառի վրայ վարելի անանիւ կառք:

Բալդինջ- իշամեղու, բոռ, պիծակ, բրէտ. ձիապիծակ, ձիաստաց, գոռեխ, բոռեխ:
Բալուտ- խոզկաղին, մոմոչ, խոզակ, վայրի կաղին:
Բախոս- մարտկոց. հրետանի, թնդանոթներու շարք՝ տեղ:
Բաղաձայն- վանկ կազմելու համար ձայնաւորի կարօտ տառ:
Բաղբաք- տուղտ, աղբղբուկ, բուժական բոյս:
Բաղեղ- պատաղիճ, պատատուկ, մամրիչ: Բաղնիք, գ, բաղնետուն, լոգարան. լոգանք:
Բաղրջուկ- աղճկտատ, մոլոշ, հացուպանիր, կտատեակ, եղնճկտատ, ճնճղկաբլիթ, բուժական եւ սննդական բոյս:
Բամբիռ- շագանակաձեւ նուագարան (մատերու ծայրին):
Բայ- ընել կամ ըլլալ ցուցնող խոնարհելի բառեր:
Բայածական- բային արմատէն շինուած ածական. (օր. գործել. արմատ՝ գործ. բայածական՝գործօն):
Բայանուն- բային արմատէն շինուած գոյական. (օր. գործել. արմատ՝ գործ. բայանուն՝գործիք):
Բայոց- որջ, սորք, խշտիք, դադարք, մորի,կաղադ:
Բան- խօսք. պատգամ:
Բանախօս- ատենաբան, ճառախօս, դասախօս:
Բանահիւս- բանաստեղծ:
Բանասէր- լեզուաբան, պատմաբան:
Բանասիրական- լեզուաբանական, պատմագիտական:
Բանասիրութիւն- լեզուաքննութիւն, լեզուաբանութիւն:
Բանաստեղծ- քերթող, բանահիւս, պուէտ:
Բանգ- աղուէշբանգ, խոզի բակլայ:
Բանդակ- շաքարամիրգ, քաղցրաւենի:
Բանողչէք- գործողչէք. օրչէք, օրավարձ, աւուրչէք:
Բանուածք- շինուածք, գործ. ասեղնագործութիւն:
Բանտարկեալ- կալանաւոր. (պատերազմի՝) գերի:
Բաշխ- բաժ, տուրք, հարկ. ճակատագիր:
Բաշխ- ակար, ցեց, ուտիճ, մանր որդ ալիւրի՝ հինցած պանիրի:
Բառ- խօսքի բաղկացուցիչ մաս. աւելորդ -, թարմատար:

Բառարան- բառգիրք, բառերու հաւաքածոյ այբբենական կարգով:
Բառեղծուած- բառհանելուկ (օր. աղ +մուկ= աղմուկ):
Բարաբ- կկոց, մագոգ (ոստայնանկի):
Բարակ- որսաշուն, պառական. (քածը՝) քերծէ:
Բարաւոր- վերնասեմ (դրան):
Բարբառ-, ձայն. լեզու, խօսք:
Բարեկենդան- մեծ պահքի նախօրյակ վերջին ուտիքի կիրակին:
Բարկժատ- քաղբան (խեժի տեսակ):
Բարկօղի- զօրաւոր ոգելից, թորեալ գինի, կոնեակ:
Բարձոսկր- երանքի ոսկոր, ամիրուկ:
Բարձրաքանդակ- ուռուցիկ՝ ցցուած քանդակ:
Բարձք- երանք, ճուռք. ազդրէն մինչեւ ծունկը:
Բարունակ- տերեւալից որթաճիւղ. մատաղ -, ուռ, տորք, խորձուիլ:
Բարտի- դողդոջուն կաղամախ:
Բացաստան- անտառի մէջ անծառ տեղ:
Բացավայր- տափարակ, դաշտ, դաշտագետին:
Բացատ- (գիրերու՝բառերու միջեւ՝) միջոց. (քաղաքի՝) արուարձան:
Բաւիղ- լաբիւրինթոս. (ականջի՝) ներքին խորշ:
Բդեշխ- հիւպատոս. օտար կառավարութեան մը ներկայացուցիչ:
Բեկաբոյժ- կալանդիչ, կոտրած կամ վնասուած անդամներ կապող:
Բեհեզ- ազնիւ ու նուրբ մետաքս:
Բեմասաց- ատենախօս, ատենաբան, ճառասաց, հռետոր:
Բերանակապ- (շան՝) երախկապ, ցռկակապ. (ստահակ երիվարի՝) կոճէք:
Բերանոց- (ձիու՝) դանդաւանդ  (սանձին երկաթէ մասը):
Բերկրանոց- հովանոց, տաղաւար (պարտէզի):

Բեւեկնի- ռետնային մշտադալար ծառ՝ պիստակենիի տեսակէն:
Բեւեռագիր- սեպագիր, սեպաձեւ (հնաձեւ գիր):
Բեւեռացոյց- կողմնացոյց, մագնիսացած ասեղով գործիք:
Բզրուկ- մկնականջ, անմեռուկ (մանր կապոյտ ծաղիկ):
Բէջ- ոստայնանկի սանտրակալ:
Բժիշկ- բժշկութիւն ընող, բժշկող:
Բիբ- աչքի պտուղ:
Բիծխի- պիծխի, դղքի, ցախազգի անտառային շքեղ ծառ:
Բիւրեղ- վանակն. սառնապակի:
Բլթակ- (ականջի՝) ականջթոռ. (հրացանի՝) ձգան. (լեարդի՝) լերդաբոյթ. (թոքի՝) թոքաբոյթ. (վրանոցի՝) դարձք:
Բլիթ- (հացի՝) բոկեղ. (թուզի՝) պաղատիտ. (քամուած ձիթապտուղի մնացորդ՝) կոպտոն. (պանիրի՝) մաճառակ:
Բղուկ- բղուղ. (պզտիկ՝) դորակ. (մեծ՝) կարաս:
Բնազաւառ- բնաշխարհ, հայրենիք. ծննդավայր:
Բնագիտութիւն- մարմիններու յատկութեանց վրայ խօսող գիտութիւն:
Բնագիր- սկզբնագիր, նախօրինակ, բուն օրինակ:
Բնալեղ- ճերմակ՝ թեթեւ եւ տոկուն մետաղ:
Բնալոյծ- տարրաբան, քիմիագէտ:
Բնախօսութիւն- կեանքի՝ եւ զայն երեւան բերող գործարանական պաշտօններու վրայ ճառող գիտութիւն:
Բնածուխ- գետնածուխ, հանքածուխ. ուրուաքար:
Բնաձայնութիւն- նմանաձայնութիւն:
Բնդեռ- կոյաղնդիռ, կուաբ (աղբասէի ճճի):
Բնութիւն- աշխարհք, տիեզերք:
Բողկուկ- (միջատներու՝) շոշափուկ. (արջառի՝) եղջիւր, կոտոշ (նորաբոյս). (անթելի՝) հաղորդիչ:
Բողոքական- աւետարանական:
Բոյթ- (ջութակի լարերու՝) բանալի. (դրան՝) խնձոր:
Բոյթ- բլթակ (ականջի՝ թոքի՝ լեարդի):
Բոտոտ- որդ, ճճի. սողուն, զեռուն:

Բորակ- աղբորակ, քարաղ. հայ -, նարդոն:
Բորակածին- քարաղածին, անկենդանական մարմին կազեղէն, ազոտ:
Բորկոնիմ- եկքան, ոքոզ, ուղտափուշ:
Բորոտ- քոսոտ, ուրուկ:
Բորոտանոց- ուրկանոց, բորոտներու հիւանդանոց:
Բուէճ- բուիճակ, կասկամ, տեսակ մը բու:
Բութ- նշան (՝)
Բուժարան- դարմանատուն, ապաքինարան:
Բուծ- գառնուկ:
Բումբ- դնդղունց, թամբ (սրունքին մսոտ մասը):
Բուսաբանութիւն- բոյսերու վրայ ճառող գիտութիւն:
Բուստ- պողիպողներու բոյն՝ որ ծովէն հանուելով՝ զոհարեղէններ շինելու կը ծառայէ:
Բուրգ- յուրան. երեք կամ չորս անկիւնով խարիսխի վրայ կառոյցք, որուն եռանկիւն երեսները կը միանան գագաթին վրայ:
Բուրուառ- խնկարկութեան շղթայաւոր անօթ:
Բջիջ- խորշիկ. մեղրի -, գուբ, մաղ. դատարկ -, չէչ.գաղափարի ծաւալման -, կորիզ, կեդրոն:
Բրածոյ- հանածոյ:
Բրդեղէն- ասուեղէն:
Բրդոռ- փենէ, ոսկրկուլ, գետարծուի:
Բրուտ- կաւագործ, խեցեգործ, կաւեղէն անօթներ շինող:
Բրտոն- բրուտի կաւ:
Գաբծիլ- խաւարծիլ, իշխուն, խաշնդեղ. ռեւանդ (թթուանոյշ բոյս):
Գաղիշ- որաներու շեղջ, բարդ, օրան. դէզ:
Գազ- փշալից ընդաբեր բոյս. –ի խեժ, -ի կռէզ:
Գազերբուակ- մշկընկոյզ, հնդկընկոյզ (համեմ):
Գալար- խիթ, խոցտուկ, ներքին սուր ցաւ:
Գահ- գահոյք, աթոռ (իշխանի՝ աթոռակալի):
Գահաժառանգ- թագաժառանգ, պայազատ:

Գահակալ- աթոռակալ:
Գահաւորակ- դեսպակ, լկտիք, ժահուար. շարժական օթեակ՝ մարդ փոխադրելու համար:
Գահերէց- նախագահ, գլխաւոր:
Գաղթական- պանդուխտ, օտարկան, նժդեհ, վտարանդի:
Գաղթավայր- գաղթելու՝ գաղթեցնելու տեղ:
Գաղձ- գայլխոտ, գոճմորու, բաթտուկ (վնասակար բոյս):
Գաղութ- գաղթածներու բազմութիւն. ցրուած -, սփիւռք:
Գաղտակուր- կուրայ, սաղափային խեցիով խեցեմորթ:
Գաղտիկուր- գառնալեզու, ջղախոտ, բուժական բոյս:
Գաղտնակ- երախաներու գանկին դեռ կակուղ մասերը:
Գաղտուն- գանգոսկրներու կցուած տեղը:
Գաճ- գաճաքարի փոշի՝ շաղախ՝ ծեփ:
Գաճաքար- բուռ. բնածծմբատ ջրատուած:
Գամ- բեւեռ, հեղոյս:
Գամփոր- տախտակի մէջ ծակ՝ թորիծ փորելու գործիք:
Գայլախազ- կայծքար:
Գայլիկոն- դուր, փոքր -, գչիր (ծակելու գործիք):
Գայլուկ- հմուլ, հիւսիսայգի, գարեջուրի պատրաստութեան պիտանի ծաղիկներով բոյս:
Գանկ- գլուխ, կառափ. սակաւառակ. (անասունի՝) խալամ:
Գանձակ- ենթափոր, ենթաորովայն, փորին վարի մասը:
Գանձանակ- արկղիկ, տուփ (դրամ հաւաքելու):
Գանձապետ- գանձապահ, արկղակալ:
Գանձարան- գանձատուն:
Գառազեղ- արգելոց, արկնոց, վանդակ (գազաններու):
Գառնալեզու- գաղտիկուր, ջղախոտ, բուժական բոյս:
Գառնականջ- թրթնջուկ, թթռկիչ, թթուշ բանջար:
Գարաւ- շանաճանճ:
Գարգմանակ- ճեղենակ, ցցունք, բալիշ (սաղաւարտի վրայ) :
Գարեկ- կոլոզտր, կըլըզտրուկ (կոպերուն եզրը այտուց):
Գարեջուր- կասկաջուր, գարիով՝ գայլուկով պատրաստուած ըմպելի:

Գարնցան- գարնան ցերմնացանք:
Գարշապար- ներբան, ոտքին տակը:
Գաւազ- բազէի ձագ, պիլիկ:
Գաւազան- հովուական -, ցուպ. արքայական -, մական. մարաջախտի -, վարզ. նուրբ -, ճպոտ, ջին. հրանօթ լեցնելու -, խցկան. հաստ -, բիր. եպիսկոպոսական -, ասա. գնդամուղի -, ճոկան. ցորեն ծեծելու -, թմբիչ. կարազ ծեծելու-, կուպի. արօր մաքրելու -, ծամակ:
Գաւակ- երիվարի յետսակողմ:
Գաւառ- նահանգամաս, վիճակ:
Գաւառաբարբառ- գաւառի մը հատուկ բարբառ:
Գաւառապետ- գաւառի տեսուչ, կառավարիչ:
Գաւարս- քուրիմ, սորեակ, մեծահատ կորեկ:
Գաւիթ- բակ, անդաստակ, շուագ, սրահ. (ոչխարներու՝) մակաղատեղի, փարախ:
Գեզ-ադամանդի ճեղք, բիծ, արատ:
Գելարան- տանջարան, պրկոց (հին ատեններու):
Գելըրնակ- պրկոց, բեռի չուանը պրկելու փայտիկ:
Գեղազատ- շքաձի, նժոյգ:
Գեղարդ- նիզակ, մկունդ, գայիսոն, աշտէ, տէգ:
Գեղարուեստ- նուրբ արուեստներ (երաժշտութիւն, նկարչութիւն, քանդակագործութիւն, ճարտարապետութիւն, բանաստեղծութիւն եւն.):
Գեղեցկագիտութիւն- գեղեցկին եւ ճաշակի վրայ ճառող գիտութիւն:
Գեղօն- տաղի կարճ տեսակ:
Գետախառնունք- կցուան, գետերու միացումը՝ խառնուած տեղը:
Գետնադամբան- ստորերկրեայ գերեզման:
Գետնամայր- ճանկխոտ, խոռ, բուժական բոյս:
Գետնայարկ-տան խոնարհագոյն յարկը:
Գերանդի- մանգաղ, քաղելու գործիք:
Գերապայծառ- եպիսկոպոսական տիտղոս կաթոլիկ հայոց:

Գերապատիւ- եպիսկոպոսական տիտղոս լուսաւորչական հայոց:
Գերդաստան- ընտանիք, տուն, ազգ, ատոհմ:
Գերեզմանատուն- գերեզմաննոց, հողվայրք. հանգստանոց, խաչբակ:
Գերեզմանաքար- տապանաքար, շիրմաքար:
Գերերի- գետնասունկ, հողածածուկ սունկեր:
Գերմակ- նաշիհ, խորակ, նուրբ ալիւր, սիմինդր:
Գերմաստ- թրմուս, ջերմիկ, եգիպտոլոռ, մանր բակլայ:
Գժատ- անծրութ, վիրախեժ:
Գի- գիհի, ցիրդ, ցրդի՝ ցրդենի, կոնաբեր ծառի տեսակ՝ կարմիր հատիկներով:
Գին- արժէք, փոպշխարէն, փոխարժէք:
Գիշերազուարճ- գիշեածաղիկ:
Գիշերահաւասար- տարին երկու անգամ գիշեր՝ ցորեկ հաւասար երկարութեամբ:
Գիշերավար- Արուսեակ, Աստղիկ, Լուսաբեր:
Գիշերօթիկ- կրթարանի մը մէջ օթեւանող աշակերտ:
Գիսաւոր- պոչաւոր (աստղ):
Գիտնական- ուսումնական, ուսեալ, գիտուն:
Գիտութիւն- ուսում, ծանօթութիւն, հմտութիւն, տեղեկութիւն:
Գիր- տառ, նշանագիր. գրուածք. գրութիւն. անշահ -, ձաբռտուք. նաւի բեռան-, բեռնագիր. դեսպանի ներկայացուցած -, ընծայագիր, հաւատարմագիր. գլխիվայր շարուած -, շրջօն:
Գիրք- մատեան, երկ, երկասիրութիւն. հատոր. Սուրբ -, Աստուածաշունչ:
Գիւղաքաղաք- աւան:
Գլան- կլոր երկայն մաս մեքենայի. խմոր բանալու նուրբ -, գրտնակ, դուդան. խմոր բանալու միջակ -, լողիկ. տանիք հարթելու -, լողքար. հողակոշտերը փշրելու -, տափան. ոստայնանկի -, ստորի, ջլան. կրկնահար ժամացոյցի -, մղակ. ծխելու -, գլանակ:
Գլանիկ- փոքր գլան. (ծխելու՝) ոլորակ:

Գլխագիր- մեծ գիր, գլխատառ (նախադասութեանց եւ յատուկ անուններու սկիզբը):
Գլուխ- (մարդու՝) գլխաւոր զգայարանքներու կեդրոնը, խելք. (լերան՝) սար, կատար, գագաթ, արտեւան. (ցորենաբոյսի՝) հասկ. (խաշխաշի՝) քարուկ, կոնգոմ. (գիրքի՝) հատուած, դրուագ. (ցամաքի՝) հրուանդան. (սիւնի՝) խոյակ. (խումբի մը՝) առաջնորդ. (բանակի՝) հրամանատար. (խռովարարներու՝) պարագլուխ. տաք -, բարկացկոտ. (խելք՝) դատողութիւն բանի մը սէր՝.) ձիրք. ընդունակութիւն. մարդ -, իւրաքանչիւրին. (ապուխտի՝) կապգլուխ. մարդու կտրած -, կառափ. անասունի կտրած -, խալամ. դդում -, ապուշ, թանձրամիտ:
Գծագրութիւն- գիծերով պատկերացում եւ պատկեր:
Գնդացիր- խորտընկէց, արագահարուած հրանօթ:
Գնդընկէց- թնդանօթ, հրետ:
Գոթական- միջին դարերու ճարտարապետութիւն եւ գիր:
Գողօն- գողցուած առարկաներ:
Գոճազմ- պերուզակ, ազնիւ քար:
Գոմշուկ- զխատակ, պլէճ, աւարեկ. գոմէշի ձագ:
Գոյակ- էակ:
Գոյական- անուն (քերականական):
Գոռել- հնդկահաւ, ճոլոկ:
Գոռեխ- իշամեղու, պիծակ:
Գոս- գուրշ, մեծ թմբուկ:
Գործադուլ- բանթող, բանդուլ, գործադադար:
Գործակալ- գործակատար:
Գործատուն- գործարան, աշխատանոց, գործանոց:
Գործարան- գործիք, անդամ (մարմինի). ծաղիկներու արու -, որձայ. ծաղիկներու էգ -, իգայ:
Գործեւար- արօրի ողնափայտ (շարժուն), համ:
Գործողչէք- բանողչէք, վարձք. օրական -, օրչէք:
Գործուածք- բանուածք, յօրիուածք, շինուածք, հիւսուածք:
Գորտբուրդ- ջրիմուռ, խօզ, լոռ (ջրաբոյս):

Գորտնուկ- (ձեռքերու վրայ՝) կոծիծ, ելունդ. (բոյսերու  վրայ՝) խլունկ, այտուց:
Գութաներգ- հոռովել. հերկի յատուկ երգ:
Գուղձ- (հողի՝) կոշտ, հողակոշտ., կոշկոռ, կունձ, բունծ. (արծաթի՝) քծուար, ձոյլ, շանթ:
Գումարտակ- վաշտ, գունդ, զօրագունդ,  փաղանգ:
Գունդ- երկրագունդ. գնդաձեւ մարմին. (թուքի՝) կլնճ:
Գունտ- (երկրի՝) երկրագունտ. (արեւու՝ լուսնի՝) սկաւառակ:
Գուշ- տաշտիկ. սխտոր ծեծելու -, սխտորգուշ. հաց դնելու -, հացադիր:
Գուռ- կուր, աւազան  (անասուններուն ջուր խմցնելու):
Գուսան- երգիչ, երգչուհի:
Գչիր- փոքրիկ գայլիկոն (ծակելու գործիք):
Գռզի- սեւարմատ, քոշմորուք (ուտելի արմատ):
Գրաբար- հին,  դասական (լեզու):
Գրագէտ- գրող, գրական մշակ. մատենագիր:
Գրագիր- քարտուղար. դիւանի -, ատենադպիր,  դիւանադպիր:
Գրադատ- քննադատ:
Գրադարակ- (տպագրական տառերու՝) դուրճ:
Գրախօսական- մատենախօսական, գրադատական:
Գրակալ- փայտակերտ նեղ բարձր կազմած՝  վրան գիրք դնելու:
Գրական- գրագիտական:
Գրականութիւն- դպրութիւն, մատենագրութիւն:
Գրահաշիւ- հանրահաշիւ, ալճէպրա:
Գրաշար- տպագրական տառեր շարող:
Գրապանակ- թղթապանակ:
Գրասենեակ- գրական՝  հաշուական աշխատավայր:
Գրաստ- կրմուղ,  անասուն (բեռնակիր):
Գրատուն- մատենադարան, գրավաճառանոց:
Գրաւատուն- գրաւի փոխարէն  փոխատուութիւն ընող տուն:
Գրաքննութիւն- գիրքերու վրայ խիստ քննութիւն:
Գրեխ- ներկարարութեան գործիք:
Գրիչ- գրող. հոռի -, գրչողակ, գծողակ, մրոտող:

Գրոց- պողպատէ գրիչ (փորագրութեան):
Գրուածք- գիր, գրութիւն, գիրք, երկ:
Գրութիւն- գիր, գրուածք. նամակ. ձեռագիր:
Գրուիճ- պտղասեր թեւաւոր միջատ:
Գրչագիր- ձեռագիր:
Գրքոյկ- մատենիկ, տետրակ:
Գոտեմարտ- ըմբշմարտ, քուշտիկ:
Գոտեմարտիկ- ըմբիշ, ըմբշմարտիկ, քուշտնգիր:
Դագուր- քերոց, խարտոց (մեծ ակռաներով):
Դակու- ուրագ, փոքրիկ կացին, կացնակ:
Դահանակ- մոլոշաքար (պատուական քար):
Դահեկան- դրամական մաս մը՝ տեղէ տեղ տարբեր արժէքով:
Դահլիճ- սրահ, գաւիթ. նախարարութիւն, կառավարութիւն:
Դահուկ- սահնակ, չանայ, բալխի, ձիւնի՝ սառի վրայ վարելի անանիւ կառք:
Դահու- դուռէճ, սալամբ, կիքրիս, կաքաւազգի թռչուն:
Դահրակ- պայտարի կտրոց:
Դամբան- դամբարան, տապան, շիրիմ, գերեզման:
Դամբարան- (ստորերկրյա) գետնափոր դամբան:
Դայեակ- մանկաբարձ. ստնտու, ծիծմայր:
Դանգ- խերեւէշ, լումայ, ստակ, նաքարակիտ, բնիոն:
Դանդուռ- փրփրեմ, փերփերան, անմեռուկ, կոճկորակ, նուկտաւ, բանջարի տեսակ:
Դաշինք- դաշնագիր, պայմանագրութիւն, համաձայնութիւն. ուխտ:
Դաշխուրան- խեցատ, ծափ, խեցեղէն անօթ:
Դաշնագիր- դաշինքի թուղթ:
Դաշնադրութիւն- ուխտ, պայման, դաշնագիր, համաձայնագիր:
Դաշնակ- դաշնամուր (երկայն ստեղնաշարով նուագարան):
Դաշնակահար- դաշնակ ածող:
Դաշնակցութիւն- համաձայնութիւն. զինակցութիւն:
Դաշնամուր- դաշնակ:
Դաշոյն- դուն, երկսայրի շեղբով հատու զէնք:

Դաշտամեկոն- հարսնուկ, խաշխաշազգի կարմիր ծաղիկ:
Դաշտամուկ- խլմուկ:
Դաշտանկար- գիւղանկար, տեսարան. դաշտանկարչութիւն:
Դառնիճ-, եղերդ (վայրի):
Դասագիրք- դասեր պարունակող գիրք, դասընթացք:
Դասալիք- փախստեայ. պարտազանց:
Դասախօս- բանախօս, հրապարակախօս. ուսուցիչ, դասատու:
Դասակարգ- կարգ, խաւ, տեսակ:
Դասապետ- խմբապետ. դպիրներու -, դպրապետ:
Դասատու- ուսուցիչ, վարժապետ. դաստիարակ:
Դասարան- դասասենեակ. կարգ:
Դասընթացք- դասախօսութիւն, դասերու շարք. դասագիրք:
Դաստակ- ձեռքին յօդը, ձեռք:
Դաստաճաղ- լաստակերտ, տախտակազմած (կառոյցքը դիւրացնելու):
Դաստապան- երախակալ, գռնատեղ, կոթ (թուրի):
Դաստիարակ- կրթիչ, ուսուցիչ, կրթական մշակ:
Դաստիարակութիւն- կրթութիւն, հրահանգում, մշակում:
Դատ- վիճելի՝ դատելի խնդիր. դատավարութիւն:
Դատազանցութիւն- ոճրադատութեան օրը ատեանէն բացայում:
Դատախազ- ամբաստան. ոսոխ, հակառակորդ:
Դատակնիք- վճիռ, դատավճիռ. – մահուան, մահավճիռ:
Դատակոչ- եկակոչ, կոչագիր, դատի կանչելը:
Դատավարութիւն- դատաստան. դատի քննութիւն, քննելու եղանակ:
Դատարան- ատեան. դատաւորներ:
Դատաւոր- դատող, իրաւարար:
Դարապղպեղ- երկայն բարկ պղպեղ:
Դարբնոց- դարբինի աշխատանոց:
Դարեւանդ-դարաւանդ, կարկառ, քիւ (լերան). ճակտնոց (դրան՝ պատուհանի՝ կամարի):
Դարեւանդակ- բեմ (ատենախօսներու). քիւ (բուխարիկի):

Դարիճակ- հալած մետաղը քծուար ընելու կաղապար:
Դարիճենիկ- կասիա, համեմային կեղև դարիճենիի:
Դարձուածք- մանուած, ոլորք. (խօսքի՝ գործի՝) ձեւ, կերպ. հանգամանք, երեւոյթ. հնարք, վարպետութիւն, (ճամբու՝) անկիւն:
Դաւանանք- դաւանութիւն, հանգանակ, հավատալիք:
Դաւանութիւն- Տ. դաւանանք:
Դաւարայ- հոյնի, զողալի, չմենի. (պտուղը՝) հոյն, զողալ, չում, պրրի:
Դափ- փոքր թմբուկ մաղաձև. (ոմանք՝ բոժոժաւոր կամ փոքր ծնծղաներով):
Դափնեվարդ- ոլէանդր, մշտադալար թուփ՝ վարդագոյն ծաղիկներով:
Դափնի- սարդենի, եզրեղի, կաւլայ:
Դդմաճ- (կլոր՝ իտալական՝) փողուկ. (տափակը՝) տրէ:
Դեգաղ- շանաձուկ:
Դեղագիր- բժիշկի պատուիրած դեղերու գիր:
Դեղագործ- դեղեր պատրաստող՝ ծախող:
Դեղահատ- կլլելու դեղի հատիկ, պլօր:
Դեղարան- դեղեր պատրաստելու՝ ծախելու խանութ:
Դեղթափ- հակադեղ, անդեղեայ, թոյնթափ:
Դեղուկ- խանթեփար, ողկուզակ (քաղցրահամբոյր՝ կծուահամ բոյս):
Դեղփին- մեծ ձուկ գետազգի:
Դեն- քէշ, դաւանանք (հեթանոսական):
Դենպետ- հեթանոս, կրօնապետ:
Դեսպան- ներկայացուցիչ, պատգամաւոր. (պապին՝) նուիրակ:
Դեր- գործ, մաս, բաժին, խաղ:
Դերայ- չքահանայ, ոչինչ տէրտէր, չերէց:
Դերանուն- գոյականի տեղը բռնող բառ:
Դերասան- խաղարկու. անխօս -, երեւակ:
Դերասանուհի- ազջիկ կամ կին դերասան:
Դերբայ- ընդունելութիւն (քերականական):

Դերձակ- հագուստներ կարող. (կին՝ աղջիկ՝) դերձակուհի:
Դերձան- թել, աստղանի (կարելու):
Դէմք- երես, կերպարանք, դիմագիծ. երեւոյթ. տեսք. անձ, անձնաւորութիւն. խոժոռ -, ժանիք:
Դժնիկ- ժողուենի, յակրի, փշոտ թուփ՝ սեւ պտղահատերով:
Դժոխաքար- կիզաքար, արծաթի բորակատ:
Դժոխք- գեհեան, սանդարամետ, տարտարոս:
Դժուարաշնչութիւն- ծանրաշնչութիւն:
Դիազննութիւն- դիակի վրայ քննութիւն:
Դիեցիկ- կաթնկեր, ծծկեր, ստնդեայ, կուրծքի երախայ:
Դիմազուրկ- անդէմ (բայ):
Դիպակ- նուրբ կերպաս:
Դիպահ- առժամեայ բանտ:
Դիտակ- հեռաւոր առարկաները դիտելու գործիք:
Դիտարան- դիտանոց. (նաւու՝) հայեկ:
Դիցաբանութիւն- հեթանոսական աստուածաբանութիւն:
Դիցուհի- դիցանոյշ, աստուածուհի. գեղեցկութեան -, Աստղիկ:
Դիւան- ատեան. յիշատակարան. գրասենեակ:
Դիւանագէտ- քաղաքագէտ. ճարտար, վարպետորդի:
Դիւանադպիր- ատենադպիր. քարտուղար, գրագիր:
Դիւանապետ- դիւանի գլխաւոր:
Դիւանատուն- յիշատակարան . գրասենեակ, պաշտօնատեղի:
Դիւցազներգութիւն- դիւցազնական բանաստեղծութիւն:
Դիք-չաստուածներ . կուռք . ընտանի -, թերափ . դժոխքի -, պղուտոն, սանդարամետապետ:
Դկուղ- պորտիկ լովիաս, սեւ պորտիկ, լուբիայի տեսակ:
Դղքի- պիծխի, բիծխի, ցախազգի անտառային շքեղ ծառ:
Դնդեր- մկան, մկանունք, մեր շարժումները վարող մսակոյտեր:
Դնդղուց- բումբ, թամբ, սրունքին մսուտ մասը:
Դոխ- աղաւնեակ, աղաւնեձագ:
Դոխ- ողուն, աղօրիքի ձագար (ցորենը հոսեցնելու):
Դոճ- լայքայ, կարմրագոյն խէժ. կնքամոմի նիւթ:
Դուար, գ, արջառ, պաճար, պախրէ:

Դուկան- գերան, հեծան, մարդակ:
Դում- հարբուխ:
Դուն- կոնձեղ, կիպեռիս (ուտելի բունով):
Դուռէճ- դահուն, սալամբ, կաքաւազգի թռչուն:
Դուրգ- բրուտի անիւ:
Դուրճ- խորշաւոր գրադարակ տպագրական տառերու:
Դուքս, գ, ենթիշխան, ազնուական:
Դպիր- գրագիր . տիրացու, ժամի երգեցող:
Դպրապետ- դպիրներու գլխաւորը՝ ուսուցիչը:
Դպրեվանք- կղերանոց, ընծայարան:
Դպրոց- վարժարան, ուսումնարան, կրթարան, ճեմարան:
Դպրոցական- վարժարանական .աշակերտ, ուսանող:
Դպրութիւն- գրականութիւն, գրագիտութիւն, մատենագրութիւն:
Դռնբացէք- ծաղկազարդի իրիկունը ծորանին վարագոյրը բանալու արարողութիւն:
Դրախտ- պարտէզ, բուրաստան . եդեմ, գրգարան . արքայութիւն, երկինք:
Դրամագլուխ- շահագործութեան յատկացուած դրամ:
Դրամատուն- գանձ, սնտուկ:
Դրանդի- դրան շրջանակի մարդակներ:
Դրանիկ- պալատական, պալատի մարդ:
Դրթակ- ուռնակ, թակ,կափ . (փայտեայ մեծ՝) զոմբ:
Դրոյսք- ծամակալ, վարսակալ, մազերը վեր բռնող:
Դրոշմ- նշան, կնիք, տիպ, տպաւորութիւն, հետք օծում .վաւերում:
Դրոշմաթուղթ- թղթադրոշմ , նամակադրոշմ:
Դրուագ- (պատի՝) որմադրուագ. (պատի՝ ձեղունի՝) պրշակ . (սինագլուխի՝) խոյակ.(գիրքի՝ թատերախաղի՝) գլուխ, հատուած. (պատմական՝ վիպասանական՝) յարադէպ, միջնադէպ:
Դրունազ- ճապուռ, վայրի չաման:
Դրուշայ- կեղծ գոհարեղէն, խարմեայ:

Դրօշ- ազգային նշան. եկեղեցական -, վառ, խաչադրօշ, խաչվառ . սրածայր -, բացիկ:
Դրօշակ- քղանցք, համտակ, եզերք (հագուստի):
Դքսուհի- ենթիշխանուհի:
Դօղօշ- գորտի սեւ տեսակ մը:
Եբենոս- ոպնիազ, սեւ կարծր փայտ կահագործութեան:
Եբիճաղ- կրկնոց, վերարկու (կնգղաւոր թեզանաւոր) . զաբանակ:
Եգիպտահաւ- ցեծ, քաջահաւ, շեախ, արտաւազդահաւ:
Եգիպտոլոռ- թրմուս, գերմաստ, ջերմիկ, մանր բակլայ:
Եգիս- ասպար, Աթենասի վահան:
Եզնակ- գոճաշմ, կլոր պատուհան. հորի բերան. խոշոր խաղող:
Եզնամոլ- լուծք, հարկիք, լծակից եզերու զոյգ:
Եզնայ- քեռայր, քրոջ ամուսին, փեսայ:
Եզրահան- նճրհան, ակօսափեւ քերիչ կահագործի:
Եզրեղի- դափնի, դափնեվարդ, սարդենի, կասլայ, մշտադալար թուփ:
Եթիայ- եթիւայ, հողամաղ (ջրային թռչուն):
Ելատէ- եղեւնի . անտառային ռետնաբեր ծառ:
Ելեկտրագէտ- ճարտարագէտ, մեքենագէտ:
Ելեկտրականութիւն- թաքուն զօրութիւն՝ անհատնում կիրարկութիւններով:
Ելեւմտացոյց- նախահաշիւ՝ ելքի եւ մուտքի:
Ելունդ- ուռեցք, այտուցք, պուտ . (ձեռքի՝) կոծիծ .կարծր -, կոշկոռ:
Ելք- վերելք, դուռ, անցք, ճամբայ. ճար, հնարք, միջոց. վախճան. եզրակացութիւն . ծախք .յարձակոյթ . արեւի -, արեւածագ:
Եկակոչ- դատական կոչագիր, մէկը դատի կանչելը:
Եկեղեցի- ժամ, տաճար, աղօթատեղի . ժողովարան . փոքր -, մատուռ . մայր -, կաթողիկէ:
Եկքան- ակքան, ոքոզ, ուղտափուշ, բորկոնիմ:
Եկքանիկ- կարմիրկատար, քաղցրաձայն թռչնիկ:

Եղբայր- նոյն ծնողաց որդիներու յորջորջանք .(կրօնական հաստատութեան մը մէջ՝) միաբան:
Եղեգնաբոյս- եղեգնատունկ:
Եղեգնախունի- խունկեղեգ, շաւառ:
Եղեռն- ոճիր, սպաննութիւն, չարագործութիւն, քրեական յանցանք:
Եղեռնագործութիւն- եղեռն:
Եղեսպակ- կենեղուտ, վայրի թէյ, բուժական բոյս:
Եղերդ- ճարճրուկ .վայրի -, դառնիճ . աղցանի բանջար:
Եղերեգութիւն- ողբերգութիւն, նոխազերգութիւն:
Եղեւին- ելատէ . (Լիբանանի՝) մայր:
Եղեգ- շամբ, ջրային տունկ երկար ցօղունով:
Եղիճ- եռք պատճառող բոյս . մշկան -, լեղակ:
Եղինձ- ձաւարով կամ բրինձով թանձր կերակուր:
Եղն- մատակ եղջերու, եղնիկ:
Եղնորթ- եղնիկի ձագ:
Եղջերենի- եղջերաձեւ պտուղին ծառը:
Եղջերենի- եղջերեայ թափանցիկ առաջամաս աչքի:
Եղջերիկ- եղձերաւոր իժ եգիպտական:
Եղջերու- կիսավայրի բայց դիւրընտել կենդանի . (մատակ՝) եղնիկ .(ձագը՝) եղնորթ:
Եղջերուահաւ- հնդիկ ջայլամ:
Եղջիւր- եղջերաձեւ պտուղ եղջերենիի:
Եղրդի- խլեփ, հոտաւէտ ուռենի:
Եղնեւանի-շեփորուկ, ողկուզաձեւ՝ կապոյտ եւ քաղցրաբոյր ծաղիկներոց շքեղ ծառ:
Ենթամնայ- տողադարձի նիշ:
Եպարքոս- փոխարքայ:
Եպիսկոպոսապետ- կաթողիկոս, հայրապետ:
Եռաժանի- երեքժանի:
Ետինք- ցորեկուան վերջին քառորդի  պահը:
Երաժշտանոց- երաժշտութեան վարժարան:
Երախ- բերան, կլափ:

Երակ- արինը ծայրանդամներէն սրտին վերադարձնող խողովակիկ . բազուկի -, բազկերոկ, մաճաս . մայր -, մայրերակ, մայռ . շունչի -, շնչերակ:
Երակահատ- նշտրակ, երակէն արիւն հանող գործիք:
Երամ- խումբ, հոյլ (թռչուններու՝ մանուկներու՝):
Երամակ- հօտ, անդեայ, ջոլիր,նախիր:
Երանգապնակ- ներկապնակ, դեղառ (նկարիչի):
Երանք- բարձք, ճուռ, ազդրէն մինչև ծունկը:
Երաշխ- աշխէտ, շիկագոյն (ձի):
Երաշխէպ- (վէրքի՝ հարուածի՝) նշան, հետք .(ծաղկախտի՝) չեչ, պեպեն:
Երաշտահաւ- թուխկատար, ճնճղկազգի թռչուն:
Երասան- երասանակ, լկամ, սանձի փոկ:
Երաստան-հետոյք,նստատեղի. (ձիու՝) զիստ, գաւակ. (մանուկներու՝) պզտակ:
Երբուծ- կուրծք (զրաստի՝ արջառի՝):
Երգահան- երգեր հեղինակող:
Երգայարդար- նուագներ հօրինող:
Երգարան- երգերու գիրք:
Երգեհոն- ստեղնաւոր նուագարան:
Երգիծաբան- հեգնական գրուածքներու հեղինակ:
Երգիծանք- հեգնանք, հեգնութիւն, ծաղրանք:
Երգիչ- երգող, երաժիշտ, գուսան. (կին՝) երգչուհի:
Երգչախումբ- երգիչներու խումբ՝ պար:
Երգչուհի- երգիչ կին՝ աղջիկ:
Երդ- տուն, բոյն .լուսամուտ, լուսանցոյց:
Երդիք- տանիք, տամալի, կտուր, ողնոյց:
Երեմուկ- արման, մանրաձաւար, խոշոր ալիւր:
Երեսակ- աղամանդի տաշուած երեսները:
Երեսփոխան- ներկայացուցիչ ժողովուրդի:
Երեւակ- անխօս դերասան:
Երեւակ- մանեկաւոր եւ արբանեակաւոր մոլորակ, Արտախոյր:
Երէզ- արօս, կորդ՝ խոպան (երկիր). տափաստան:

Երէց- քահանայ, տէրտէր . քարոզիչ, հովիւ . անարժան -, չերէց, դերայ. փցուն քարոզիչ:
Երէցկին- երիցուհի, քահանայի՝ երէցի կին:
Երէցկին- չոր ընկոյզի ամբողջական միջուկ, ձնձում:
Երիզորդ- երիզակ, երիզաձեւ երկայն որդ աղիքներու մէջ:
Երիկամունք- պոլոճիկ, իլիկամ, մէզը զատող երկու մեծ գեղձեր:
Երինջ- կովիկ, մատաղ կով:
Երիվար- գեղազատ, ընտիր ձի . արու -, յովատակ:
Երիցական- հակեպիսկոպոսական (յարանուանութիւն):
Երիցատուն- քահանայատուն, ծխատուն:
Երիցուկ- անթեմ, ճփնի, կուծուռի, պուպունիճ, խնձորխոտ, ապրիմ-մեռնիմ ծաղկին բոյսը:
Երկ- գործ, գրուածք . աշխատասիրութիւն:
Երկաթագիր- գլխագիր (տպագր.):
Երկակենցաղ- թէ ջուրի մէջ եւ թէ ցամաքի վրայ ապրող:
Երկան- աղօրիք, ջաղացք. ջրաղացք, ժուռիպատ:
Երկանաքար- աղօրիքի քար. (տակի՝) նարքնակ. (վրայի՝) վերնակ. (կանգուն՝) տինկ:
Երկնագունդ- երկնային մարմիններուն դիրքերը ցուցնող գունդ:
Երկնաքար- օդաքար, շողաձիգ:
Երկունք- ցաւեր (ծննդական). անձկութիւն, տագնապ:
Երկուորեակ- զուգածին, երկուորակից, զոյգ:
Երկուորիք- ձուանք, ամորձիք, կարեւորք, կոկավանք:
Երկրաբան- երկիրը կազմող նիւթերը ուսումնասիրող:
Երկրագունդ- երկրին ցամաքները եւ ծովերը պատկերացնող գունդ:
Երկրաշարժ- գետնաշարժ, ժաժ, երկրի ցնցում:
Երկրաչափ- ճարտարագէտ:
Երկրմայր- լպրծուկ (որդ՝ անձրեւէ յետոյ տեսանելի):
Երնակ- հոսելի, հոսիչ, հեծանոց ( ցորեն երնելու):
Երսանկ- փայտէ ոտնաման՝ մատերուն տեղը կաշեկապով:

Երրորդութիւն- Հայր, Որդի եւ Ս.Հոգի:
Եփենէ- փենէ, բրդոռ (արծիւի տեսակ թռչուն):
Զամբիկ- ճայիկ, մատակ ձի . մատաղ -, ճակ:
Զամբուռ- իշամեղու, ձիաստաց, ձիապիծակ:
Զանազանակ- տարբերակ (գրչագրական):
Զանկապան- սռնապան, երկայն գուլպայ կանանց:
Զատիկ- տօն Ս. Յարութեան . (Հրէից՝) Պասեք:
Զատիկ- զատկաճճի, կարմրուկ:
Զատկածաղիկ- մարգարտածաղիկ:
Զարդանկար- դրուագ, ճարտարապետական քանդակ:
Զարդասեղ- շամփրակ . սլաքաձեւ -, ապիզակ:
Զարեհ- ծովասէզ, փամփշտուկ, ծովային բոյս:
Զարկ- (բազկերակի՝ սիրտի՝) բաբախիւն, տրոփիւն:
Զարօշ- լերդախոտ, կենարար, դառնահամ կազդուրիչ բոյս:
Զաւեշտ- խեղկատակութիւն, ծաղրածութիւն, ծաղրալից թատերախաղ:
Զգայարանք- զգայութեան գործարաններ:
Զգաստարան, գ, ապաշխարանոց . բանտ (անառակներու):
Զգուշարան- մաքրանոց, արգելարան (համաճարակի դէմ):
Զեղծարարութիւն- զեղծում, խարդարութիւն, նենգութիւն:
Զեղչ-նուազեցում, գինէն կտրուած մաս մը:
Զեն- զոհ, կորբան, պատարագ, մատաղ:
Զենարան- զոհարան, սեղան . սպանդանոց, մակեղոն:
Զեռուն-  սողուն . որդ, ճճի:
Զեւայ- ուղղաչափ, ձեւոց (ճարտարապետի՝ հիւսնի՝):
Զինադադար- կռիւի դադար . կարճատեւ -, զինադուլ:
Զինաթափութիւն- զէնընկէցութիւն:
Զինանշան- ազնուականութեան եւ իշխանութեան նշան:
Զինարան- զինանոց, զէնքերու գործարան եւ մթերանոց:
Զինկ- կապտորակ ճերմակ մետաղ:
Զինճարակ- խրուկ, կինաբառիս, ծծմբուկ սնդիկի:
Զինուոր- զօրական, մարտիկ, ռազմիկ:
Զինուորանոց- զօրանոց, զօրքի բնակավայր:

Զիստ- ազդր, կշտոսկրէն մինրեւ բարձոսկրի գլուխը . (նաւի՝) յետսակողմ. (ձիու՝) գաւակ:
Զկեռ- զղեար . (ծառը՝) զկեռի, կարծր փայտով:
Զմայ- շնչարգելութիւն, ծանրաշնչութիւն:
Զմելին- գրպանի կտրոց:
Զմուռս- անուշաբոյր խեժառետին (զմռնենիի հոյզ):
Զմռնիտ- սնպատիճ, խիստ կարծր հանածոյ:
Զմրուխտ- կանանչ, ազնիւ քար:
Զնդան- ներքին բանտ, արգելան(ոց), արգելարան:
Զոդիակոս- կենդանակամար՝ տասներկու նշաններով:
Զոհ- մատաղ, կորբան, ողջակէզ, պատարագ, սպանդ. ընծայ, նուէր. դահամունք. (կուռքերու՝) յաշտ:
Զոհարան- ատրուշան, բագին, սեղան:
Զողալ- հոյն, չում, զաւարս, պրրի:
Զողալի- հոյնի, չմենի, դաւարայ:
Զոմբ- փայտէ մեծ բրթակ (ճամբաներ հարթելու) :
Զոմփ- գտակ . աբեղայի կնգուղ:
Զոպայ- անուշահոտ բոյս . –ի խուրձ, մշտիկ, սրսկոց (օրհնած ջուրի):
Զուարակ- ընջուղ, մոզի, բուզ, մատաղ ցուլ:
Զուգաբարձ- երկկողմնազոյգ (եռանկիւն):
Զուգածին- երկուորեակ, երկուորակից:
Զուիրակ- կատաւան, թորթ, թորթիկ, բուժական բոյս:
Զուկի- ստաշխ, ստիւրակ, շեր, սեւ խունկ:
Զուսպ- յունապ. (ծառը՝) զսպենի, յունապի:
Զսպակ-  արգելակ, անուակալ, անուարգել:
Զսպանակ- առաձգական կազմած մետաղեայ՝ բացխփիկ շարժումով:
Զսպենի- զուսպի ծառ, յունապի, փշալից թուփ:
Զստոսկր- կշտոսկր:
Զրահ- պահպանակ, լանջապահ, զաւշան, ճօշան. երկաթահիւս -, թոռոպ, վերըտ:
Զրեւանդ- սղանգ .կլոր -, որդնտակ, բուժական բոյս:

Զօղ- յօղ, կապ. մածոյց (մետաղներ փակցնելու):
Զօրաբաժին- երկու կամ աւելի գումարտակ:
Զօրանցք- անցահանդէս, զօրահանդէս:
Զօրապետ- զօրավար, զօրագլուխ . ընդհանուր -, սպարապետ:
Էշայծեամ- խարբուզ, եղջերուի տեսակ:
Էշխռանջ- մոր(մ), փաղիժ, թունաւոր սարդ:
Ընբան- ստուգնաբրան, որկորի՝ կոկորդի՝ վերնամաս:
Ըմբիշ- ըմբշամարտիկ, գօտեմարտիկ, քուշտընգիր:
Ըմբշամարտ- գօտեմարտ, քուշտիկ:
Ընդակաղամբ- ծաղկակաղամբ, կաղամբի տեսակ:
Ընդեղէն- հնտեղէն, կանանչեղէն, բանջարեղէն:
Ընթացաւարտ- վարժարանէ մը շրջանաւարտ, վկայեալ:
Ընթերցարան- ընթերցատուն. (գիրք՝) ընթերցագիրք:
Ընծայագիր- հաւատարմագիր, վկայական (դեսպանի):
Ընծայարան- դպրեվանք, կղերանոց, վարդապետանոց:
Ընկալագիր- ստացագիր, անդորրագիր:
Ընկերաբանութիւն- մարդկային ընկերութեան երեւոյթներուն վրայ ճառող
գիտութիւն:
Ընկուզենի- ընկուզի ծառ . –ի ուռ, մայծրայ:
Ընձառիւծ- գիշակեր կենդանի պիսակաւոր մորթով:
Թագաժառանգ- գահաժառանգ, պայազատ, թագաւորազուն:
Թագաւորազն- արքայազն, իշխան, պայազատ:
Թաթառ- վիշապ, մրրիկ (սիւնաձեւ՝ պտուտակող):
Թակաղաղ- մակասիւն. (կայմի՝) հայեակ:
Թաղագործութիւն- կահագործութիւն:
Թաղանդաստ- միջատասպան բոյս:
Թաղանթ- մաշկ, պարուտակ, թանթ . (բարակ՝) միզն. (սիրտը պատող՝) սրտակրանք. (լանջքը որովայնէն բաժնող՝) ստոծանի. (ուղեղին երեք –ները՝) գորովենի. սարդոստենի . խստենի . (ջուրին երեսը փոշիէն՝ աղտէ գոյացած՝) թորշ:
Թաղթ- թաղթիկ, թայլ, հոռոմ սպանախ, բանջար:
Թաղիք- կաճ, կառն, կոխելով գործուած՝ խտացած բուրդ:

Թանթռնիկ- շումրայ, ծովային սամիթ:
Թանթրուենի- շամբուկ . վայրի -, ակտոն:
Թանչք- արինախառն փորքշուք:
Թառափկիթ- աղկիթ (ձկան աղած հաւկիթներ):
Թատերաբեմ- թատր, թատերավայր:
Թատերախաղ- խաղ, կտոր, ներկայացում . զուարճալի -, կատակերգութիւն.
ծաղրալից -, զաւեշտ.  եղերական -, ողբերգութիւն:
Թատր- թատրոն . տեսարան, թատերաբեմ, թատերավայր:
Թարախ- շարաւ, խղխայթ . արինոտ -, հու, կառնաջուր . նեխած -, ցում:
Թարգմանութիւն- փոխադրութիւն:
Թարթիչ- թարթեւան, արտեւանունք:
Թարխուն- բոնջաս, բրինձասիս, համեմաբոյս պարտէզի:
Թարմատար- աւելորդ, յաւելադիր (տառ՝ բառ):
Թաւրնջակ- անթառամ ծաղիկ, անմեռուկ:
Թափան- ոռաղի, յետաղի:
Թափնոց- պտուղ թափելու ձող:
Թեզան- (կտաւի՝) նետի թել . (թուղթի լայնքին՝) գծեր:
Թեղանիք- զգեստի թեւ:
Թելահայս- թելթել խմոր (ապուրցու):
Թելաշար- ջուլհակի աղբ, աղբոց:
Թեղ- կալի մէջ կալսած ցորենի թմբաձեւ դէզ:
Թեղի- կնձնի, նշդարենի, պտղի, կարծր փայտով ծառ:
Թեմական- երեսփոխանական (ժողով):
Թերածին- վիժած, պակասաւոր, թերանդամ:
Թերակղզի- մէկ կողմէն միայն ցամաքին միացած հողամաս, ինչպէս Իտալիա:
Թերատ- շեղատ,  ձուաձեւ (գիծ):
Թերթաքար- խաւաքար . հերձաքար (տան ծածքի՝ քարէտախտակի):
Թերթօն- վէպ, վէպիկ՝ թերթի մը վարի կողմը:
Թերոն- համեմներով եփ հանած գինի:

Թեւնոց- շապիկի -, թեզանեակ. (թեւի զարդ՝) ապարանջան:
Թզենի- թուզի ծառ:
Թթախտ- ախներթութիւն, տեռատեսութիւն, թութք:
Թթենի-թութի ծառ:
Թթուածին- նուրբ կազ մը՝ օդին եւ ջուրին մէջ:
Թթռկիչ- թրթնջուկ,գառնականջ (բանջար):
Թիթեռնիկ- թեփաթեւ միջատ, ալիւրմաղիկ:
Թիւմ- ուրց, խազուր, համեմային բոյս:
Թիւրակն- շիլ, խեթ, ծուռ աչք:
Թխսարան- ջերմութեամբ հաւկիթներ թխսելու գործիք՝ փուռ:
Թխսմայր- թխսող հաւ, գռթան:
Թծուծ- խածի, կտնառք, կտակեր թռչուններու առաջին ստամոքս:
Թղթադրամ- երաշխաւորեալ դրամատոմս:
Թղթադրոշմ- դրոշմաթուղթ, նամակադրոշմ:
Թղթածրար- պարութայ, խնդիրի մը՝ դատի մը վերաբերեալ ոլոր թուղթեր:
Թղթապանակ- թղթակալ (փաստաբանի):
Թմբի- կակղի, լոռքի, լորի, ողկուզաձեւ՝ քաղցրաբոյր ծաղիկներով ծառ:
Թմբիչ- կուպի, գաւազան (կաթ ծեծելու):
Թմբուկ- (փոքրը՝)  դափ . (մեծը՝) գուրշ, գոս:
Թնդանօթ- գնդընկէց, հրետ . կարճ -, հրասանդ, սանդար. փոքրը՝ արագահարուած -, խորտընկէց. գնդացիր:
Թնդոց- երկարակոթ թի (կիր խառնելու):
Թողան- մելանաձուկ:
Թոժիւն-  կորիւն, արջի ձագ:
Թոխոր- կուզ, հաւերու՝ թռչուններու թշնամի գարշահոտ կենդանի:
Թոխորն- իժ, քարբ, թունաւոր օձ:
Թոնձ- հաւալուսն, պեղական, փորահաւ, լայնակտուց ջրաւէր թռչուն:
Թոշակաւոր- (պաշտօնեայ՝) վճարուած. (աշակերտ՝)  վճարող:

Թռակուռ- մախաթ, հերիւն, մաստասեղ:
Թորթ- թորթիկ, զուիրակ, կտաւան, բուժական բոյս:
Թուաբանութիւն- թուագիտութիւն:
Թութի- աղպար, զնկի թթուածնատ . աչքի ցաւի դեղ:
Թուլատարր-կակղամորթ . անոսկր անասուն (խխունջ՝ ոստրէ եւն.):
Թուխկատար- երաշտահաւ, մեղուակեր թռչուն:
Թուրինջ- դառն միջուկով նարինջի տեսակ:
Թուրինջ- թրնջխոտ, պատրինջ (մեղուներու սիրելի):
Թուփ- կարճաբուն ծառիկ. –եր, թփաստան, մացառ. (աւել կապելու՝) կանտորի:
Թոք- շնչառութեան գլխաւոր գործարան:
Թոքախտ- ծիրախտ, հիւծախտ, մաշակարան:
Թոքատապ- թոքերու բորբոքում:
Թոքտուն- լանջք . կուրծք:
Թռչնաճանճ- մեղրածուծ, տրոքիղոս, ամենափոքր թռչունը:
Թրծոց- բրուտի հնոց, մեծ փուռ (կաւեղէններ թրծելու):
Ժամագիրք- աղօթագիրք:
Ժամագործ- ժամացոյց շինող՝ նորոգող, ծախող:
Ժամահար- կոչնակ, զանգակ:
Ժամանոց- պատարագի բաժակաման:
Ժամարար- պատարագիչ, պատարագամատոյց:
Ժամասացութիւն- ժամերգութիւն, պաշտամունք;
Ժամկոչ- ժամու սպասաւոր, զանգակահար:
Ժանեակ- ատամնաձեւ նուրբ ասեղնագործութիւն:
Ժանիք- (գազանի՝) ակռաներ, կեռիք, վրիժակ .դէմք:
Ժանտաթզենի- մոլաթզենի, անփուտ փայտով ծառ:
Ժանտախտ- մահտարաժամ, ժահտամահ, խովիկ:
Ժանտաջուր- բորական թթուտ:
Ժանտատենդ- բծաւոր տենդ:
Ժանտափուշ- չեչխան, փշարմաւ:
Ժառանգ- ժառանգորդ . (գահի՝) գահաժառանգ:

Ժառանգութիւն- ազգականական յաջորդութեամբ տիրացուած ինչք:
ԺԺմակ- խեցի, խեցեմորթ:
Ժոխ- արքայամոր .վայրի -, մոր (թթուաշ պտուղ):
Ժողովածոյ- հաւաքածոյ, ծաղկաքաղ, փունջ:
Ժողովարան- եկեղեցի, աղօթարան, մատուռ:
Ժողովրդապետ- գեղերէց . ծխակեր, ծխատէր:
Ժողուենի- ղժնիկ .յակրի, փշոտ թուփ՝ սեւ պտղահատերով:
Իգական- կնոջական, կանացի:
Իգայ- սերմնափակ, էգ գործարան ծաղիկներու:
Իդասար- լաւենի, առուոյտի տեսակ:
Իմաստ- միտք, նշանակութիւն . առում:
Իմաստասէր- փիլիսոփայ:
Իմաստասիրութիւն- փիլիսոփայութիւն:
Իմացականութիւն- միտք, խելք, հասկացողութիւն, ըմբռնում:
Ինձ- ուծ, ընձառիւծ, յովազառիւծ:
Ինքնախօսութիւն- առանձնախօսութիւն. (դերասանի՝) մենախօսութիւն:
Ինքնակալ- ինքնիշխան, միահեծան . կայսր:
Ինքնավար- ինքնիշխան, ինքնօրէն, ազատ, անկախ:
Ինքնավարութիւն-  ազատութիւն, անկախութիւն:
Իշակէս- ջորի:
Իշամեղու- պիծակ, գոռեխ, բոռ .օտար մեղու:
Իշխանազուն- պայազատ, արքայորդի, գահաժառանգ:
Իշխանութիւն- տէրութիւն . ազդեցութիւն.իրաւասութիւն:
Իշղար- գորշուկ, ժանտահոտ ձարեղ կենդանի:
Իշուկ- (ջութակի՝) պրկող, լարակալ:
Իշտրմուղ- ջայլամ, բարձրասրուն մեծ թռչուն:
Իջուած- կաթուած, ուղեղային հիւանդութիւն:
Իրապաշտ- իրը կան անձը իր բոլոր կողմերով պատկերացնելու ձգտող արուեստագէտ՝ գրագէտ:
Իրաւաբան- տե՛ս իրաւագէտ:
Իրաւագէտ- իրաւաբան. օրէնսգէտ:

Իրաւագիր- իրաւունք հաստատող գրութիւն:
Իրաւախոհութիւն- իրաւարարութիւն, դատաստան . համաձայնութիւն:
Իրաւակարգ- սովորութեամբ նուիրագործուած եւ օրէնքով ընդունուած իրաւունքներու ամբողջութիւն:
Իրաւաութիւն- (դատաւորի՝) իշխանութիւն, ձեռնհաութիւն:
Իրաւարար- իրաւընտիր. դատաւոր:
Իրաւունք- արդարութիւն, օրէնք.իշխանութիւն. իրաւաութիւն . հանգամանք . պահանջք:
Լաբիրինթոս- բաւիղ . (ականջի՝) ներքնախորշ:
Լազուարթ- ջրդաքար, պատուական կապոյտ քար:
Լազուտ- եգիպտացորեն, հնդիկ ցորեն:
Լախուր- նեխուր, ձիալախուր, վայրի կաւոս:
Լամբ- հանդերձի -, օղակ, նառն:
Լայնալիճ- մեծ աղեղ:
Լայնաջիղ- ամոլաջիղ, ազդերային աւագ ջիղ:
Լայնատերեւի- սօսի:
Լայքայ- կարմրագոյն խէժ . դոճ, կնքամոմ:
Լանդակ- ծեծածով եւ իւղով  թանձրապուր:
Լանջոսկր- կրծոսկր, կրծատախտակ:
Լաստ- տախտակի շերտ:
Լաստակ (երտ)- տախտակամած, դաստաճաղ, հաստարան:
Լար- քուղ, առասան. չուան, պարան. (մարմինի՝) ձգան. (նուրբ՝) նեարդ. (աղեղի՝) կարթ. (երիվարի ազետակի՝) ողնուլար. (գիրքին կողը պնդելու՝) կողակալ:
Լարակալ- ջութակի պրկոց, իշուկ:
Լաւիտ- արհեստաւորի ունելեակ:
Լեգէոն- գունդ, զօրագունդ .բազմութիւն:
Լեզու- ճաշակելու եւ խօսելու գործարան. բարբառ. (զանգակի՝) ուռ. կշիռքի -, մէտ. փականքի -, սողնակ:
Լեզուաբանութիւն- լեզուաքննութիւն:
Լեղ- շպլող, պաղլեղ, արզն, հանքային կրկնակ աղ:
Լեղակ- լեղակենիի տերեւներէն հանուած կապոյտ ներկանիւթ:

Լեմոն- կիտրոն:
Լեռնադաշտ- սարահարթ, հարթ բարձրաւանդակ:
Լեռնակ- սարակ, բլուր:
Լեռնաշղթայ- լեռներու շարք, գօտի:
Լեսան- լեսելու քար (ներկարարի, դեղագործի եւն.):
Լերդաբոյթ- լեարդի իւրաքանչիւր թեւ:
Լերդախոտ- զարօշ . կենարար, կազդուրիչ բոյս:
Լիալուսին- լրացած լուսին (14 օրուան):
Լիմոն-կիտր, կիտրենիի թթու հոյզով պտուղ:
Լինդ- ակռաները մասամբ պատող միս:
Լիսեռն- (անիւի՝) սեռն, սռնակ, առանցք:
Լիսեռն- լիսեռնիկ, ծնկոսկր, կողոփոց:
Լիսեռնիկ- բեռնաբարձ ճախարակ, ծիծեռնիկ:
Լծակ- ծանր առարկայ մը տեղէն շարժելու ձող . պարզունակ, նիգ:
Լծոսկր- այտոսկր:
Լծորդ- կցորդ, ընկեր . (տառ՝) համարժէք:
Լծորդութիւն- կցորդութիւն . (բայերու՝) խոնարհում:
Լնդազարութիւն- լնդահարութիւն, լինդերու հիւանդութիւն:
Լնդատապ- լինդերու բորբոքում:
Լոլիկ- ոսկեխնձոր, պոլտիկ, ուտելի եւ համեմաւոր պտուղ:
Լոռքի- լորի, կակղի, թմբի, ողկուզաձեւ քաղցրաբոյր ծաղիկներով ծառ:
Լոսդի- սաղմոն, կարմրամիս ձուկ:
Լորձնաթաղանթ-խլնաթաղանթ, խլնամաշկ, լորձունք՝ խլինք արտադրող թաղանթ:
Լորտնուկ-շողոտ, կոխլանճ, ցամաքային կակղամորթ առանց խեցիի:
Լորցք- պրկախտ, ստնգանք, մկնակծկութիւն:
Լուադեղ- խաշ, լուախոտ:
Լուբիա- բակլայ. կանանչ -, սլիկ:
Լուիճ- բողբոջակեր ճճի, որթատունկի միջատ:
Լուծողական- մաքրադեղ, փորը քշելու դեղ, սչադեղ:

Լումայ- ստակ, դանգ, խերեւէշ, բնիոն, հաքարակիտ:
Լուսաբեր- արուսեակ, աստղիկ, այգաստղ, գիշերավար:
Լուսաճճի- լուսատտիկ, կայծոռիկ, փոսուռայ:
Լուսանցք- էջի պարապ եզր:
Լուսարան- մկրտարան, աւազան:
Լուսարար- ժամի ճրագավառ պաշտօնեայ:
Լուսն- մեգ վարագոյր, աչքի հիւանդութիւն:
Լուսնթագ- ամենամեծ մոլորակ՝ հինգ արբանեակներով, Փառազնոտի:
Լուսնոտութիւն- լուսնաժէտութիւն, ջղային ծանր հիւանդութիւն:
Լուսոռիկ- կայծոռիկ, փոսուռայ, շողարձակ ճճի:
Լուտաս- ներգիւն, յունապի տեսակ քաղցրահամ պտուղ:
Լպուտ- աղեղով բամպակ եւ բուրդ նետող:
Լպրծուկ- երկրմայր, որդ (անձրեւներէ վերջ տեսանելի):
Լսարան- ունկնդրավայր, սրահ (բանախօսութեան):
Լսելիք- ականջ, լսողութիւն . երաժշտական ընդունակութիւն:
Լսնոսկի- գորշասպիտակ ոսկի:
Լսողութիւն- լսելիք, ականջ . երաժշտութեան յարմարութիւն:
Լօշ- արջտակ, խոզահաց, խոզերուն սիրած արմատով բոյս:
Լօշտակ- խորձուիլ, մարդախոտի՝ մանրագորի արմատ:
Լօռ- մօռ, ջրիմուռ. խօզ . գորտնբուրդ:
Խազ- մազերու գիծ, հերագիծ. երաժշտական -, ձայնանիշ . սիւներու վրայ -,
մատնէք:
Խազմուզ- քաղցու, մռմռուկ .եփած -, մաթ:
Խազուր- թիմ, ուրց, անուշաբոյր տունկ:
Խաժմատ- մատանեմատ, մաճուճիկ մատ:
Խալ- (մարդկային մորթի վրայ՝) ծին, նիշ. (կենդանիներու՝ ) պիսակ, խայտուց:
Խալիզոն- խխունջ, ականջի արտաքին մաս, պօղոսիկ:
Խալիկ- տիզոսկր, բազկոսկր (վերին):
Խալխալ- ոտնապարանջան (արծաթէ):

Խախաց- մամաց, մարսողութենէ յետոյ արիւնի հետ խառնուող հեղանիւթ. մակարդ:
Խախացոց- դեռ կաթնկեր որոճողներու չորրորդ ստամոքսը՝ ուր կը գտնուի խախացը ՝ բնական մակարդը:
Խաղ- երգ, ցուցք:
Խաղ- յօղ, յօղուած (անդամներու):
Խաղախորդ- կաշեգործ, մորթագործ, ճօն:
Խաղաւարտ- պալար, այտուց. պզտիկ -, բշտիկ, շուտ, ծտիկ, պուտ, պտիկ,
պաղպաջ, խաղ:
Խաղբ- հաղբ, որոզայթ, ծուղակ, դարան, թակարդ, վարմ:
Խաղխամ- վանդակամատ, վանդակաձող, բարաբմունք, քանոն:
Խաղճախուղճ- աճառ, կռճիկ, հրճրճուկ:
Խաղճմունք- նշիկ, գեղձ, անջատումի եւ թորումի գործարաններ մարմինի մէջ:
Խաղտուտիկ- խաշնահաւ, շարունակ պոչը շարժող թռչնիկ:
Խամծեկ- վարի կզակ, ծնօտ, ծամելիք (ձիերու):
Խայծղան- խայտան, ցուպան, կտրան, լոյծ սեւ ձիւթ:
Խայտահաւ- նումիդահաւ (փասիանի նման):
Խայտիտ- սարեկիկ, սերինոս, երգասէր թռչնիկ:
Խանթեփուր- դեղուկ, ողկուզակ, քաղցրաբոյր կծուահամ բոյս:
Խանտալայ- մլուկ, փայտոջիլ, գարշահոտ ճճի:
Խաշ- լուաղեղ, լուախոտ:
Խաշխաշ- մեկոն, մաք. վայրի -, հարսնուկ, շարխուն:
Խաշնահաւ- խաղտուտիկ, շարունակ պոչը շարժող թռչնիկ:
Խաշնարած- հովիւ. -, կին՝ աղջիկ, հովուուհի:
Խաշնդեղ- գաբծիլ, խաւարծիլ, ռեւանդ, թթուանոյշ բոյս:
Խաչ- խաչափայտ, քառաթեւ. չարչարանք, տանջանք. Քրիստոնէութիւն:
Խաչապաշտ- քրիստոնեայ, Քրիստոսի հետեւող:
Խաչափայտ- խաչ:
Խաչերկաթ- կրակարանի եռոտանի:
Խաչվառ- խաչադրօշ (եկեղեցական):

Խաչվերաց- խաչի վերացման տօն:
Խառնածին-  երկու տարբեր տեսակներէ ծնած:
Խառնարան- հրաբերան (հրաբուխի):
Խառնիճ- մանր մարախ, մորեխ:
Խառնուածք- կազմուածք, բնաւորութիւն, բնութիւն. բարք, նկարագիր, խմոր:
Խարազն- խորգ, խուրձ, քուրձ, մազկամաս:
Խարամ- աղտ, կղկղանք հալած մետաղներու:
Խարբուզ- վերջասպետ, էշայծեամ:
Խարիսխ- (կոթողի՝ արձանի՝) պատուանդան. (սիւնագլուխ՝) վերնախարիսխ:
Խարձ- շամբ, եղեգնուտ, եղեգնապուրակ:
Խաստի- մեծ գրաստ (սերնդագործութեան):
Խարտոց- խարտելու գործիք. մեծ ակռաներով -, դագուր:
Խարտումայ- կաւար, տան ծածքի նուրբ տախտակ:
Խաւարծիլ- գաբծիլ, ռեւանդ, թթուանոյծ բոյս:
Խաւարում- մթագնում  (արեւի՝ լուսինի՝ փառքի):
Խաւարտ-, բանջար, բանջարեղէն, կանանչեղէն. ընդեղէն:
Խբարդեայ-, խնկանոց, խնկաման:
Խելապատակ- ուղեղը պատող երեք թաղանթները՝ գորովենի, սարդոստենի,
խստենի:
Խեղանդամ- հաշմանդամ, թոնծ. ձեռքով -, փեցի:
Խեղկատակ- ծաղրածու, միմոս, հտպիտ, ծաղրասէր:
Խեղկատակութիւն- ծաղրածուութիւն, միմոսութիւն, հտպտանք:
Խեղութիւն- խեղանդամութիւն, հաշմութիւն, պակասութիւն:
Խենթանոց- յիմարանոց, յիմարներու հիւանդանոց, փրկիչ:
Խեչ- չեչ, չանչ, շիւ, կոխած (խաղողի):
Խեչակ- նեցուկ, յենակ (մատաղ ծառերու՝ բոյսերու). խեչմայր (որթատունկի):
Խեչափառ- կարբ, ողորկպատեան զեռուն ծովային:
Խեցատ- դաշխուրան, ծափ, կաւէ տափակ աման:

Խեցեգործ- կաւագործ, բրուտ, կաւէ ամաններ շինող:
Խեցեղէն- կաւեղէն. յախճապակեայ:
Խեցեմորթ- ժժմակ, խեփոր. (երկպատեան՝)կտին:
Խեցի- (խեցեմորթի) կեղեւ, պատեան, խեփոր, տիփ, կօտ:
Խեցի- ժժմակ, խեցեմորթ, ողորկպատեան զեռուն:
Խզօն- քաղուած խոտի մնացորդ:
Խէժ- խիժ. արաբական -, կռէզ. դոճի -, լայքայ. ձգական -, ձգախէժ. բեւեկնի -, ռետին:
Խթում- նաւակատի, նախատօնակ, ճրագալոյծ:
Խիթ- խոցտուկ, ցաւ, խայթ. փորցաւ. գալար:
Խիպար- մանրաքար (պատերու պարապութիւնը լեցնելու):
Խիւս- փոխինդ, խաւիծ. (մանուկներու ծծելիք՝) կօտակ:
Խլատեռ- քցափ, լայն երկայն վզնոց կանանց:
Խլեփ- դրդի, անուշաբոյր ուռենի:
Խլինդ- սոխ (ծաղիկի), սոխարմատ, կոճղէզ:
Խլիրդ- խոլխեցգետնի, սարատան, կարկինոս, այտուցաւոր ախտ:
Խլմուկ- դաշտամուկ:
Խլօպուզ- նաւրայ, շնդեղ, սապտուկ, ձիւնածաղիկ:
Խծիպ- կտաւին եզերքը ոլորելով կար(ուածք):
Խծուծ- (կանեփի՝ վուշի՝) խոշրտուք, սանտրուք. (հրազէնի՝) քուղ. (իլի վրայ
փաթթուած՝) բոժոժ:
Խղխայթ- պալար. թարախ. թարախոտում:
Խճանկար- մանր խիճերով յօրինուած նկար:
Խճուղ- (միսէ՝) երշիկ. (քաղցուէ՝)շոպակ:
Խմբարան- (ժամու՝) կոնք, նաւ:
Խմբերգ- խմբով երգելի:
Խմելիք- ըմպելիք, խմիչք.արբեցուցիչ -, ոգելից -:
Խմի- համեմային եւ բուժական բոյս:
Խմոր- զանգուած, հայս. (մածունի՝ պանիրի՝) մակարդ, խախաց. (ապակեգործի՝) մածիկ:
Խմորուկ- մեծահատ՝ նուազ ախորժահամ ելակ:

Խնկածաղիկ- մարեմխոտ, խնկողկուզիկ:
Խնկաման- խնկանոց, խբարդեայ:
Խնձորենի- խնձորի, խնձորաբեր ծառ. վայրի -, ալոճենի:
Խնձորխոտ- անթեմ, երիցուկ, ճփնի, կուծուռի, պապունիճ:
Խնոցի- ծփոց, ձձում, կաթէն կարագ հանելու գործիք:
Խշտեկ- հագուստի անթատակի կտոր:
Խոզախտ- խոզատանձ, խոզք, խոյլ, գեղձերու ուռեցք:
Խոզենի- խոզի միս, խոզի մորթ:
Խոզկաղին- խոզի բալուտ, խոզակ, մոմոչ, վայրի կաղին:
Խոզուկ- կոզնակ, փշապատ ոզնետեսակ:
Խոլխեցզետի- խլիրդ, սարատան, կարկինոս, այտուցաւոր ախտ:
Խոլորձ- ձուատակ, աղուեսաձուք, որձարմատ:
Խոհեակ- խոհարարի օգնական:
Խոյ- ոչխարի արու. (կրտածը՝) մալ:
Խոյակ- սիւնագլուխ, ախաւեղազէս, սիւնգդակ:
Խոյր- արտախոյր, կինդար. թագ. վարսակալ:
Խոնաւաչափ- օդին խոնաւութիւնը չափող գործիք:
Խոշակ- ծառերու փտութիւն, բոյսերու ժանգառութիւն. ցորենաբոյսի դալուկ երեւիլ, ածխահարութիւն:
Խոպանուկ- փշամոլի, օրոճ, խոպան տեղեր սիրող բոյս՝ որ այրելով՝ հողը պտղաբեր կը դարձնէ:
Խոռ- դաղձ, անանուխ. վայրի -, կաղամինթ:
Խոստովանահայր- խոստավանցնող քահանայ:
Խոստովանութիւն- ճանաչում(մեղքի՝ յանցանքի՝). դաւաճանութիւն (հաւատքի):
Խորակ- նաշիհ, գերմակ, սիմինդր, նուրբ ալիւր:
Խորան- վրան, տաղաւար. (Իսրայէլացւոց՝) Տաճար. (Քրիստանէից՝) սեղան. (Հեթանոսաց՝) բագին. (հին Պարսից՝) ատրուշան. (տապալիի՝) դուռ:
Խորդ- կռունկ, գռէ, գաղթող թռչուն:
Խորդակ- բեռնաբարձ մեքենայ:
Խորդենի- կռնկենի, աղաւնեկտուց, բուրաւէտ զարդաբոյս:

Խորխ- սողունի մորթ. օձի շապիկ, պարկուճ, պատիճ, պահուկ, բաճիճ, պատեան:
Խորհրդատետր- պատարագամատոյց տետր:
Խորհրդարան- ժողովարան. երեսփոխանական ժողով:
Խորձուիլ- լօշտակ, բուժական բոյս. (արմատը՝) մանրագոր, մարդախոտ:
Խորձուիլ- որթատունկի ծիլ, աչք, ակնաուռ:
Խորշակ- հարաւային տաք հով:
Խորտիկ- համադամ, դահամունք, ընտիր կերակուր:
Խոց- վէրք. հինցած -, կեղ:
Խուժանավար- ամբոխավար, խռովարկու, հրձիգ:
Խուլինջ- կռնակի ուռեցք:
Խուխաբեր- խուխին ելքը դիւրացնող դեղեր:
Խունկ- անուշաբոյր ռետին. չափազանցուած գուեստ, շողոքորթութիւն:
Խունջ- կտրուած ծառին արմատին վրայ թողուած կոճղ:
Խուց- սենեկիկ, առանձնոց (կրօնաւորի՝ նաւորդի):
Խոփակալ- առատամ, խոփը եւ կորեպեղը հաստատ բռնող փայտ՝ երկաթեայ ներբանով:
Խպիպ- ուռ պարանոցի:
Խռիկ- ձկնականջ:
Խռնդատ- եզնագի (բուժական բոյս):
Խռչակ- փոքր ոսկոր սրունքի, նրբոլոք:
Խռչակ-խռչափող:
Խռչակաբերան-խռչագլուխ, ձայնարան, հազագ:
Խռչափող-խռչակ, շնչափողի վերին մաս եւ ձայնարան:
Խռտուռ- ադամախնձոր, խռչափողի ցցուն մաս:
Խստենի- կարծրամաշկ (ուղեղի երեք մաշկերէն պնդագոյնը):
Խրուկ- կինաբառիս, զինճարակ, ծծմբուկ սնդիկի:
Խօզ- ջրիմուռ, գորտնբուրդ, լօռ, մօռ (ծովաբոյ):
Խօթութիւն- հիւանդութիւն, տկարութիւն:
Խօսարան- լեզու, բերան. հիւրասրահ, դահլիճ:
Խօսնակ- փաստաբան, ջատագով . պաշտպան. աքաղաղ:

Խօսք- ասացուածք. զրոյց, խօսակցութիւն. հրապարակային ճառ, հրապարակախօսութիւն, բանախօսութիւն. պատուոյ -, խոստում, երդում. -, տանող, լրաբեր, քսու, փասքուս. ծանր -, նախատինք, վիրաւորանք. պարապ -, զրաբանութիւն, բարբաջանք. (ըստ քերականութեան՝) նախադասութիւն:
Ծաթրին- ծաթոր, ծօթրին, սաթիր (անուշաբոյր բոյս):
Ծախք- վաճառում, վաճառք. ելք. սպառում:
Ծաղկազարդ- մեծ պահքի վերջին կիրակին:
Ծաղկակաղամբ- ընդակաղամբ, կաղամբի տեսակ:
Ծաղկաքաղ- հաւաքածոյ, հատընտիր. փունջ:
Ծաղրանկար- ծաղրապատկեր:
Ծամակ- արօր մաքրելու գաւազան:
Ծամելիք- (վերի՝) ծնօտ. (վարի՝) կզակ. (յառաջաման՝) դունչ. (ձիու՝) խամծել:
Ծանծ- ցորենի՝ վարսակի փոճոկ, կճեպ:
Ծանրաշնչութիւն- դժուարաշնչութիւն, զմայ:
Ծանրաչափ- օդին ճնշումը չափելու գործիք:
Ծանրոց- ինքնափակ դրան փակիչ:
Ծառաստան- դարաստան, պուրակ:
Ծառկոտոտ- ծառկոտիկ, փայտփոր (թռչուն):
Ծաւալոց- կրօնատարած ժողով:
Ծափ- դաշխուրան, խեցատ, կաւէ տափակ անօթ:
Ծափկոտրուկ- պուտ, պտիկ, պտուկկոտրուկ, փիննայ, գեղեցիկ՝ թունաւոր՝ անհոտ ծաղիկ:
Ծեծած- ցորենի -, կորկոտ. վուշի՝ կանեփի -, խծուծ:
Ծետուկ- որդ (միսի ճանճ):
Ծերակոյտ- ծերերու ժողով. բարձրագոյն օրէնսդիր մարմին:
Ծեփ- (հողով՝) ցեխ, կաղջին. (հողուկիրով՝) շաղախ. (յարդով՝) մոլ. (անօթներու բերանը գոցելու՝) մորտ, շոխ, շողախ. (գաճով թեթեւ՝) բուռ. կիրով -, կրածեփ. սոսնձախառն գաճով -, կճածեփ. խայծղանով -, նաւածեփ:
Ծեփիչ- ծեփելու գործիք:
Ծեփուկ- թլիփ, աւելամորթ, պատճոյճ:

Ծէս- արարողութիւն, ծիսակատարութիւն (կրօնական)։
Ծիծեռնիկ- լիսեռնիկ, բեռնաբարձ ճախարակ։
Ծիղ- ծղօտ, ցօղուն, կոթուն, ոճ. (հնձուած ցորենաբոյսի՝) տակուք, խոզան, ծղօն։
Ծիսարան- մաշտոց, եկեղեցական արարողութեանց վրայ։
Ծիր- շրջան(ակ), բոլորակ, պարունակ, շրջագիծ, պարոյր, սահման, ոլորտ. – Կաթին, Յարդգող. լուսինի -, բակ։
Ծիրանաքար- պորփիւր, մութ կարմիր քար։
Ծիրանի- արքայական զգեստ։
Ծիրիխտայ- պտուղով կարկանդակ։
Ծիւրախտ- հիւծախտ, մաշարայ, բարակցաւ։
Ծխատէր- ժողովրդապետ, գեղերէց։
Ծխատուն- երիցատուն, քահանայատուն։
Ծծմայր- ստնտու, դայեակ, ծծկան։
Ծծմոր- ցորենածաղիկ, կապոյտ տերեփուկ։
Ծծոց- միջատներու կնճիթ։
Ծծումբ- մետաղակերպ հանածոյ՝ դեղնագոյն՝ դիւրավառ։
Ծղի- նախաբազուկ. (մեծ ոսկորը՝) ծղոսկր. (փոքրը՝) ճաճանչոսկր։
Ծղնի- աղկիոն, ծաղրիկ թռչուն ծովային։
Ծղրիթ- ճռճռան՝ ոստոստող միջատ. (ընտանի՝) արուսիկ։
Ծնաբերան- արգանդաբերան։
Ծնգակապ- զանկապան, գուլպակապ։
Ծնեբեկ-կոթուններուն ծայրերը ուտելի բոյս։
Ծնծղայ- երաժշտական գործիք՝ սկաւառակաձեւ։
Ծնկոսկր- լիսեռնիկ, կողոփոց։
Ծննդաբերութիւն- ծնունդ, տղաբերք, մանկածնութիւն։
Ծնօտ- կզակ, դունչ. (ձիու վարի՝) խամծեկ. (միջատի՝ ) աքծան. (տանիքի՝) քիւ. (շինուածքի՝) պսակ. (վառարանի՝) դարաւանդակ։
Ծոթոր- ծոթրին, սաթիր, անոշաբոյր բոյս։
Ծոծրակ- շիշք, շլնիք, բուճուճակ, շրուշակ։
Ծոմ- պահեցողութիւն, կամաւոր անօթութիւն։

Ծովածոց- ծոց, ծովախորշ, խորշ:
Ծովակալ- ծովապետ, ծովի սպարապետ:
Ծովամայր- մեդուսա, կենդանաբոյսի  տեսակ:
Ծովանկար- ծովային տեսարաններու պատկեր:
Ծովանկարիչ- ծովային տեսարաններ նկարող:
Ծոր-  կոծախուր (թթուաշ պտուղ). (թուփը՝) ծորենի:
Ծոց- գոգ, գիրկ. մէջ. (մօր՝) արգանդ. (ծովի՝) խորշ, ծովածոց.
(ծովի ներքին՝) ծուար:
Ծուաղ- կեռասազգի պտուղ. (թուփը՝) ծուաղենի:
Ծուխ-  (կղերի) ծխական, վիճակ, թեմ:
Ծուծ- ուղեծուծ, ողնայարի -, ողնածուծ. (բոյսի՝) սրտուկ, սօթ,
միջուկ:
Ծուծ- քթափող, ռունգն. (ձիու՝) պինչ:
Ծունկ- գուճ. (ցողունի՝) կապ, հանգոյց, մայրան:
Ծպեղ- հեծան, մարդակ (առաստաղի՝ յատակի):
Ծպեղակալ- տանիքի ողնայար (գերան):
Ծռազատիկ- Յունական կաղանդ, օր մը որ երբեք չի գար:
Կազմատուն- գրակազմի աշխատանոց:
Կազմարար- գրակազմ:
Կաթնապուր- կաթով՝ բրնձով՝ շաքարով կերակուր:
Կաթոլիկ- պապական, հռոմէական:
Կաթողիկէ- մայր եկեղեցի, մեծ եկեղեցի:
Կաթողիկոս- հայրապետ, հովուապետ, եպիսկոպոսապետ:
Կաթողիկոսարան- հայրապետարան. վեհարան:
Կաթուած- իջուածք, ուղեղային հիւանդութիւն:
Կալանաւոր- բանտարկեալ, գերի:
Կալանդիչ- բեկաբոյժ, վնասուած անդամները կապող:
Կալաքար- կալաղ, օշնանաղ, աղային գոյացութիւն:
Կալուածագիր- կալուածին սեփականութիւնը հաստատող գիր:
Կալուածատէր- հողատէր, տանտէր, սեփականատէր:
Կալուածատոմար- կալուածները իրենց չափերով
արձանագրող տոմար:
Կախակայել-առկախել, ատեն մը դադրեցնել, արգիլել:

Կակազ- թլուատ, քաղթնատ, դժուարաւ եւ կրկնելով խօսող:
Կակղամորթ- թուլատարր, լերկամարմին. անոսկր անասուն:
Կակղի- թմբի, լոռքի, լորի, մեծ ծառ քացրաբոյր ծաղկիներով:
Կամար- աղեղնաձեւ շինուածք:
Կամարակալ- կամուրջի -, տուտր:
Կամուրջ- գետի կամ փոսի վրայ շինուած ճամբայ:
Կամփակ- սրուակ, ապակեակ:
Կայծ- կարմիր յակինթ, սուտակ:
Կայսր- ինքնակալ. (կինը՝) կայսրուհի:
Կայսրութիւն- պետութիւն, իշխանութիւն:
Կանամբի- ամուսնացած մարդ:
Կանանոց- խւլամուհիներու յատուկ յարկաբաժին, խորոպճին:
Կանանչեղէն- խոտեղէն, բուսեղէն, բանջարեղէն. ընդեղէն:
Կանթեղխոտ- հողմափայտ, ծիծռան ծաղիկ (խաշխաշազգի):
Կանխավճար- սկիզբէն վճարում:
Կանխիկ- վճարումը անմիջապէս:
Կանկառ- արտիճուկ, արճճուկ (բանջարեղէն):
Կանճրուկ- վայրի շողգամ:
Կանոն- կարգ, օրէնք. կանոնագրութիւն:
Կաշեգործ- խաղախորդ, մորթագործ, ճոն:
Կաշեգործութիւն- խաղախորդութիւն, մորթագործութիւն:
Կաշի- մորթ, մաշկ. (ոչխարի՝ այծի՝) խաղախորդուած, սեկ. (իշու՝ ջորիի՝) պատրաստուած -, քեմուխտ. (խոզի) քերթուած -, կենինայ. ոչխարի -, բուրդով, զգաթ. (վրան հին ձեռագիր գրուած՝) մագաղաթ:
Կապ- զօդ. (մատերու՝) յօդ. (ցօղունի՝) ծունկ, ծնգակապ, հանգոյց. (յարաբերութիւն՝) առնչութիւն, աղերս.(շան՝) տոռն, խառան. (պարանոցի՝) փողկապ. (վէրքի՝) պատան, վիրակապ. (խախտած անդամը կապելու՝) կալանդ. կաշիէ -, փոկ. կօշիկի -, խրաց. (կալանաւորի ձեռքերուն՝) ձեռակապ. մազի -, ժապաւէն. դրոյս, վարսակալ, ծամակալ:
Կապայ- (կղերի՝) պարեգօտ, պճղնաւոր. կարճ -, կապեկ:
Կապայ- (կանաց՝) պարեգօտ, շրջազգեստ:

Կապանք- շղթաներ, գերութիւն. արգելք. (եկեղեցական՝) բանադրանք, նզովք:
Կապերտ- ծուէն, քուրջ, ցնցոտի. (կարպետ՝) գորգ:
Կապնդեղ- քաշմ, քեղակարոս, վայրի կարոս:
Կապոց- ծրար, տրցակ, պատատ. խոտերու -, խուրձ. ցորենի -, որայ. ճիւղիկներու -, ոջին. ապրանքի մեծ -, հակ, դերձ:
Կապրցախ- կապարենի, կօրաք. (պտուղը՝) կապար համեմային:
Կառավարիչ- վարիչ. քաղաքի -, քաղաքապետ. նահանգի -, կուսակալ. (հին ատեններու՝) մարզպան:
Կառավարութիւն- վարչութիւն, իշխանութիւն. տէրութիւն, պետութիւն. (նախարարական ժողով՝) դահլիճ. - անձին, ինքնազսպում:
Կառափ- գլուխ, գանկ, սկաւառակ (գլխու):
Կառափնատ- գլխատելու գործիք:
Կառք- փոխադրութեան կազմածք. (առկախ՝) դեսպակ. (ձեռքի՝) ոպնակ. (բեռան՝) սայլ. (նորաքայլ ամնուկներու՝)ճռնիկ, գռնել. (երկանիւ թեթեւ՝) թրթրակ. (խումբով փոխադրութեան՝) հանրակառք. շոգեշարժ -, շոգեկառք. ինքնգործ -, ինքնաշարժ:
Կասկ- հերիսայ, կորկոտով ու միսով կերակուր:
Կասկ- շագանակ, մաշկամիրգ, կաստան:
Կասկամ- բուէճ, բուիճակ:
Կասկենի- շագանակենի, կաստաճենի, շագանակի ծառ:
Կատակաբան- զուարճաբան, զուարճախօս, ծաղրաբան:
Կատակերգակ- ծաղրերգու. (հասարակ՝) խեղկատակ, հտպիտ:
Կատաւան- թորթ(իկ), զուիրակ, բուժական բոյս:
Կատիկ- մակալեզու, կողկողիթ, կափարիչ հազագի մուտքին վրայ:
Կատիկ- պահոց օր:
Կատուախոտ- մրուան(տակ), բուժական բոյս:
Կարասի- կահ, կազմած, գոյք:

Կարգ- շարք, շարան, տող, տողան. սովորութիւն.(աստիճան՝) դաս, դասակարգ. (վարժարանի՝) դասարան. (կանոն՝) կանոնագիր, օրէնք. (եղանակներու՝) շրջան, դարձ. (յաջորդական՝) յաջորդութիւն. (երկրգունտի կեղեւին՝ ընկերութեան՝) խաւ. (եկեղեցականի՝) աստիճան. (միաբանական՝) միաբանութիւն, ուխտ. (ժողովի խնդիրներ՝) օրակարգ. (յօրինուածական՝) կապակցութիւն:
Կարգազուրկ- կարգընկէց (եկեղեցական):
Կարգաթող- կարգուրաց (եկեղեցական), ուխտազանց, ուխտադրուժ:
Կարթ- (ձկնորսի՝) խնձոց, ապուռ. (կօշիկի՝) խթան.(պատուհանի՝ դրան՝) կեռ, ճանկ. (աքաղաղի ոտքերուն՝) բիտ:
Կարթ- ծունկին ետեւի կողմը:
Կարծրամաշկ- խստենի, երրորդ՝ թանձրագոյն մաշկ ուղեղի:
Կարկահ- ասեղնագործի փայտեայ կազմած:
Կարկեհան- նռնաքար, ասկն:
Կարմիրտակ- տակ, ճակնդեղ, քաղցրհամ արմատ բազուկի:
Կարմրալանջ- խայտաւ, երգեցիկ թռչնիկ:
Կարմրացաւ- կորեկկտիկ, կորեկանման այտուցներ գոյացնող տենդ:
Կարմրուկ- վարդագոյն:
Կարմրուկ- կարմրախտ, շառատենդ, մորթի փոխադրական հիւանդութիւն:
Կարող- դերձակ. – կին, կարուհի, դերձակուհի. կօշիկ -, կօշկակար:
Կարպենի- նշդարի (անտառային ծառ ընտիր փայտով):
Կարպետ- օթոց, գորգ, բուրդէ կամ մազէ սփռոց:
Կացուրդ- հանդես, հանդիսութիւն, տօն, տօնախմբութիւն. (երաժշտական՝) նուագահանդէս:
Կաւար- խարտումայ, տան ծածքի նուրբ տախտակ:
Կաւիճ- կրաքարի խիստ կակուղ տեսակ:
Կափուլ- ծուղակ, որոգայթ. թակարդ, դարան:

Կաքաւ- պար, կայթիք:
Կաքաւ- վայրի թռչուն համեղ միսով:
Կեղանկ- խողովակաձեւ խոր վէրք (թափանի) :
Կեղար- մառան, շտեմարան, ընտանիքի պաշարի մթերանոց:
Կեղծամաշկ- տարափոխիկ հիւանդութիւն խլնային թաղանթներու:
Կեղցաւ- կերցաւ, քաղցկեղ, փտախտ:
Կեմ- վարսնակ, հիւսելի տերեւներով բոյս. (չուան՝) որաներ՝ խուրձեր կապելու:
Կենարար- զարօշ, լերդախոտ (վիրադեղ):
Կենդանաբանութիւն- կենդանիներու վրայ գիտութիւն:
Կենդանագիր- պատկեր, նկար, իւղանկար. նկարագրութիւն:
Կենդաւրոս- յուշկապարիկ, մարդաձի:
Կենեղուտ- եղեսպակ (վայրի թէյ):
Կենսաբանութիւն- գործարանաւոր մարմիններու կեանքի մասին գիտութիւն:
Կեռասեղ- ճանկաւոր, կեռածայր ասեղ:
Կեռասենի- կեռասի ծառ. (թթուաշ պտուղով՝) բալենի. (վայրի՝) նորգենի:
Կերոտ- աստիճան (ոսկիի):
Կերոն- մեծ մոմ:
Կերպաս- պաստառ. (մետաքսէ՝) դիպակ. (բուրդէ՝) ասուի. (բամբակէ՝) կտաւ. (վուշէ՝) քթան.( բամբակէ աստառցու՝) խատեակ:
Կզակ- ծնօտ, ծամելիք, դունչ. (ծուռ՝) պռթօշ. (ձիերու ստորին՝) խամծեկ. (միջատներու՝) աքցան:
Կզակակապ- ծնօտակապ (սաղաւարտի՝ գլխանոցի):
Կզաքիս- (ճերմակ՝) կնգում, ախազ, յափշտակիչ գարշահոտ կենդանի:
Կիզակաւ- կիզահող, հողածուխ, բուսածուխ, տորփ:
Կիթառ- փանդիռ (լարաւոր նուագարան):
Կիպարիս- նոճի (նրբաւարտ մշտադալար ծառ):
Կիտր- լիմոն (կիտրենիի պտուղ՝ թթու հոյզով):

Կիտրոն- կիտրէն շատ աւելի մեծ եւ թանձրակեղեւ պտուղ՝ որուն կեղեւէն քաղցրաւենի կը պատրաստուի:
Կիր- շաղախի՝ ծեփի գործածելի ճերմակ հանածոյ:
Կիրճ- կապան, լերանցամէջ,ցանցուկ, խինձ:
Կլայեկ- անագ (խոհանոցի պղնձեղէններ անագազօծելու):
Կլիմայ- երկրի մը մթնոլորտական վիճակներուն ամբողջութիւնը:
Կծկում- ամփոփում, պրկում, գալարում, ձգտում. (սրտի՝) կծկանք, սեղմում. (միզանցքի՝) անձկացում. (ջիղերու՝) գալարում, կարկամում, լորցք:
Կծմնծուկ- վառվառեակ (աղցանի բանջար կծուահամ):
Կղերականութիւն- եկեղեցականութիւն, քահանայութեան ուխտ:
Կղերանոց- դպրեվանք, ընծայարան, վարդապետանոց:
Կղմուխ- լաստենի, անտուզ, բուժական բոյս:
Կճատ- մոմպատ, ոլորած բարակ մոմ:
Կճղակ- եղունգ եզի. սմբակ (ձիու՝ ջորիի՝ իշու եղունգ):
Կմախք- ոսկրոտի. (գրութեան մը՝) ուրուագիծ:
Կնգում- ճերմակ կզաքիս, յագի մորթով գարշահոտ կենդանի:
Կնդրուկ- ազնիւ խունկ:
Կնձնի- պտղի, թեղի, նշդարենի, կարծր փայտով ծառ:
Կնճիթ- ցռուկ. (փիղի՝) պատիճ. (միջատներու՝) ծծոց:
Կնճիթ- շուշմայ (իւղաբեր տունկ):
Կնունք- մկրտութիւն, դրոշմ:
Կնքահայր- մկրտելի երախան բռնող:
Կնքամայր- մկրտելի երախան բռնողի կին:
Կշայ- կուպր, ասփալտ, հանքային՝ ռետնային սեւ նիւթ:
Կշռոյթ- կշռութիւն, չափականութիւն, դաշնաւորութիւն (երաժշտական՝ քերթողական):
Կշտոսկր- զստոսկր:
Կոզռն- ուղտի ձագ:
Կոթող- արձան, յուշարձան, յիշատակարան:
Կոլհատ- տորմ, շոկոլադ:

Կոխլանճ- լորտնուկ, շողոտ, ցամաքային անխեցի կակղամորթ:
Կոկան- մամուխ, վայրի սալոր. (ծառը՝) կոկանի:
Կոկոռ- նունուփար, ջրաշուշան, հարսնամատ:
Կոկորդ- պուկ, փող, որկոր, ստուգն:
Կոկորդային- հագագային. –հնչիւններ՝ հ, ղ, խ:
Կողատապ- ցախցաւ, կողերու ներքին թաղանթի բորբոքում:
Կողացաւ- կոլինճ:
Կողկողիթ- մակալեզու, կատիկ, սոսորդ, կափարիչ հագագի մուտքին վրայ:
Կոմնացոյց- բեւեռացոյց (գործիք՝ մագնիսացած ասեղով):
Կողնոց- նաւու ներքին զօտիները:
Կոճ- (մատերու՝) մատնոսկր. (ոտքերոււ՝) վէգ, ճան, յօգի, լիցք. (կրունկի՝) պճեղ, ուլնոսկր, ճագ:
Կոճապղպեղ- հնդկապղպեղ, սնգրուեղ, համեմային բոյս:
Կոճղէզ- (ծաղիկի՝) սոխ, սոխարմատ, խլինդ:
Կոյաղնդիռ- բնդեռ, կուաբ (աղբասէր ճճի):
Կոյշ- փորանցութիւն, փորհարութիւն:
Կոնդակ- (Ս.Հայրապետի՝) գիր. (Ս.Պապի՝) վուլ:
Կոնք- ողնայարաւորներու իրանը սահմանաւորող երկու մեծ եւ երկու փոքր ոսկորներ:
Կոչնագիր- դատակոչ, եկակոչ, դատի ներկայանալու կոչ:
Կոպ- արտեւան(ունք), թարթեւան, աչքերուն կափարիչը:
Կովցնծուկ- զարնանաբեր, զարնծաղիկ, կանխոց:
Կոտեմ- կոտիմ. ջրամօտ -, ջր կոտեմ. վայրի -, կծմուկ, աղցանի բնջար:
Կոշտուկ- վարսակ, վարճոխ, խրբուկ, ձիերու ճարակ:
Կոտոշ- սրուակ, ապիկի (արիւն առնելու):
Կորնակ- բեռնաբարձ (մեքենայ):
Կարեկ- մանր ու դեղին հունտերով բոյս. մեծահատ -, զաւարս:
Կորեպեղ- արօրի ականջ:
Կարզան- թելահան (մետաղէ թել բարակցնելու գործիք):
Կորիւն- (առիւծի՝ վագրի՝) ձագ. (արջի՝) թոժիւն. (ուղտի՝) կոզոն.(խոզի՝ կինճի՝) խոճկոր, գոճի:

Կորկոտ- ցորենի ծեծած (հարիսացու)։
Կորճ- պասկուճ, անզղարծիւ։
Կորնգան- մեղրածուծ, մելիլովտաս։
Կուլակ- պահէզիկ, պսակաձեւ գերծուած (եկեղեցականներու գագաթին վրայ)։
Կուծուռի- երիցուկ, անթեմ, ճփնի, պապունիճ, խնձորխոտ, ապրիմ-մեռնիմ ծաղիկը։
Կուղբ- ջրշուն, շնջրի, երկակենցաղ կենդանի. մորթը՝ կղբենի։
Կունտուռ- վարազահաւ, գիշատիչ թռչուն։
Կուռաբ- ազռաւ. սեւ -, որի։
Կուռն- կռնակ, քամակ, թիկունք, շալակ (մարդու)։
Կուռք-չաստուած. պաշտելի. (տան՝) թերափ։
Կուսածաղիկ- յարկանաչ, ցաբի։
Կուսակրօն- ամուրի կղերական։
Կուսակրօնութիւն- անամուսին կղերականութիւն։
Կուսակցութիւն- կողմնակցութիւն։
Կուսանոց- կուսաստան, կուսարան, կոյսերու վանք։
Կուր- նաւակ, մակոյկ, կարկուրոյ, ակատ։
Կուր- (անասուններու կերի՝ խումի՝) տաշտ. (խմորի՝) մակտրայ։
Կուրաղի- մեծ աղիքին առաջամասը։
Կուրդին- համետ, պաղան (իշու եւ ջորիի յատուկ)։
Կուրծք- լանջք. ստինք. (արջառի՝ գրաստի՝) երբուծ։
Կռաբանջար- խտուտ (աղցանի)։
Կռապաշտ- կուռք պաշտող։
Կռատուկ- մազարիկոն, փշապատ ծաղկեբաժակով բոյս։
Կռատուն- մեհեան, կռապաշտական ղօթավայր։
Կռճիկ- աճառ, խաղճախուղճ, հրճրճուկ;
Կռնկենի- խորդենի, աղաւնեկտուց (բուրեղ զարդաբոյս)։
Կռուատեղ- կռուանոց, մրցարան, ռազմադաշտ։
Կռուինչ- ապակեխոտ, սոխոր (եղինճներու ցեղէն)։
Կռփամարտ- կռուփով մարտ՝ մրցում։
Կռփամարտիկ- կռուփով մարտնչող՝ մրցող։

Կտակ- անդարձագիր, վերջին կամք. – ուած բան, հրիտակ:
Կտակագրի- կտակող:
Կտակատար- կտակը գործադրող:
Կտատեակ- պան, քաքար, կարկանդակ. չամչեղէն հաստեայ:
Կտատեակ- բաղրջուկ, մոլոշ, աղձկտատ, հացուպանիր, աղնձկտակ, ճնճղկաբլիթ, բուժական եւ սննդական բոյս:
Կտաւագործ- ոստայնանկ, ջուլհակ, մանեւոր:
Կտնտոց- նուագարանի մը լարերը թրթռացնող գործիք, հարիչ:
Կտրօն- արժեթուղթի սակաբաժին:
Կտցար- գաղթող թռչուն երկարակտուց:
Կրակատուն- մեհեան, ատրուշան, հուրբակ:
Կրիակ- սոր, աղօրիքի ձագարին տակէն խողովակաձեւ անցք ցորենի:
Կրծոսկր- լանջոսկր, կրծատախտակ:
Կրկնակ- (կանանց՝) շալ:
Կրկնատոմար- առնելիքը ու տալիքը ցուցնող տոմար:
Կրկներգ- յանկերգ, երգի մը տան վերջին մասին կրկնումը:
Կրկնոց- վերարկու, վրանոց:
Կրմուղ- գրաստ, անասուն (բեռնակիր):
Կրունկ- պճող, կոճ, ճան, ոտքին դուրս ցցուած մասը. կօշիկի ետեւի կողմ:
Կցուածք- (գանկի ոսկորներու՝) նետակերպ, կարան:
Կցուան- գետախառնունք:
Կցուրդ- սաղմոսերգ. մեսեդի:
Կօշկակար- մուճակագործ. կարուակ:
Կօշկաձիգ- կօշիկները դիւրաւ հագցնող գործիք:
Կօրաք- կապրցախ, կապարենի. (պտուղը՝) կապար (համեմային):
Հագագ- ձայն. խռչակբերան ձայնարան:
Հագագային- կոկորդային. – հնչիւններ՝ հ.դ. խ.:
Հագներգութիւն- խառնակ եւ յուզիչ երգ:
Հագնի- կանեփուկ, կեղծ պղպեղենի՝ կարմիր հատիկներով:
Հազար- աղցանի բանջար. ա, տասն անգամ հարիւր:

Հազարապետ- զնդապետ:
Հազորան- արօս, սին (ձմեռը հասնող պտուղ):
Հազորենի- արօսենի, սնենի:
Հալենի-սրտաձև եւ պինդ պտուղով (հալիք) կեռասենի:
Հալողի- բաց կարմիր, կեռասի եւ վարդի գոյներուն միջեւ:
Հալուէ- սապռ (մաքրադեղ):
Հակարջային- հարաւային:
Հակուղիղ- ուղիղ անկիւնի դիմաց գտնուող կողմը:
Հաղարջ- ողկուզաձեւ կարմիր եւ թթուաշ պտուղ հաղարջենիի:
Հաղեճան-  արքայասալոր՝ մեծ՝ երկայն՝ մանուշակագոյն:
Հաղորդատուփ- սրբատուփ, մասնատուփ:
Հաճար- աշարայ, ճոյփ, ճոն, տարեկան, ցորենաբոյսի տեսակ:
Հաճարի- փեկոն, փիճի, անապական փայտով անտառային
ծառ:
Համակրօն- կրօնակից, հաւատակից, դաւանակից:
Համաճարակ- տարածական (հիւանդութիւն):
Համայնաբուժ- ամէն ցաւ բուժող:
Համայնագիտարան- հանրագիտարան:
Համայնավար- հասարակորդ, հաւասարակից (քաղաքացի):
Համայնավարութիւն- հասարակորդութիւն:
Համայնք- հասարակութիւն, ժողովուրդ:
Համանուն- նոյնանուն, անուանակից, փաղանուն:
Համասպրամ- շողավարդ. ծաղկեփունջ:
Համաստեղութիւն- աստեղատուն, աստեղախումբ:
Համարակալութիւն- հաշուակալութիւն, տոմարակալութիւն:
Համարողութիւն- թուաբանութիւն, թուագիտութիւն:
Համբարձում- Քրիստոսի բարձրացումը դէպի երկինք:
Համեմ(անք)-բովիճայք, ամոքանք (կերակուրներու):
Համեմուկ- համեմաւոր պատեանով թուփ. –ի օղի, համեմօղի:
Համետակալ- թամբակալ, թանգ, քաշիկ, համետի կապ:
Համտակ- հագուստի եզերք, քղանցք, դրօշակ:
Համրիչ- (աղօթքի՝) վարդարան, օրհնարան:
Հայբորակ- ճատրոն, գ կալաքարի բնծխատ:

Հայկ- (համաստեղութիւն) Լուծ, Կշեռք:
Հայկաւ- հայկական կաւ:
Հայս- խմոր, զանգուած. թել թել -, թելհայս. խմորուած -, թթխմոր:
Հայրապետ- նահապետ, հովուապետ, եպիսկոպոսապետ, կաթողիկոս. պապ, քահանայապետ:
Հանդերձապետ- (վանքի՝) պատմուճակ:
Հանրաքուէ- ժողովուրդի մը կամքին ուղղակի արտայայտութիւն:
Հանք- հողի տակ մետաղներ՝ քարեր:
Հանքածուխ- հանքէ ելած ածուխ, գետնածուխ:
Հաշիշ- թմրեցուցիչ՝ հնդիկ կանեփի տերեւներէն հանուած:
Հաշուագէտ- հաշիւը գիտցող, տնտեսագէտ, խնայող:
Հաշուեկշիռ- ելքի մուտքի հաշուեցոյց:
Հապալասի- թթուաշ հատերով (հապալաս) անտառային բոյս:
Հաս- հասոյթ, եկամուտ. տուրք, հարկ:
Հասապարտ- հասատէր, հասութատէր:
Հասարակապետութիւն-  հանրապետութիւն:
Հասեւառիկ- պանկրատ, խառնամարտ մրցութիւն:
Հատանող- կտրող գիծ (երկրաչափական):
Հատապտուղ- մանր հատերով պտուղ (հաղարջ, ելակ եւլն):
Հատաքար- որձաքար, կրանիտ. բիւրեղային կարծր քար:
Հատիչ- պարտիզպանի մկրատաձեւ կտրոց:
Հարթաչափ- հարթութիւն չափող գործիք:
Հացագործ- հացարար, հացեփեաց, հացեփ:
Հաւամրգի- քուրիմ, ցարասի, աւել շինելու բոյս:
Հաւատաքննութիւն- հաւատքը քննող ատեն:
Հաւաքաբանութիւն- տրամաբանական փաստում, հետեւաբանութիւն:
Հեռակէտ- լուսինի ծայրագոյն հեռաւորութիւնը երկրէն. մոլորակներու ծայրագոյն հեռաւորութիւնը արեգակէն:
Հեռաձայն- հետախօս (թելով կամ անթել):
Հերուենակ- միամեայ զառնուկ:

Հեցք- (փայտեայ շրջանակ անիւի՝) հեւան. (երկաթեայ շրջանակ անիւի՝) դօղ:
Հիւանդապահ- հիւանդախնամ:
Հիւանդութիւն- խօթութիւն, ախտ. մոլութիւն:
Հիւծախտ- ծիւրախտ, մաշարայ. թոքերու -, թոքախտ:
Հիւպատոս- օտար կառավարութեան մը գործակալ:
Հիւս- ատաղձագործ, շէնքի մը փայտեղէն մասերը շինող:
Հիւսխայզ- հիւսխային լուսերեւոյթ:
Հիւրանոց- հիւրատուն, օթեւան, պանդոկ. ճամբու վրայ -, իջեւան:
Հմայեակ- յուռութք, կղարթ, բժժանք, թլացք. դրիճ, թապութ, աւելորդապաշտական պահպանակ վտանգներու դէմ:
Հմուլ- գայլուկ, հիւսխայզի (իր ծաղիկներով գարեջուրի պատրաստութեան պիտանի բոյս):
Հնազէտ- հնախօս, հնախոյզ:
Հնախոյզ- հնութիւններ խուզարկող:
Հնդախտ- հնդիկ համաճարակ հիւանդութիւն (քոլերա):
Հնդընկոյզ- հնդիկ համեմաւոր ընկուզիկ, մշկընկոյզ, զգերբուակ:
Հնդկապղպեղ- կոճապղպեղ. սնգուրեղ, համեմային արմատով բոյս:
Հնձանակ- հնձանի գուբ:
Հնչական- հնչուն, հնչեղ, շեշտաւոր (հնչիւն՝ բառ):
Հնչեակ- երկու քառատող՝ երկու եռատող տունինոց քերթուած:
Հոգեգալուստ- Պենտեկոստէ. Զատկէն յետոյ եօթներորդ կիրակին:
Հոլամուկ- չղջիկ, սեկեմուկ:
Հողաթափ- շղուական. (փայտեայ՝) երսանկ:
Հողածուխ- կիզահող, կիզակաւ, տորփ:
Հողմափայտ- կանթեղխոտ, ծիծեռնախոտ, բուժական բոյս:
Հովուերգութիւն- տուարածական սիրերգութիւն:
Հովտաշուշան- քողահերձ, Մայիսի ծաղիկ:
Հոր- ոստայնանկի գործիք:

Հորոն- քանդուկ, գետնափոր շտեմարան ցորենի:
Հրաբերան- (հրաբուխի՝) խառնարան:
Հրաբուխ- կրակ եւ հալած նիւթ շայթքող լեռ:
Հրամանակարգ- վարդապետութիւն (կրօնի):
Հրամանապետ- ժամանակաւոր իշխանապետ, լիազօր վարչապետ:
Հրամանատար- պետ. զօրապետ. ընդհանուր -, սպարապետ. գունդի -, գնդապետ:
Հրանունկ- գորտախ, խառածաղիկ, թունաւոր բոյս:
Հրատ- հրագոյն մոլորակ, Ծկրաւորի:
Հրատարակութիւն- ծանուցում, հռչակում. տպագրութիւն. լրագիր. հանդէս. գիրք, գրքոյկ:
Հրուանդան- գլուխ, սարաւանդ:
Հօտիսոյ- մեղրածծուկ, շանխոտ, բուժական բոյս:
Հօրան- այծերամ:
Հօրուտ- բրաբիոն, շուշանազգի ծաղիկ:
Ձազար- հեղուկները պարպելու կոնաձեւ եւ խողովակաւոր գործի. (աղօրիքի՝) դոխ, ողուն. (դեղագործի՝) քամոց:
Ձազմատ- ճկոյթ, ծկիկ, պզտիկ մատ:
Ձայնագիր- ձայնը արձանագրող եւ վերարտադրող գործիք:
Ձայնանիշ- խազ, երաժշտական նշան:
Ձայնասփիւռ- ձայնը տարածող կազմած (հրատիոյի):
Ձայնարգել- (ջութակի վրա՝) ձայնի զսպակ. (դաշնակի մէջ՝) հեղձակ:
Ձայնարկութիւն- միջարկութիւն, բացագանչութիւն:
Ձայնաւոր- ձայնական, հնչական. (ժամի՝) դպիր, տիրացու:
Ձանձախարիթ- (գոյն՝) մութ կարմիր:
Ձար- մազ (ձիու՝ եւլն.). (բուսական՝) խաճին:
Ձարխոտ- դիւաձար. (վայրի՝) պտեր, նրբատերեւ զարդաբոյս:
Ձգան- (ղնդերը ոսկորին կցող) լար, կարշն. (հրազէնի՝) բլթակ:
Ձգափոկ- տաբատակալ:
Ձեռական- արհեստական. յաճախորդ (բժշկի՝ փաստաբանի):
Ձեռակերտ- ստեղծուած. ստեղծագործութիւն:

Ձեռատետր- նախնական հաշուետետր:
Ձիագետի- գետաձի:
Ձիալախուր- նեխուր, վայրի կարոս:
Ձիաստան- ասպաստան, ախոռ:
Ձիարձակարան-ընթացարան,ձիընթացարան. ձիարշաւարան, կրկէս, ասպարէզ:
Ձիացուլ- կովաձի, իշացուլ, կովէշ:
Ձինածաղիկ- շնդեղ, ապտուկ, խլօպուզ, նաւրայ:
Ձկնկուլ- ջրխոթան, շատակեր ջրային թռչուն:
Ձկնոց- ձկնաւազան:
Ձողանշան- ծովին մէջ վտանգաւոր տեղերը ցոյց տուող ձողամբարձ տակառ:
Ձողապատուար- ցցապատնէշ, շերտափակ, ձողապատ:
Ձուլարան- ձուլելու գործարան:
Ղեկ- ուղղեակ. վարչութիւն. տնօրինութիւն:
Ղեկավար- վարիչ, առաջնորդ, կառավարող:
Ճազմ- մակաբոյծ բոյս՝ մանաւանդ խնձորենիի՝ տանձենիի վրայ:
Ճախարակ- (մանելու՝) ջահրակ. (բեռներ տեղափոխելու՝) լիսեռնիկ. (դերձանի՝) թելոց. (բրուտի՝) դուրգ:
Ճակ- ճայիկ, զամբիկ, մատակ ձի:
Ճակզարան- ծնծղայի պէս գործածուող հին նուագարան մը:
Ճակնդեղ- (արմատը՝) տակ, կարմիրտակ. (տերեւները՝) բազուկ:
Ճահուկ- աղուէսներու խումբ:
Ճաճանչոսկր- նախաբազուկի փոքրագոյն ոսկր, ծղոսկրիկ:
Ճանառ- Երասխ գետի ձուկ:
Ճաշացուցակ- խորտկացուցակ:
Ճաշոց- խորհրդատետր, պատարագամատոյց:
Ճառ- բանախօսութիւն. ուղերձ. գրուածք:
Ճատրակ- ռազմախաղ:
Ճարճրուկ- եղերդ, աղցանի բանջար:
Ճարտարապետ- շէնքեր ուրուագծող եւ կառուցող:

Ճարտարուեստ- ձեռարուեստ, ճարտարագործութիւն:
Ճգնարան- մենարան, մենոց, առանձնանոց:
Ճգնաւոր- միայնակեաց, մենակյաց, մենաւոր:
Ճենապակի- յախճապակի:
Ճերմակեղէն- կտաւեղէն. ներքնազգեստ:
Ճերմկուց- սպիտակուց (աչքի՝ հաւկիթի՝):
Ճշնարօտ- քաջվարդ, փենունայ, փեննայ, խաչափայտ:
Ճոկան- եպիսկոպոսական գաւազան, ասա:
Ճուռակ- շահէ, գիշատիչ թռչուն:
Ճպոտ- գաւազանիկ. ջութակի աղեղ:
Ճրագալոյց- խթում, նախատօնակ, նաւակատիք:
Մազաղաթ- ոչխարենի, այծենի. մորթաթուղթ:
Մագիստրոս- վարպետ. վարդապետ:
Մազնիս- երկաթատիպ հանածոյ, երկաթի թթուուկ:
Մազտաքի- հերձի, սքինոս (ձիւթաբեր թուփ):
Մաթ- ռուփ, եփած քաղցու (խաղողի հոյզէն):
Մաթեմաթիկ- ուսողութիւն, քանակութիւն, չափագիտութիւն:
Մաթզենի- ծառելակենի, շաքարածառ. (պտուղը՝ մաթուզ):
Մաթիլ- մնիկ, մանրոջիլ:
Մալէզ- բոհրած ալիւրով ապուր:
Մախոխ- թթու ապուր մեծ պահքի:
Մախր- ռետնային՝ դիւրավառ շոճեփայտ:
Մակագիր- խորագիր, վերնագիր, տիտղոս:
Մակալեզու- կողկողիթ, կատիկ, կափարիչ հագագի մուտքին:
Մակակէտ- ապաթարց:
Մականաւոր- փաստաբաններու կարգի պետ:
Մականուն- երկրորդ՝ ընտանեկան անուն:
Մակբայ- բայերու վերադիր:
Մակդիր- ածական, ստորոգելի, վերադիր տիտղոս, մականուն, յորջորջանք:
Մակընթացութիւն- խաղացք ծովու:
Մակորովայն- որովայնի վերին մասը:
Մահիկ- նորածին լուսին:

Մահոգենի- մակոն, կահագործութեան յարմար փայտով ծառ:
Մաճառակ- կտրած կաթ. թարմ պանիրի նկանակ:
Մաճկալ- վարող, հերկող, հերկահար:
Մամլակ- փոքր մամուլ դարբինի՝ ոսկերիչի:
Մամոնայ- դրամ, արծաթ:
Մամուլ- պնդելու՝ ճնշելու գործիք. տպելու մեքենայ. լրագրութիւն:
Մամուխ- կոկան, վայրի սալոր. (ծառը՝) մամխի:
Մամուկ- սարդ, մանողակ. մեծ՝ թունաւոր -, փաղիժ, մոր:
Մայր- սոճի, շոճի. (Լիբանանի՝) եղեւին:
Մայրան- յօղ, յանգոյց, ծունկ (բոյսերու):
Մայրապետ- կուսանոցի տեսչուհի:
Մայրեւոր- անտառ. փայտահատ:
Մայր հաշիւ- մեծ՝ ընդհանուր հաշուետոմար:
Մանած- թել կտաւագործութեան. (իլի վրայ՝) բժոժ:
Մանանեխ- կծուահամ հատիկներով՝ բոյս եւ համեմ:
Մանարան- մանելու գործարան:
Մանրէ- կենսիկ, մանրադիտական ճճի:
Մաշ- ոլոռ, ճուլպան (ընդեղէն):
Մաշկոտն- թաղանթոտն (ինչպէս բադ՝ սագ՝ կարապ):
Մաշտոց- ծիսարան (արարողութեանց գիրք):
Մասնագէտ- մասնաւոր գիտութեան մի քաջ հմուտ:
Մասնադէպ- մանրավէպ:
Մասնավճար- մաս առ մաս վճարում:
Մասնատուփ- հաղորդատուփ, սրբատուփ:
Մասունք- (սուրբի՝) նծխարք, բեկորք. խօսքի -, - բանի:
Մասրենի- վայրի վարդենի:
Մատակարարութիւն-տնտեսում, վարչութիւն. հայթայթանք, յանձանձում, բաշխում:
Մատաղ-զոհ. ագապ:
Մատեան- գիրք. տոմար. Սուրբ Գիրք, Աստուածաշունչ:
Մատենագիր- հեղինակ, գրագէտ. յոռի -, գրչողակ:
Մատենագրութիւն- դպրութիւն, գրականութիւն:

Մատենադարան- գրատուն. գրադարան:
Մատենախօսական- գրախօսական, գրադատական:
Մատենիկ- գրքոյկ. հատորիկ, տետր:
Մատիտեղ- հովուացուպ (վիրաբուժական բոյս):
Մատնէք- սիւնի վրայ ակօսաձեւ ձորուածք, խազ:
Մատնիկ- հնգատերեւ, սիրալախուր, պատատուկ բոյս:
Մատուռ- աղօթարան, տաճար. փոքրիկ եկեղեցի:
Մատուտակ- մարուխ, քաղցրարմատ բոյս:
Մատուցարան- խորան, սեղան:
Մարաջախտ- սպարապետ:
Մարգարտածաղիկ- զատկածաղիկ. (մեծը՝) եզնակ:
Մարդակազմութիւն- մարդկային անդամազննութիւն:
Մարզարան- մարզավայր, մարզադաշտ:
Մարզիկ- կրթուող, կրթուած, վարժուած:
Մարզիչ- կրթիչ  ուսուցիչ մարմնակրթանքի:
Մարզպան- մարզպետ, կուսակալ, նահանգապետ:
Մարի- էգ թռչուն, հաւ:
Մարմնակրթանք- մարզանք, մարմնամարզ:
Մարտիկ- պատերազմիկ, ռազմիկ, զինուոր:
Մարտիրոս- նահատակ, վկայ, զոհ:
Մաքսանենգ- գաղտագողի ապրանք ներմուծող:
Մելան- թանաք, սեւաղեղ, գրաղեղ:
Մելանառ- թանաքաման, կաղամար:
Մեծաւոր- վանքի մեծը՝ գլխաւոր:
Մեկենաս- սատար, պաշտպան (ուսմանց):
Մեկնոց- վրանոց, վերարկու:
Մեհեան- կռատուն, զոհատուն, տաճար. ամենադից -,
Պանթէոն:
Մեհենադրոշմ- մեհենագրութիւն, նշանագիր, խորհրդանիշ:
Մեղեդի- քաղցրերգութիւն. եղանակ. նուագ:
Մեղուաբոյծ- մեղուապահ:
Մեղուախոտ- պատրինջ. թրնջխոտ:
Մեղուանոց- մեղուատուն, փեթականոց:

Մեղրալուսին- առաջին ամիս ամուսնութեան:
Մեղրածծուկ- հոտիսոյ, շանխոտ, բուժական բոյս:
Մենախօսութիւն- ինքնախօսութիւն (դերասանի):
Մենակեաց- առանձնակեաց, ճգնաւոր, մենաւոր:
Մենաշնորհ- առանձնաշնորհ. մենավաճառ, բացառիկ արտօնութիւն:
Մենաստան- մենարան, վանք. կոյսերու -, կուսանոց:
Մեներգ- առանձներգ(ութիւն):
Մեռոն- օծելու իւղ:
Մետաղ- ծանր՝ կարծր՝ փայլուն հանածոյ:
Մետաքս- շերամի արտադրած թելեր. ապրշում:
Մերձակէտ- մոլորակներու ծայրագոյն մերձաւորութիւն արեւին:
Մթիթ- ոստայնանկի գործիք՝ երկու ծայրերը ասեղներով՝ կտաւը ողորկ պահելու համար:
Միանձն- միաբան, աբեղայ:
Միանձն- միաբանուհի, աբեղուհի:
Միջատաբանութիւն- միջատներու վրայ խօսող գիտութիւն:
Միջարկութիւն-  ձայնարկութիւն, բացագանչութիւն:
Մլաղաց- ջաղացպան, աղօրեպան:
Մխոց- շարժական գլան մեքենայի:
Մնջկտակ- ձեւերով միայն խաղացող դերասան:
Մշակոյթ- մշակութիւն,. կրթութիւն, զարգացմունք. քաղաքակրթութիւն:
Մոլորակ- գնայուն աստղ:
Մոմլաթ- մոմշոր, անթափանց կտաւ ներքին յատակներու համար:
Մոմպատ- կճատ, ոլորած բարակ մոմ:
Մոյթ- նեցուկ, յենակ, սիւնակ. (պատի՝) որմեց:
Մորմ- շնխաղող, կոզուկ:
Մսագործ- միս մորթող՝ ծախող, մսավաճառ:
Մսան- անասուններու ողնաշարի ներքին կակուղ միս, սուկի:
Մտատիպար- գաղափարական, տեսլական:

Մրտավարդենի- եղրի, վարդածառ:
Մրտենի- մշտադալար ծաղկաբեր ծառ՝ որուն ճիւղերէն փառապսակներ կը հիւսէին:
Մրցանիշ- մրցումով ձեռք բերուած բարձրագոյն նիշ՝ թիւ:
Մրցարան- ասպարէզ, կրկէս, հոլարան, կռուանոց:
Յախճապակի- ճենապակի:
Յածանաւ- արագընթաց մարտանաւ (առաջնորդող):
Յակինթ- (ծաղիկ՝) սմբուլ:
Յակինթ- (գոհար՝ կարմիր՝) կայծ, սուտակ:
Յաճախորդ- գնորդ. (բժշկի՝ փաստաբանի՝) ձեռական:
Յամոյր- եղջերուի տեսակ:
Յայտագիր- ծրագիր:
Յայտարար-  երկրորդ եզր՝ վարի թիւ կոտորակի:
Յանգ- վերջ, վերջաւորութիւն (ոտանաւորի տողերու):
Յանգաւոր- յանգեր ունեցող:
Յանկերգ- կրկներգ. միեւնոյն պատմութիւն. բերնի ծամոց:
Յանձնարարական- յանձնարարագիր. վկայագիր:
Յառաջաբան- նախաբան, ներածութիւն. նախաշաւիղ, նախերգան:
Յասմիկ- նախատիպ յասմինեայց ցեղին՝ քաղցրաբոյր ծաղիկներով:
Յասպիս- պատուական քար:
Յատկաբանութիւն- մասնայատուկ ասացուածք:
Յատկացուցիչ- սեռական հոլով. (վերաբերեալը՝) յատկացեալ:
Յատոց- յօտոց, պարտիզպանի կտրոց:
Յարակատար- անորոշ անցեալ (Քերկ.):
Յարանուանութիւն- անուանում, անուն:
Յարասութիւն- ընդարձակ մեկնութիւն:
Յարացոյց- տիպար, օրինակ, նմանութիւն. նախառիպ:
Յաւելադիր- թարմատար, աւելորդ (տառ՝ բառ):
Յափուկ- խիստ անուշահոտ ծաղիկ. (հասարակ՝ կանչխոտ):
Յեսան- յեսանաքար (դանակ՝ զմելին եւլն. սրելու քար):

Յիշատակարան- յուշարան. յուշարձան, կոթող. հին հոյակապ շինութիւն:
Յոբելեան- յիսնամեակ (յիշատակելի դէպքի մը):
Յոպոպ- գլխուն վրայ սանտրաձեւ փետուրներով թռչուն:
Յովատակ- արու ձի. խարտի ձի:
Յունապ- զուսպ. (ծառը՝) յունապի, զսպենի:
Յուշարար- յիշեցնող (դերասաններու):
Յուշարձան- յիշատակը յաւերժացնող արձան:
Յօդ- կապ, յօդակապ, հանգոյց, յօդուած, խաղ. (մատերու՝) կոճ. (քերականական՝) ...ը, ...ն:
Յօդուածագիր- թղթակից. աշխատակից:
Յօրանջ-երկու նոյն ձայնաւորի զուգադիպում:
Նադիր- սուզակէտ, հակադիր զենիթի:
Նախաբազուկ- ծղի, արմունկէն մինչեւ դստակ:
Նախազաւիթ- առաջին գաւիթ (մեծ շենքերու):
Նախադասութիւն- առաջադրութիւն. պարբերութիւն, խօսք:
Նախադրութիւն- նախադիր կամ յետադիր՝ անփոփոխ փոքր բառեր:
Նախակէտ-  մեկնակէտ, սկզբնակէտ:
Նախակրթարան- տարրական վարժարան:
Նախակրթութիւն- տարրական ուսմունք:
Նախահաշիւ- կանխահաշիւ, ելումուտի վիճակացոյց:
Նախահօղուած- խմբագրական:
Նախդիր- նախադիր մասնիկ:
Նայ- թաց, մեղմ, կակուղ (բաղաձայն հնչիւններ՝ լ, ղ, մ, ն, ռ.):
Նարգէս- նարգիսազգիներու նախատիպ ծաղիկ. մօրուտ:
Նարդոս- հոռոմ սմբուլ:
Նարինջ- յարգի պտուղ ոսկեգոյն կեղեւով. (թթու տեսակ՝) թուրինջ:
Նարնջենի- նարինջի ծառ:
Նարօտ- գոյն, ներկ. գունաւոր հիւսուածք:
Նաւամատոյց- նաւ մտնելիք ելլելիք տեղ:

Նաւասարդ- Ամանոր, Տարեգլուխ, Տարեմուտ. Հայոց առաջին ամիսը (Օգոստոս):
Նաւաստի-, նաւազ, նաւին ծառայող անձինք:
Նաւորդ- նաւի ուղեւոր:
Նեղուց- երկու ցամաքներու միջեւ ծովանցք:
Նեռ- սուտ Քրիստոս:
Ներբան- (ոտքի՝) թաթ, գարշապար. (կօշիկի՝) տակ՝ տակի կաշի:
Ներդաշնակութիւն- (նուագի՝ ձայնի՝ խորհուրդի՝) համաձայնութիւն. (գոյներու՝) յարմարութիւն:
Ներկատուն- ներկարան, ներկելու գործարան:
Ներկարար- ներկագործ:
Նզովք- անէծք, բանադրանք:
Նիհ- սահմանուած գին, սակ:
Նկարահանդէս- պատկերներու ցուցադրութիւն:
Նկարիչ- պատկերահան. դաշտի -, դաշտանկարիչ. ծովի -, ծովանկարիչ:
Նկարչութիւն- նկարչի արուեստ:
Նմանաձայնութիւն- բնաձայնութիւն:
Նշանագիր- գիր, տառ. կրճատուած ստորագրութիւն:
Նշդարենի- կրպենի, կարծր ու ճերմակ փայտով յարգի ծառ:
Նշիկ- նշագեղձ, խաղճմունք (լեզուարմատի երկու կողմերը):
Նշխարատուփ- սրբատուփ, մասնատուփ, հաղորդատուփ:
Նոճ- նոճի, կիպարիս, գերեզմաններու նրբաւարտ ծառ:
Նոտար- պետական գրագիր:
Նորավէպ- պատմուածք, համառօտ վէպ, վիպակ:
Նորգենի- վայրի կեռասենի՝ դառնահամ մանր պտուղով (նորգ):
Նուագախումբ- երաժշտախումբ:
Նուագածու- երաժիշտ. (պետը՝) երաժշտապետ:
Նուագահանդէս- համերգ, կացուրդ:
Նուագարան- երաժշտական գործիք:
Նուիրակ- պատուիրակ, ներկայացուցիչ. (Պապին՝) դեսպան:

Նունուփար- ջրաշուշան, կոկոռ, հարսնարմատ:
Նուռ- նռնենիի պտուղ
Նուռ- փոքրիկ ռումբ:
Նռնածաղիկ- ջոլինար, նռան ծաղիկ:
Նռնաքար- կրկեհան (նռան հատի գոյնով ազնիւ քար):
Նռնենի- նուռի ծառ:
Նրբափողոց- փողոցիկ. գռեհ, գռիհ:
Շահասպրամ- ռահան, խիստ բուրաւէտ տերեւներով բոյս:
Շաղափ- աղեղնաւոր գայլիկոն. վիրաբոյժի գչիր (ծակոց):
Շամբուկ- թանթրուենի. վայրի -, ակտոն, բուժական բոյս:
Շանթարգել- շենքէրը  շանթին հարուածէն պահպանելու կազմած:
Շանթաքար- օդաքար, երկնաքար, շողաձիգ:
Շառաւիղ- ճիւղ, բարունակ. սերունդ, զարմ, զաւակ. (անիւի՝) ստեղն, ճղուղ:
Շառաւն- ուղտ. (արու՝) մլուխ. (ձագը՝) կոզռն:
Շարագոյր- ծածկոց (գիրքի կողքի):
Շարական- օրհներգ, մեղեդի:
Շարժանկար- շարժապատկեր:
Շարոց- (գրաշարի՝) պնակիտ, (պտուղներու՝) տե՛ս շարան:
Շարփուշ- գլխանոց դատաւորի՝ փաստաբանի:
Շեղանկիւն- տարանկիւն:
Շեմ- սեմ. մուտք, սկիզբ. դրան վերի -, բարաւոր:
Շերամ- շերաս, մետաքսագործ որդ:
Շերամաբուծութիւն- շերամ պահելը, մետաքսագործութիւն:
Շեփոր- փող, փչողական նուագարան:
Շիկաթան- ոսպնաթան, ոսպով ապուր:
Շիկատակ- սնգոյրատակ, ատրոպ, մորմազգի թունաւոր բոյս:
Շինուածանիւթ- ատաղձ (քար՝ փայտ՝ երկաթ եւլն.):
Շնաստղ- ամենապայծառ աստղը:
Շնչարգելութիւն- զմայ:
Շնչափող-օդափող.  (միջատներու՝) շնչանօթ:

Շնչերակ- արիւնի շրջանը կատարող երկու խողովակաձեւ ճիւղաւորումներ՝ որոնցմէ մէկը սիրտէն թոքերուն կը տանի սեւ արիւնը, միւսը մարմինին կը տանի կարմիր արիւնը:
Շոգեկառք- կառախումբը քաշող շոգեշարժ կառք, վայրաշարժ:
Շոգեշարժ- շոգիով շարժող. – մեքենայ, շոգեմեքենայ:
Շողակն- պսպղուն երեսակներով ադամանդ:
Շոմին- սպանախ (բանջար):
Շուշմայ- կնճիթ, իւղաբեր հոտերով բոյս:
Շուրջառ- նափորտ, փիլոն:
Շուրջթատր, գ, ամֆիթատր, շրջատեսարան:
Շուփայ- կուլուռիայ, աչքի դեղ՝ կաթիլ:
Շպար- (դէմքի՝) սնգոյր, ներկ:
Շրէշ- կօշկակարի մածոյց. (բոյսը՝) օղին, ասփոդեղոն:
Շրթնային- շրթներով արտաբերելի (բ,պ,փ,մ):
Շրջաբանութիւն- դարձուածով խօսք:
Շրջաբերական- շրջանամակ:
Շրջագիծ- ուրուագիծ, ստուերագիծ, նախագիծ:
Շրջապատկեր- համայնապատկեր, շրջանկար:
Շքահանդէս- մեծ հանդիսութիւն, շքեղ տօնակատարութիւն:
Շքանշան- պատուանշան, նշան:
Շօշափուկ- նուրբ եղջերիկ միջատներու, բաղկուկ:
Ոզորի- ջրուռի:
Ոզումն- թեզան, թել (կտաւին լայնութեանը):
Ոլորակ- ձայն, շեշտ:
Ոլոք- մեծ ոսկոր սրունքի:
Ողբերգակ- ողբերգու, եղերգակ:
Ողբերգութիւն- եղերգութիւն:
Ողկուզուկ- դեղուկ, խանթեփար, քաղցրաբոյր՝ դառնահամ բոյս:
Ողնայար- ողնաշար, ողնասիւն:
Ողնափայտ- ողնուց (նաւի). կամրջակալ. արօրի -, գործեւարի, համ:
Ողնոյց- տանիք, տամալի, երդիք, կտուր:

Ողնուլար- գրաստին ագիին տակէն անցնող փոկ:
Ողջկէզ- զոհ, մատաղ, պատարագ:
Ոճրափորձ- եղեռնափորձ, մահափորձ:
Ոսկեխնձոր- լոլիկ, պոլտիկ:
Ոսկերիչ- ոսկեգործ:
Ոսկոր- կմախքի իւրաքանչիւր մաս. ողնաշարի իւրաքանչիւր –
ը, լիսեռ. (վերջինը՝) կկու:
Ոսպ- համեղ ընդեղէն. ջուրի -, ջրոսպ:
Ոսպնեակ- ոսպնաձեւ ապակի:
Ոստայնանկ- ոստայնագործ, ջուլհակ, կտաւագործ:
Ոստայնանկութիւն- ջուլհակութիւն, կտաւագործութիւն:
Ոստիկան- քաղաքապան, փատուոր:
Ոստրէ- ծովային երկապատեան կակղամորթ:
Ովասիս- անապատի մէջ ջրոտ՝ կանանչ տեղ:
Ովկիանոս- աշխարհածով. համատարած ծով:
Ովսաննա- փառաբանութիւն, օրհներգութիւն:
Ոտանաւոր- տաղաչափուած գրուածք, քերթուած:
Ոտնապարանջան- քողէք, խալխալ, աղթաման:
Ոտնլուայ- ոտք լուալու արարողութիւն:
Ոտք- թաթ:
Որակական- որակիչ. ածական, մակդիր:
Որդեգիր- հոգեզաւակ:
Որթ- որթատունկ:
Որիզ- բրինձ:
Որկոր- ստուգն, կոկորդ, պուկ, փող:
Որմ- պատ. (բերդի՝) պարիսպ. քաղաքի -, աղաքորմ. մէջտեղի -
, միջնորմ:
Որմադիր- որմաշէն. պատ շինող:
Որմանկար- տամկանկար (նորածեփ կիրի վրայ):
Որոթ- խոր2 (ոսկորներու ծայրը՝ ուր կը մտնէ ուրիշ ոսկորի մը
գնդաձեւ գլուխը):
Որոմ- ցորենի հետ աճող բոյս:

Որովայն- փոր. – ի վերին մաս, մակորովայն. (ստորին մասը՝) փոքրափոր:
Որսաշուն- բարակ, քերծէ:
Ուժանակ- խիստ պայթուցիկ նիւթ:
Ուլ- այծեձագ, ալոջ, այծիկ. (միամեայ՝) ամիկ:
Ուլենի- ուլի մորթի, այծենի. (պատրաստուած՝) սեկ, քեմուխտ, մարոկենի:
Ուլնագել- ծռ(ավիզ):
Ուղեղ- խելք, միտք, բանականութիւն:
Ուղե-ծուծ- ամենալաւ մասը (գրուածքի մը):
Ուղղագրութիւն- անսխալ գրելու արուեստ:
Ուղղադաւան- Տ. ուղղափառ:
Ուղղական- անուն բայի, տէր բայի, ենթակայ:
Ուղղանկիւն- ուղիղ անկիւնաւոր:
Ուղղափառ- ուղղադաւան, ուղղահաւատ:
Ունդ- հունտ, սերմ, հատիկ. ընդեղէն:
Ունչք- քիթ, ռնգունք:
Ուսանող- աշակերտ, հետեւող (բարձրագոյն վարժ.ի):
Ուսնոց- ուսադիր, ուսազարդ (զինուորական):
Ուսողութիւն- չափագիտութիւն, մաթեմատիկ:
Ուսոսկր- անրակ:
Ուսում- գիտութիւն, գ կրթութիւն, վարժութիւն, հրահանգ:
Ուսումնարան- վարժարան, դպրոց, կրթարան:
Ուսուցիչ- վարպետ, վարժապետ, վարդապետ. դաստիարակ:
Ուսուցում- հրահանգում, աւանդում. դաս:
Ուտիճ- (բրդեղէններու՝) ցեց, մեց, ճճի. (ծառերու՝) մնակ:
Ուտիք (օր)- պահք չեղած օր:
Ուրուաքար- գրաքար, մատիտաքար, կակուղ մետաղակերպ:
Ուրուր- ցին (գիշատիչ թռչուն երկճղի պոչով):
Չակերտ- մէջբերումի՝ կոչման՝ վկայութան նշան:
Չափանիշ- դատանիշ, ճշգրտաչափ, ստուգաչափ:
Չիղջ- չղջիկ, հոլամուկ, սեկեմուկ:
Չիչխան- փշարմաւ, ժանտափուշ:

Չորաթուզ- պաղատիտ:
Չորքոտանի- չորս ոտքով կենդանի, անասուն:
Չու- երթ, մեկնում, գնացք. գաղթ. ընթացք:
Չուխայ- ասուի, ասուեղէն:
Չփակ- լանջապան, սեղմիրան:
Պալատական- արքունական. դրանիկ:
Պախրէ- ինչք, դրամ. պաճար, նախիր, տուար:
Պակ- ակ, շողակ, գոհար:
Պակասորդ- բաց (հաշիւի):
Պահածոյ- օղախից պահուած ուտելիք:
Պահանջատէր- առնելիքուոր, պարտապահանջ:
Պահեցողութիւն- ծոմապահութիւն. ժուժկալութիւն:
Պահպանակ- (զինուորի՝) զրահ. (գլխու՝) սաղաւարտ. բազուկի -, բազպան. բարձքի -, բարձապան. սրունքի -, սռնապան. ձիու -, աչապահ. ըմբիշի ձեռքերու -, ձեռապանակ, կեստ.չարակնութեան դէմ՝ հմայեակ, դրիճ. թապութ, կղարթ, բժժանք:
Պահք- պահեցողութիւն. մեծ -, աղուհացք, քառասնորդք:
Պաղանձաւ- այր, քարայր, անձաւ, քարանձաւ:
Պայազատ- զաւակ, ժառանգորդ (իշխանական):
Պայթուցիկ- շուտ պայթող (նիւթ):
Պայմանագիր- դաշնագիր, դաշնագրութիւն:
Պայտ- գրաստի ոտքերուն (սմբակ) երկաթէ պահպանակ, լուսին:
Պայտար- լուսնող, գրաստի ոտքերուն պայտեր խփող:
Պանդոկ- հիւրանոց. օթեւան, իջեւան. հասարակ -, աշխարհաւանդ:
Պաշտատական- օժիտ, պռոյգ, կտիրք, թախանձք:
Պապկայ- թութակ. կրկնող:
Պառակ- փարախ, մակաղատեղ. գաւիթ:
Պասկուճ- կորճ, խարտեաշ անգղ, գիշատիչ թռչուն:
Պաստառ- կերպաս.(մետաքսէ՝) դիպակ. (բուրդէ՝) ասուի. (բամպակէ՝) կտաւ. (վուշէ՝) քթան. անկողինի -,

պաստառակալ, սաւան. մեռեալի -, պատանք. պատերու -, օթոց, վիժակ, սրահակ. պատերու թուղթէ -, որմաթուղթ. մաղի -, շար:
Պաստեղ- քաղցուով եւ ալիւրով պատրաստուած անուշեղէն:
Պատարագամատոյց- խորհրդատետր:
Պատարագիչ- պատարագամատոյց, ժամարար:
Պատկանդարան- կապարճ, նետերու աման:
Պատմաբան- պատմագիր, պատմիչ:
Պատմուճան- պարեգօտ. վերարկու. խիլայ:
Պատուանուն- շքանուն, տիտղոս:
Պատուելի- աւետ. հայ քարոզիչի տիտղոս:
Պատրիարք- քրիստոնեայ հասարակապետ:
Պարապուրդ- արձակուրդ:
Պարբերաթերթ- հանդէս (շաբաթական՝ ամսական եւլն.):
Պարբերական- թերթ, հանդէս:
Պարբերութիւն- շրջան, տեւողութիւն. խօսք, նախադասութիւն. (նոր տող՝) հատուած:
Պարզեւաբաշխութիւն- մրցանակաբաշխութիւն:
Պարխրցի- հիւսիսային ցրտաշունչ քամի:
Պարոյկ- հարցական, հարցանիշ, ոլորակ (՞). (սինագլխի՝) խոյօղ:
Պարս- մեղուապար, մեղուախումբ, կոճակ:
Պարսմայր- մայր՝ թագուհի՝ մեղուներու:
Պարտաթուղթ- պարտատոմս, մուրհակ, յետկար, պարտամուրհակ:
Պաւուլիկ- ձմեռնակ, ցրտնխած, սաստիկ ցուրտէն մատերու մարմաջոտ ուռեցք:
Պեղում- փորում, բրում. հիմերու -, քանդում:
Պիստակ- փստուղ, պիստակենիի պտուղ:
Պիստակենի- փստղենի, պիստակի ծառ:
Պղակունդ- ծաղ, հաստեայ, կականդակ:
Պղպեղ- տաքդեղ. կարմիր -, դարապղպեղ, սնգուրուեղ:

Պճեղ- (ոտքի՝) կոճ, ճան. (սխտորի՝) մաս. (ընկուզի միջուկի՝) քառորդ մաս:
Պնակիտ- հերձաքարէ տախտակ (վրան գրելու՝ գծելու):
Պնդոց- գործելի ատաղձը սեղմելու գործիք հիւսի՝ կահագործի:
Պոլոճիկ- երիկամունք, իլիկամ, մէզը զատող երկու մեծ գեղձեր:
Պոր- կարապ, ձկնաքաղ, ջրային մեշ թռչուն:
Պորտ- որովայնի կեդրոն. սերունդ, ցեղ. ճիտ:
Պուկ- կոկորդ, որկոր, ստուգն:
Պտղի- կնձնի, թեղի, ճշդարենի, կարծր փայտով ծառ:
Պրակ- թերթ. տասնվեց էջով տետր:
Ջահընկալ- մոմակալ (դպիր):
Ջայլամ- իշտրմուղ, մեծագոյն թռչուն:
Ջերմ- տաքութիւն, տենդ. դող:
Ջերմիկ- թրմուս, եգիպտոլոռ, գերմաստ, մանր բակլայ:
Ջերմութիւն- տաք, տաքութիւն, տապ, տօթ, գոլ, շոգ. տենդ:
Ջերմուկ- հանքային տաք ջուրեր, բաղնիք:
Ջնարակ- խէժ, կարմրախէժ. փայլ, շպար, կեղծիք:
Ջոլիր- խումբ, բազմութիւն (թշնամիներու՝ անասուններու):
Ջոկ- խումբ գունդ. դաս, մաս, բաժանում:
Ջոկատ- գումարտակ, զօրագունդ, զօրախումբ:
Ջութակահար- ջութակ ածող:
Ջրածին- կզային մարմին՝ որ բորբոքելով ջուրի կը փոխարկուի:
Ջրաճճիք-մանրադիտական ջրաճճիներ:
Ջրամբար- ջրանոց, ջրատուն, կիստեռն:
Ջրաներկ- ջուրի մէջ լուծուած ներկերով նկարչութիւն եւ նկար:
Ջրանցք- ջրադարձ. նեղուց:
Ջրանք- ջրափոշտութիւն, ջրգողութիւն փոշտի:
Ջրառույտ- ջուրի առույտ, լուսնածաղիկ:
Ջրհան- ջուր քաշելու գործիք:
Ջրհանկիր- ջրհան կրող, հրշէջ:
Ջրմուղ- խողովակ, ագուգայ, փող(րակ):

Ջրփող- խողովակ (տանիքի):
Ջրօձ- ջուրի օձ. եօթնագլուխ հիդրա (առասպելական):
Ռազմագիտական, ա, մարտագիտական:
Ռազմամթերք- պիտոյք՝ հանդերձանք պատերազմի (պարէն՝ զէնք հագուստ):
Ռատան- հնդիկ եղեգնացուպ (աթոռներ շինելու):
Ռմբակոծութիւն- ռմբահարութիւն, գնդակոծութիւն:
Ռմբաձիգ- ռումբ նետող զինուոր:
Ռնգախօս- քթին մեջէն խօսող:
Ռնգեղջիւր- քիթին վրայ եղջիւրով տգեղ կենդանի:
Ռոճիկ- օրապահիկ. թոշակ. ամսական. տարեկան -, անոն:
Ռումբ- պայթուցիկ գունդ. փոքր -, նռնակ, ռմբակ:
Ռուփ- մաթ, եփած քաղցու խաղողի հոյզէն:
Սագախոտ- սուեղ (բանջարազգի):
Սաթնուկ- սպունգ, ամպ, ծովային կենդանաբոյս:
Սակարան- ժողովատեղի՝ ուր վաճառականներ, սեղանաւորներ եւ միջնորդներ կը հաւաքուին առուծախի համար:
Սակարկել- գին կտրել:
Սակացոյց- գիներու եւ վարձքերու պաշտօնական ցուցակ:
Սակուր (սակր)- երկսայրի տապար:
Սակրաւոր- տապարաւոր զինուոր:
Սաղարթ- ծառի մը ամբողջ տերեւները:
Սամոյր- փնդուրայ, ընտիր մուշտակով կզաքիս:
Սատափ- զաղտակրային խեցի՝ զարդագործութեան կիրարկելի:
Սարահարթ- լեռնադաշտ, հարթ, բարձրաւանդակ:
Սարատակ- գիշատիչ թռչուն շահէնի նման:
Սարատան- խեցգետին. այտուցաւոր ախտ, խոլխեցգետի, խլիրդ:
Սարդիոն- ակատի տեսակ ազնիւ քար:
Սարկաւագ- եկեղեցական պաշտօնեայ՝ քահանայի ստորադաս:

Սաւառնակ- օդասլաց դեկաւոր կազմած:
Սաւառնորդ- օդաչու, օդագնաց, օդանաւորդ:
Սեղմակ- սեղմիրան, չփակ, լանջապան (կանանց):
Սեղմիրան- (հիւսնի՝) պնդոց, պնդակ. (դարբինի՝ ոսկերիչի՝) մամլակ:
Սեպագիր-բեւեռագիր, հին ազգերու գրչութիւն:
Սեռ- ազգ, ցեղ, զարմ, տոհմ. ընտանիք. (արուեստի՝) ձեւ, եղանակ. (գրական՝) ճիւղ. իգական -, կին:
Սերական- ծննդական (գործարաններ):
Սերկեւլի- սերկեւիլի ծառ:
Սեփականատէր- տէր, կալուածատէր,տանտէր:
Սեփականութիւն- ինչք, գոյք, ստացուածք, կալուածք. տիրութիւն:
Սինոդ- եկեղեցականներու բարձր ժողով:
Սիրերգ- իրոյ երգ. - ակ,  սէր երգող:
Սիւնազաւիթ- շուրջանակի սիւնազարդ գաւիթ:
Սիւնագլուխ- խոյակ, ախաւեղագէս:
Սլականջ- ձկնականջ, խարուկ (խեցեմորթ):
Սխտորգուշ- փայտեղէն անկան սխտոր ճզմելու:
Սկաւառակ- պնակ, ափսէ:
Սկզբնագիր- բնագիր, նախագիր, բունը. Տ. սկզբնատառ:
Սկզբնատառ- առաջին տառ անուան կամ յորջորջանքի:
Սղագիր- արագագիր, համառօտագիր:
Սղագրութիւն- կրճատուած նշանագիրներով համառօտագրութիւն:
Սղոցի- մշտադալար կաղնի:
Սոխարմատ- (ծաղիկի՝) սոխ, կոճղէզ, խլինդ:
Սողսողիկ- խլէզ, մողէզ, կիսընտանի սողուն:
Սուզանաւ- ընդծովեայ;
Սուղ- (վանկ, ինչիւն՝) կարճ, աղօտ:
Սուսերամարտ- սուրով կռուելու մարզիկ եւ մարզանք:
Սուսերամարտութիւն- զինախաղութիւն սուրով:
Սուտակ-կայծ, կարմիր յակինթ, պատուական քար:

Սպիտակդեղ- ճերմակ ներկ, բնածխատ կապարի:
Սռնապան- հեսկ, սակ, կաճուկ, սրունքի պահպանակ:
Ստացագիր- ընկալագիր, անդորրագիր, ընդունագիր:
Ստացուածք- գոյք, ինչք. կալուածք, հողեր, ագարակ. սեփականութիւն:
Ստեղնաշար- ստեղնարան, դաշնակի մատներ:
Ստորագրութիւն- դրոշմ. նկարագրութիւն:
Ստորադասական- պայմանական՝ թէական (եղանակ):
Ստորոգելի- վերադիր. –ք, յատկութիւն. հանգամանք:
Ստուգաբանական- բառագննական, արմատական:
Ստուգնաբերան- ըմբան, կոկորդի վերնամաս:
Ստուերատուն- լուանկարիչի մութ սենեակ:
Սրափուշ- քսուկ, սպիտակ եւ հոտաւէտ ծաղիկներով փշենի:
Սրբագրել-  ուղղել, շտկել. բարւոքել:
Սրբատաշ- նուիրական շենքէրու համար տաշուած (քարեր):
Սփիւռք- ցրուածութիւն, պնդխտութիւն. բոլորք:
Սքեմ- կրօնաւորի զգեստ:
Սօսի- լայնտերեւ, գեղեցիկ տերեւներով բարձր ծառ:
Վազերաձի- շերտաւոր մորթով ձիատեսակ կենդանի:
Վահան- ասպար:
Վահանակ- մետաղեայ փիւղ, փողիկ, զանակ (զգեստի զարդ):
Վաղամեռուկ- հոտաւէտ կնիւն:
Վաղենուկ- դեղնուկ, ոսկեծաղիկ:
Վաճառականիշ- ապրամքի վրայ նշան՝ զայն շինողին կողմէ:
Վանակն- ակնվանի, բիւրեղ, սառնատեսակ ապակի:
Վանահայր- մեծաւոր. աբբայ, աբբահայր:
Վանկ- հեգ, հնչում, սիւղոբայ փաղառութիւն:
Վաշխառութիւն- չարաշահութիւն, զեղծարարութիւն:
Վարազահաւ- կունտուռ, ամենամեծ յափշտակիչ թռչուն
՝անգղի տեսակ:
Վարաւանդ- ձիու կազմած:
Վարաւանդասպաս- ձիապան:
Վարդախտ- վարդածոց, հարսանիթ, քուռթէշ:

Վարդապետութիւն- կղերանոց, ընծայարան, դպրեվանք:
Վարդարան- աղօթհամրիչ:
Վարժապետանոց- ուսուցիչներ պատրաստելու վարժարան:
Վարժութիւն- կրկնութիւն, մարզանք, հրահանգ. սովորութիւն:
Վարժուհի- ուսուցչուհի, դաստիարակչուհի:
Վարիչ- ուղղիչ, առաջնորդ. տեսուչ. գլխաւոր, գլուխ:
Վարձակալ- հողերու -, հողվարձ. տան -, վարձուոր:
Վարուժան- արու թռչուն որսական:
Վարչութիւն-տեսչութիւն, տնօրէնութիւն. վարչագիտութիւն. մատակարարութիւն, խնամակալութիւն. վարչաձեւ, կառավարութիւն, ղեկ. վարիչ մարմին. Քաղաքական Ժողով (Հայոց):
Վարսայարդար- վարսավիրայ, սափրիչ:
Վարսնակ- սիզատեսակ բոյս՝ որուն թելերն չուան եւ փսիաթ կը շինեն:
Վաւերագիր- վաւերաթուղթ, փաստաթուղթ, գրաւոր հաւաստիք:
Վաւերացում- հաստատում, օրինաւորում:
Վեհարան-կաթողիկոսարան:
Վեհափառ- մեծափառ:
Վերադիր- յաւելուած. ածական, մակդիր, տիտղոս:
Վերակացութիւն- վերատեսչութիւն, մատակարարութիւն. տնօրէնութիւն. խնամակալութիւն:
Վերակնունք- վերամկրտութիւն, կրկնամկրտութիւն:
Վերափոխում- վերացում (Ս.Կոյսին):
Վերլուծում- տարբաղադրում (ամբողջը իր մասերուն). (տրամաբանօրէն՝) երթ արդիւնքէն պատճառին:
Վերնագիր- խորագիր, տիտղոս, մակագիր:
Վերջաբան- վերջաբանութիւն. եզրակացութիւն:
Վերջնագիր- դիւանագիտական վերջին՝ վճռական գիր:
Վիճակագրութիւն- դասաւորում ու թուարկում դէպքերու՝ արտադրութիւններու եւ այլն:
Վիմագրութիւն- քարի վրայ փորագրութիւն՝ տիպ:
Վիպասան- վիպագիր, հեղինակ վէպերու:

Վիպասանութիւն- վէպ. համառօտ -, նորավէպ, պատմվածք:
Վկայական-վկայագիր. հաստատագիր. (դեսպանի՝)
ընծայագիր:
Վկայարան- մատուռ՝ մարտիրոսներու յիշատակին:
Վճարագիր- իսկոյն վճարելի թուղթ մը:
Վճռաբեկ- վճռաջինջ (ատեան):
Վճռագիր- վճիռ. դատավճիռ:
Վոհմակ- ջոլիր, խումբ (գազաններու՝ չարագործներու):
Վտաւակ- կոճկէն, ներքնակ, ներքնազգեստ. կարճ շապիկ
ժամի:
Վրիպակ- սխալ (ուղղագրական՝ տպագրակա):
Տաբատակալ- ձգափոկ, ոռնոցակալ. մէջքի -, գօտի:
Տախտակամած- (սենեակի՝) գետին. տախտակյատակ.
(նաւու՝) կամրրջակ, վերնայարկ. տանիքի՝ ցիւ:
Տախտակորմ- տառապայ, միջնորմ (տախտակէ):
Տախտաւանդ- նուրբ տախտակի շերտ, երիզ (կոտրած անդամ
մը կապելու):
Տակառաչափ- տակառակշիռ, հազար քիլոյ:
Տակռիք- արմատի թելեր, մազմզուկներ:
Տաղաչափութիւն- տաղասացութիւն, արուեստ քերթողութեան:
Տաղաւար- տնակ, հիւղ, խուղ, խրճիթ, վար. խորան
(վկայութեան). փայտակերտ խանութ. (պարտէզի մէջ՝) պորմ,
բերկրանոց:
Տաճար- աղօթարան, եկեղեցի. ժողովարան. խորան. մեհեան:
Տամկանկար- կրախառն ջուրով որմանկար:
Տապան- դամբան, դամբարան, շիրիմ, գերեզման. (Նոյի՝) նաւ:
Տապանակ- սնտուկ, արկղ. խորան վկայութեան:
Տապասկ- օձացաւ, մորթային հիւանդութիւն:
Տապարաւոր-սակրաւոր, ռահվիրայ (բանակի):
Տառ- գիր նշանագիր. բառական իմաստ:
Տառադարձութիւն- եւրոպական տառերը իրենց համազօր հայ
տառերով փոխանակելը:
Տատասկ- փուշ. (ռազմական՝) փշաթել:

Տարազագործութիւն- կտաւագործութիւն, ոստայնագործութիւն:
Տարածականութիւն- խաւալականութիւն. (մետաղի՝) կռանելիութիւն:
Տարանկիւն- շեղանկիւն, երկու բութ եւ երկու սուր անկիւններով ձեւ:
Տարբաղադրել- լուծել, բաժնել (ամբողջը իր մասերուն):
Տարեգիրք- տարեգրութիւն, ժամանակագրութիւն:
Տարերք- սկզբունք. բնութեան ուժեր:
Տարրաբան- տարրագէտ, տարրալոյծ, քիմիագէտ:
Տարրաբանութիւն- տարրագիտութիւն, քիմիագիտութիւն:
Տեառնագրել- խաչակնքել, խաչ հանել:
Տեառնընդառաջ- Տիրամօր սրբութեան տօն:
Տեղակալ- տեղապահ. ենթասպայ. փոխանորդ:
Տեղապահ- նախորդի մը տեղը պահող:
Տեղատուութիւն- նուազում, յետադարձք (ծովու):
Տեղեկագիր- հաղորդագիր, հաղորդագրութիւն. յուշագիր:
Տեսաբանութիւն- տեսագիտութիւն:
Տեսլական- տեսլապաշտ, գաղափարական, գաղափարապաշտ. մտատիպար:
Տեսչուհի- տնօրէնուհի, վարչուհի:
Տէրունական- աստուածային, սուրբ:
Տիգոսկր- բազկոսկր, խալիկ, բազուկի վերի մասի ոսկոր:
Տիեզերք- աշխարհք, համագոյք. արարչութիւն:
Տիրամայր
Տիրացու- դպիր, ժամի երգիչ:
Տկարամտութիւն- միամտութիւն, պարզամտութիւն, պակասամտութիւն. տխմարութիւն, ապուշութիւն:
Տնկաբանութիւն- տնկագիտութիւն, բուսաբանութիւն:
Տնկարան- տորրանոց, բուսարան մատաղատունկ ծառերու:
Տնկարկութիւն- տնկագործութիւն:
Տնտեսագէտ- տնտեսական գիտութեան հմուտ:
Տնտեսութիւն- մատակարարութիւն, վարչութիւն:

Տնօրէնութիւն- տեսչութիւն, վարչութիւն:
Տնօրինութիւն- կարգադրութիւն. մատակարարութիւն:
Տոհմականք- ընտիր բերք, հունձք, արդիւն:
Տողադարձ- գրադարձ, տրոհում (բառերու):
Տոմար- գիրք, հաշուեգիրք. օրացոյց. տարեցոյ:
Տոմարակալ- հաշուակալ, հաշուապահ:
Տպազիոն- դեղնագոյն թանկարժեք քար:
Տպածոյ- նկարէն կտաւ:
Տրամագիծ- երկակտուր, տրամաչափ:
Տրամալար- ուղղաձիգ լար (որմադիրի):
Տրամախոհութիւն- պատճառաբանութիւն, դատողութիւն:
Տրամախօսութիւն- զրուցատրութիւն, խօսակցութիւն:
Տրամանկիւն- անկիւնագիծ, անկիւնէն անկիւն քաշուած գիծ:
